



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

### **Usage guidelines**


Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

### **About Google Book Search**

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>



ԳՐԱԴԱՐԱՆ


ԳՐԻԳՈՐ ԱԳԱՅԵԱՆՆԻ

Կարգաթիվ

123

ԳՐԱԴԻՐՈՒՄ  
ԳՐԻԳՐ ԱՊՈՋԵԱՆՆԻ  
Կարգաթիվ 123/Բ

ՇԱՐ ՀԱՅ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՆՑ





# ՀԱՅ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՆՑ



ԳՐԱԴԱՐԱՆ

ԳՐԻԳՐ ԱՊԱՋԵԱՆԻ

Կարգաթիվ..... 123/բ .....

ԳՐԵՑ

ԱՐՐԱՀԱՄ Յ. ԱՅՎԱԶԵԱՆ




Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ.ՊԱՂՏԱՏԼԵԱՆ

Սուլթան Համամ հաստէսի, թիւ 14.

1893





**ԳԱՐԵԳԻՆ Ա. Յ. ԱՅՎԱԶԵԱՆ**

*Ծնւալ յաճին 1871, Օգոստոս 3*

**ԵՒ ԶԳԻՐ ԾՆՈՂՍ ՈՐՐԱՅՈՒՑ**

*՚ի 10 Յուլիսի 1873*



Որրա՞նդ է այս թէ սապան՝

Ուր նընջես,


Այլ հոն չե՛ս,

Հոգեակդ աղու՝ ԳԱՐԵԳԻՆ.

Կարօսակեզ գիրկս ՚ի զո՛ւր ասս խնդրէ զՔեզ,

Գու ժրպսիս անդ ՚ի յերկին:





# ՄԵԾ-ՇԻՒՆՔԵԱՐՊԷՅԷՆՏԵԱՆ ՔԱՅԱՆԱՅՆ

ՀԱՅՐ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԻՍՎ ՔԱՅԱՆԱՅԻ ՇԻՒՆՔԵԱՐՊԷՅԷՆՏԵԱՆ



Օտար զարդանուան կիրառութիւնը Հայ գրողաց մէջ կարծուածին չափ նորութիւն մը չէ՛ :

Հեռու, ժամանակաց մէջ տեսնուած եւ գտնուած են ամէն դասակարգի վերաբերող ազգային հեղինակներ կամ ուղղներ, որք այլազան ծածկանուանց ներքեւ քօղարկեալ իրենց ազգային կնտնտոցը նոյնանման ոճով տաճկաբարբառ թրթռացուցած են :

Ասոնցմէ ծանուցեալներն կը դասակարգեմք :

Նիւորթի . Նալեան Յակոբ պատրիարք Կ. Պոլսոյ (1)  
Թաւրի . Յովհաննէս Եպիսկոպոս :

Իււզի . Պէրպէրեան Յակոբ Վարդապետ (2) :

Բէհլի . Եղեսացի Տէր Յակոբ Քահանայ :

Զիւլի . Տէր Անդրէաս Քահանայ Մաղնիսացի Ի

Գրուած :

(1) Հայ-Աշուղներու ամփոփ զիրք մը արդէն պատրաստած է Գեորգ Տրդատ Վարդապետ Պալեան :

յօգելոյս եւ վաղավախճան իգնատիս Պատրիարքի հոգի ննդն է, որ Պալատու Եկեղեցւոյ երեսն Քարոզիչն է : յէրեան Վարդապետի դամբանականն արտասանած է Ս. Երուզուլեան Եկեղեցւոյն մէջ՝ քաջաբարոզեալ արեան Կարապետ Վարդապետ :

Տէրեայի . Գրիգոր Վարդապետ Սամուէլեան , Առաջնորդ Զմիւռնիոյ :

Սուրբ . Մելքիսէդեկ Պատրիարք Կ . Պոլսոյ :

Կելարեւելի . Տ . Պետրոս Քահանայ Կիւմիւշիանէցի :

Ալեանի . Իւսկիւտարցի Յարութիւն :

Սաֆի . Եւզոկիացի Հաճի Սերովբէ :

Պիտաբի . Միհրան Արապաճեան :

Տէհրի . Գաղատացի Յովհաննէս :

Շէհիլի . Ռեթէոս էֆ . Գրիգորեան՝ Տաճկաբան դասատու :

Աեանի . Սերաստացի աչազուրկ Թադէոս Պատուելի :

Նաֆ . Պոլսեցի Յակոբ :

Իսկ մեր խորագրեալն է՝ Սէլեի , որ Պալատցի Տ . Յովհաննէս Քահանայ Հիւնքեարպէյէնտեանն է<sup>(1)</sup> , այսինքն , հայրն արդի Արժ . Տ . Յովհաննէս Աւագ-Քահանայի Հիւնքեարպէյէնտեան :

(1) Տէր-Յովհաննէս Քահանայն՝ Հիւնքեարպէյէնտեան մականունը հետեւեալ պարագային մէջ ստացած է .

Բարեյիշատակ Սուլթան-Մահմուտ Բ . Նախկին Մեծ-Եպարքոս Ֆուտա Փաշայի հայր՝ Քէչէճի-զասէ Իզզէթ Մուլլայէ եւ Պէզճեան Յարութիւն Ամիրայէն նպատասաւոր տեղեկութիւններ առնելով վերոյգրեալ Քահանայի տաճկաբանութեան եւ գրական կարողութեան մասին , հաւանած եւ իւր Կայսերական մեծ շնորհաց արժանացուցած է երկիցս , յորմէ հետէ ընդունած է Հիւնքեարպէյէնտեան մականունը , որ իր շարունակուի նորին պայագասաց մէջ :

Մեծ-Հիւնքեարպէյէնտեան՝ լինելով որդի Ջրկիր-Պաւիթին՝ որ ընթիկ Բարերդցի է , նախ ի Տրապիզոն գալով՝ առաջին անգամ կ'ամուսնանայ , եւ իւր կինը վախճանելով անդ՝ Պոլիս կուգայ : Եւ աստ վերոտին ամուսնանալով ունեցած է Տէր-Յովհաննէսն եւ միւս զաւակները , որք իրենց հօրը արհեստին անուամբնախկին մականունն Սառայեան յորջորջուած է :

Ջրկիր-Պաւիթ կնքած է իւր մահկանացուն 1794 Սեպտեմբեր 10ին , ինչպէս Մեծ-Հիւնքեարպէյէնտեանի մայր՝ Տիրուհի տիկին վախճանած է 1803 Ապրիլ 14ին :

Պաւիթ՝ Քարակէօմրիւկի մօտերը՝ Չարչամպայի կողմերը ընակութիւն հաստատած է եղեր , ուր երբեմն հաստատած էին Կ. Պոլսոյ Հայ գաղթականութեան նահապետք : Իւր ընկարանն անդ դեռ կը մնայ՝ կ'ըսուի՝ կանգուն :

Հիւնքեարպէյէնտեանի աշխարհականութեան անունն եղած է Սեբովբէ , որ իւր ցեղին մէջ ժառանգական անուն դարձած է գողցես շուրջ երկու դարեր , ինչպէս Յովհաննէս՝ քահանայական անունն եկեղեցական նշանաւոր յաջորդութիւն մը՝ այս նահապետական գերդաստանին մէջ :

Սերովբէ Սաքայեանի (ըուն Հիւնքեարպէյէնտեան) հօրեղբայրն ալ՝ Տէր-Յովհաննէս եղած է , որոյ մեծատաղանդ որդին է՝ արժանայիշատակ եւ յոգնարդին Գէորգ-Պպիր Պալատեցին :

Սերովբէ ի պատանեկութեան , վերջին ծայր մտացի եւ ընդունակ գոլով , դիւրաւ ուսած է Հայերէնն եւ Տաճկերէնն , աշակերտելով նախ մեծանուն հօրեղբորորդոյն՝ Գէորգ-Պպիրին , եւ ապա

Թուրքերէնն՝ նշանաւոր Թուրք Հօճայի մը քով կատարելագործելով :

Սերովբիկ ութ տարեկան էր, երբ իւր հայրը՝ Զրկիր-Դաւիթ՝ ատաղձավաճառի մը քով աշակերտութեան տուաւ զնա, ի Պալատ : Վարպետն էր Յակոբ Պատրիարքին հայրը, Սիւտծի-Օղլու Սերովբէ :

Վարպետն եւ աշակերտն համանուն լինելով, առաջինը կ'ըսուի եղեր՝ Պէօյիւք-Սերովբէ, երկրորդը՝ Քիւչիւք-Սերովբէ :

Փոքրիկն Սերովբէ որչափ ալ արհեստի տրուած էր, բայց բնաւ չէր կասած իւր նախասիրած Տաճկերէն գրագիտութիան մէջ հսկայաքայլ յառաջանալու :

Սերովբէ խիստ մտերմութիւն ունենալով հոչակաւոր բանաստեղծ Քէչէճիգասէ Իզգէթ-Մոլլայի հետ — որ իւր ժամանակին ամենէն համբաւաւոր եւ նշանաւոր Թուրք բանաստեղծներէն մին նկատուած է — շատ կ'օգտուի նորա ներկուռ տաճկագիտութենէն :

Չմոռնանք յիշելու, Սերովբիկ Սաքայեան, կամ լաւ եւս բուն Հիւնքեարպէյէնտեան, թէ՛ աշխարհականութեան եւ թէ՛ քահանայական չրջանին մէջ բազմաթիւ Տաճկերէն Բարեկիներ եւ նկարագիրներ յօրինած է զանազան երեւելի անձանց նկատմամբ, ընդ որս գրած է Իզգէթ-Մոլլային Բարեկիը, Վարպետ-Ամիրայինը (Պէղճեան), Տիւզեան գերդաստանի գլխաւորներունը :

Տէր-Յովհաննէս, նաեւ Սուլթան Մահմուտի Տաճկերէն Բարեկիներ գրած, եւ հաւնեցուցած ձեռննաս Իւլթաներու : Այս ամէնուն մեծ մասն ցարդ

կը մնայ Հիւնքեարպէյէնտեանի թողներէն՝ Գամիկ  
էֆէնտիին , եւ մէկ մասն ալ՝ ուրիշ թողանը՝ Բար-  
թիկ էֆէնտի Հիւնքեարպէյէնտեանի քով : Ասոնց-  
մէ մի հատն իրեւ նմոյշ կը դնեմք աստ , որ ուղ-  
ղեալ է առ Մեծն Սուլթան Մահմուտ :

1. Էյ շէհրիարի խօշ էտա ,  
Վէ մէնպաի լութֆ ու աթա ,  
էօմրիւն ֆիզուն իթսին խիւտա .

Նօփօրմի. Շատ օլտու ալէմ սէր թարա ,  
Շահըմ սէֆա կէլտին սէֆա :

2. Էյ սայէի բէրվէրտիկեար ,  
Իթսուն հէման օլ կիրտիկեար ,  
Էյեամը էօմրիւն սատ հէզար :
3. Հազգա սիւլէյմանը զէման ,  
Ձըլը խիւտա Մահմադ Խան ,  
Հէմ Բատիշան հէմ գահրաման :
4. Տէվլէթտէ սատըզ իսմիմիզ ,  
Նսոզ օլմուշ խալգա բէսմիմիզ ,  
Բուն պուլտու միւրտէ ճիսմիմիզ :
5. Կէլ էյ սէխավէթ մատէնի ,  
Կէօրտիւքտէ շատ օլտուզ սէնի ,  
Միլլէթտէ պիզլէր էրմէնի :
6. Չաքէր Սէլեի պէնտէնիզ  
Սուպն ու մէսա նալէնտէնիզ  
Տայիմ տուա խանէնտէնիզ :

Այս առթիւ աւելորդ չեմք համարիր յայտնել թէ՛ Աւստրիոյ Ֆէրտինանտ Առաջոյն Կայսրուհոյն համար մայրաքաղաքէս ղրկուած է ծանրագին եւ ուկեհոռ արեւելեան շրջագգեստ մը, որուն երկայնատուտն քղանցից եզերքը Տաճկերէն սրամիտ պէյլիներ հիւսած է Սերոբիկ: Այդ պատմական շրջագգեստ մինչեւ ցարդ պահուած է մեծ խնամօք Վիէննայի կայսերական հնութեանց թանգարանին մէջ, իբրեւ թանկագին Արեւելեան ձեռակերտ ճոխ հրաշակերտ մը:

Պղտիկ Սերովբէն, զամ քան զգամ փորձով իւր գործունէութիւնն եւ յառաջադիմութիւնը ցոյց կ'ուտար ատաղձավաճառութեան արհեստին մէջ ի Պալատ, վերոյիշեալ խանութն՝ որ սահմանուած էր Ազգին ապագայ գրական ակումբը կազմելու մի օր:

Խնայողութիւն սիրող էր Սերովբէ պատանին, եւ շարաթականները չէր ուտեր, այլ կուտար վարպետին քով ի պահ: Այսպէս՝ բաւականին դրամ աւելցուցած էր, օր մը դրամագլուխ շինելու համար: Նոյն փափաքն ունէր նաեւ վարպետը. կ'ուզէր որ իւր շնորհիւ մարդ լինի Սերովբէն:

Սերովբիկի հայրը՝ Զրկիր-Իաւիթ 200 ղուրուշի պարտք մը կ'ունենայ, զոր մինչեւ այն ատեն ծածկած էր տղէն: Օր մը տուն վերադարձած ատեն կը ձերբակալուի եւ բանտը կը դրուի: Իաւիթ բանտէն լուր կը յղէ զաւկին որ զինքը գայ ազատէ, միանգամայն յայտնելով որ 200 ղուրուշ պարտք ունե-

նայուն պատճառաւ բանտարկուած է : Սոյն պարտքը գոյացուցած էր իւր ազջիկը , այսինքն Սերովբիկի քոյրը , ամուսնացուցած ժամանակ :

Սերովբիկ՝ վարպետին կը յայտնէ հօրը գլխուն եկած փորձանքը , եւ կը խնդրէ որ քովը աւելցուցած դրամէն երկու հարիւր զուրուշ մը վճարէ :

Վարպետ-Սերովբէն մեծ դժկամակութիւն ցոյց կուտայ առ այս , առարկելով թէ՛ ծնողքները ընդհանրապէս իրենց զաւակներուն «-կ-կն եղած են , ծըծել եւ քամել կը սիրեն միշտ զաւակացը դրամը :

Սերովբիկ սաստիկ կ'զգածուի՝ հօրը դէմ եղած այդպիսի ծանր ակնարկութեան մը համար , եւ «Վայ , դուք Պապայիս բան կ'ըսէք կոր» մրթմրթալով , կ'առնէ կը քալէ խանութէն :

Վարպետը կ'սթափուի , կ'ուզէ մտացի աշակերտին հետ ինքնին իրաւախոհ լինիլ եւ հաշտուիլ , բայց անհնար կը լինի : Օրեր կանցնին , բայց այս հաշտութիւնը գոյացունելու համար մեր ազգէն միջնորդութիւն ընող ազդեցիկ անձ մը չգտնուիր :

Խանութին յաճախորդները միշտ կուզան՝ Սերովբիկը կը հարցունեն , Սերովբիկը կը փնտռեն : Ասոնցմէ մէկը , ազնիւ Տաճիկ մը , Մովային Նախարար Թահիր փաշային աները Շէրիտօճի-Լաթիֆ Աղան , կ'իմանայ գործը եւ կը խոստանայ հաշտութիւն ընել տալ : Կ'երթայ կը գտնէ զՍերովբիկ եւ կը համոզէ որ հաշտուի վարպետին հետ . կ'առնէ խանութը կը տանի , ուր աշկերտը վարպետին ձեռքը համբուրելով , եւ վարպետն՝ աշկերտին ճակատը , հաշտութիւնը անդէն կը գոյանայ :

Սիւտճի-Օլլուն՝ Սերովբիկին սիրան առնելու



համար կ'ըսէ. «Օղբում, ես ինչ որ ըսի, հօրդ հօգու-  
րէի՛ ընելու մտօք չըսի. վճարելու համար ցոյց տը-  
ուած դժկամակութիւնս՝ նոյն իսկ քու ապագայ  
բարօրութեանդ համար էր :»

\*  
\*  
\*

Ինչ եւ է, Սաքայեան վերահաստատուելով գոր-  
ծին մէջ՝ ոգեւորութեամբ կ'աշխատի, որով այնչափ  
յառաջ կ'երթայ՝ մասնաւոր պաշտպանութեամբ յիշ-  
եալ Լաթիֆ Աղային, որ Սերովբիկ՝ վարպետին թէ՛  
տունը եւ թէ՛ խանութը՝ բոլոր պարունակութեամբը  
կը գնէ գիզած դրամներովն եւ մասնաւոր փոխա-  
տուութիւններով :

Ինգնօգնութեան հրաշքն հետզհետէ ընդարձակ-  
ելով, Սերովբիկ օրին մէկը բոլոր պարտքերը կը վը-  
ճարէ, եւ յառաջանալով միշտ՝ ատաղձագործի խա-  
նութն անբաւական կը լինի ունեցած ապրանքները  
զետեղելու, եւ կ'ստիպուի՝ ուրիշ մթերանոց ալ  
վարձելու : Իւր գործակատարն էր Սամաթիոյ Ս.  
Գէորգ եկեղեցոյ Շահպազեան Տ. Յովհաննէսի հայ-  
րը՝ Յարութիւն :

Յայտնի է որ, հին ատեն ատաղձի նաւերն երբ  
ապրանք բերէին, դրամն կանխիկ չէին ստանար.  
այլ յառաջիկայ աշնան կամ հետեւեալ տարին կ'ու-  
գային գանձելու :

Սերովբիկի գործերն այն ինչ սոյն աստիճան  
արագ յաջողութեանց մէջ կ'ընթանային, յանկարծ  
Վերացման Ս. Խաչի տօնի մը գիշեր, Հրէից Գաթիչ  
Պաբոսի առթիւ՝ համաճարակ մեծ հրդեհ կը պա-

տահի , եւ այրացաւեր կը լինին գրեթէ համայն Քի-  
շեօթ-Մահալէ-ին , Տէնէր , Պալատ եւ շրջակայ թա-  
ղերն , որոց մէջ նաեւ Սերովբիկի նոր գնած տունը ,  
խանութը եւ ամբողջ ապրանքներն :

Սերովբիկ՝ այն ինչ յուսահատ՝ տըխուր եւ մե-  
լամաղձոտ կը մտածէր , թէ այսուհետեւ ո՞ր մէկը  
պիտի կրնար վերաշինել , խանութը թէ տունը , եւ  
թէ ո՞վ պիտի հատուցանէր ատաղձի նաւապետնե-  
րուն ապառիկներն , այդ անմխիթար եւ յուսահատ  
վայրկեաններուն մէջ կը փութայ իրեն ներկայանալ  
բարեհացակամն Լաթիֆ Աղայն , եւ իբրեւ երկրաւոր  
նախախնամութիւն՝ կը յուսադրէ զՍերովբիկ քնաւ  
չկասիլ գործելէ , ըսելով թէ , «Նկուր , դիտէ՛ , տըղաս ,  
սա՛ խանութիդ տեղէն» եւ կը ցուցնէ հրկիզելոց  
համայնացոյց տեսարանը , եւ կը յաւելու .

«Նայէ՛ , ո՞րչափ տուներ , խանութներ , շէնքեր  
միահաղոյն այրած են , գիտցի՛ր որ ասոնց ամէնուն  
չինութեանը համար ալ +երէտե՛ պէտք է , +երէտե՛ .  
մի՛ կենար պարապ , մի՛ տնտնար , ո՞ն անդր : Մաք-  
րէ՛ աս տեղուանքը , շինէ՛ խանութդ . ես ահաւասիկ  
կեցած եմ . ուզէ՛ , որչափ կ'ուզես դրամ , ահա պի-  
տի դիմանամ քեզի» , կ'ըսէ :

Եւ իրօք ալ , Լաթիֆ Աղայն արտակարգ վեհանձ-  
նութեամբ եւ ազնիւ մարդասիրութեամբ պաշտպան  
կանգնելով անարծաթ եւ տրկող վիճակի ենթարկ-  
եալ Սերովբիկին , եւ բաւական կլորիկ դրամագլուխ  
դնելով ասոր ծոցիկն , շահակից կ'ըլլայ հետը , եւ  
նոյն օրէն մեծ յաջողութեան թուական մը կ'սկսի ,  
որով հին վիճակէն աւելի գերազանց դիրք մը կ'ըս-  
տանայ խանութը , եւ շնորհիւ Լաթիֆ Աղային՝ մին-

չեւ իսկ արքունի նաւարանին պէտք եղած ատաղձները կը հայթայթեն :

Ահա՛ տոյն յաջողութեանց վրայ է , որ հին վարպետն՝ Մեծ-Սերովբէ (Պեյե-Սերօզէ) իւր զուստրը՝ Վերոնիկ կնութեան կուտայ աշակերտին՝ փոքրիկ Սերովբէին :

Սերովբի՛ դեռ 28 տարեկան հասակն նոր լրացուցած էր , երբ Յակոբ Պատրիարքի (1) քրոջը՝ Վերոնիկին (2) հետ ամուսնացաւ եւ տուն-փեսայ գնաց ի Պալատ , Թախ-Միւրէ Թաղը՝ երջանկայիշատակ Յակոբ Պատրիարքի ծննդատունը :

Սերովբիկ Սաքայեան ամուսնանալէ յետոյ , չորս մանչ եւ երկու աղջիկ զաւակ կ'ունենայ : Ի կենդանութեան թաղած է առաջին աղջիկն՝ Տիրուհին , եւ Բենիամինը՝ Գրիգորիկ , որոց համար միշտ ոգւոյ կը հանէ եղեր :

---

(1) Յակոբ Գ. Պատրիարք Սերովբեան երեք անգամ Պատրիարքութիւն ըրած է .

1839ին , մէկ տարի եւ վեց ամիս :

1848ին՝ երկուրոր անգամ , ութ տարի :

1856ին , վերջին անգամ , երկու տարի պաշտօնավարած եւ կամովին հրաժարած է .

(2) Արդարեւ Վերոնիկ անունն՝ Սէ հին եւ Սէ նոր ժամանակաց մէջ ի Հայս անսովոր անուններէն է . սակայն Պալատու Սերովբեան ազգատոհմին մէջ՝ Վերոնիկ եւ Թերեզա իգական յառուկ անուններն յաճախ մեզ գտած են . կնքահայրն Կաթողիկ եղած լինելով :

Իսկ մնացեալներն են Դաւիթ<sup>(1)</sup>, Գեղէն<sup>(2)</sup>, Քաղէոս<sup>(3)</sup> եւ Տիրուհի<sup>(4)</sup> :

Առաջին երկուքը մեռած են այժմ, ազնուասուն գաւակներ թողլով :

Առաջնակարգ Պատրիարքներէն՝ Կարապետ Եպիսկոպոսի եղբայրն Գրիգոր Վարդապետ, որ քարոզիչ էր այն ատեն Պալատու Ս. Հրեշտակապետ ե-

---

(1) Անդրանիկ որդին՝ պապուն անունովը Դաւիթ անուանակոչուած է, որ ունի չորս գաւակներ : 1. Հանգուցեալ Սողոմոն էֆէնսի, առաջնակարգ ճարտար գեղագիր, որ եւ 32 օարիններ՝ Արարքին գործոց պաշտօնատան ՊարգամանչուՍեան գրասենեկին անդամներէն էր : 2. Գամիկ էֆէնսին, որ 1870ին ի Պատրիարքարան հինգ օարի, եւ ապա՝ Ազգային Հիւանդանոցի գրասենեկին ընդհանուր գործակատարուՍեան բազմագրադ պաշտօնը կը վարէ : 3. Տիրուհի էֆէնսի, որ 1886էն յօսէտա՝ Օսմանեան Փոխ-Հիւպատոս է, եւ 4. Գ. Յովհաննէս, որ մեկուսացեալ կեանք կը վարէ :

(2) Երկրորդ որդին է Գեղէնն, որ ունի երեք գաւակներ - առաջինն՝ Բարթիկ էֆէնսի, որ 1856ին նախ Պատրիարքարան մտած է Յակոբոս Պատրիարքին օրով եւ 5 օարի անդ մնալէ յետոյ՝ հրաժարելով, Կէլկէյեան Ամիրային սենեակն ալ երկու օարիի մօտ ծառայեալ, ապա 1863ին Մայր-Եկեղեցւոյ Քաղ. Խորհրդոյն քարտուղարուՍեան պաշտօնն ըստանձնած է, միանգամայն Բ. Դրան Տպագրական ղիւանին մէջ անդամակցելով, յորմէ Մահմուտ-Նէսիմ Փաշայի եպարզոտուՍեան ատեն հրաժարած, եւ միայն Մայր-Եկեղեցւոյ Քաղ. Խորհրդոյ քարտուղարուՍեամբը զբաղած : Այժմ կը վարէ միանգամայն Ս. Երուսաղիմայ եւ Ս. Փրկչեան Հիւանդանոցի սեպական վագրժներուն ճապիտուիւնը : Երկրորդն՝ Եղբարդ էֆէնսի, որ Օսմ. կեդրոնական նամակատան մէջ Հեռագրական սենեկին պետն է : Երրորդն՝ Մարտիկ էֆէնսի, որ իբրեւ հեռագրատան պաշտօնեայ՝ ի Նիկովիդիա, ի Բերս,

կեղեցւոյն , Սաքայեան Սերովբէի Գէղէոն որդւոյն ,  
ինչպէս նաեւ Յակոբոս Պատրիարքին՝<sup>(5)</sup>, դեռ սքեմ  
չառած՝ Քերականութիւն դաս կուտայ եղեր, Պա-  
լատու դուրսը դռնուած վերոյիշեալ ատաղձի վա-  
ճառատան մէջ :

Սաքայեան Սերովբէ կը տեսնէ որ խնկոտ եւ  
թափթփած խալիպը մէկն՝ ամէն օր կը յաճախէ  
խանութը եւ խալապուէ կ'ընէ , իսկոյն ատաղձ-

---

ի Տիարպէրի , ի Գասթամունի , եւ ի վերջոյ Սոււքիւմ (Ճիս-  
սէի դիմաց , այսինքն , վերին եզրիպոս) ուր 5 շարի մնալով  
կը վաւէր իւր պաշտօնը . Բիւթպէի Սալիսէ եւ մասնաւոր  
նուէրով գնահատուեցաւ Հիճագի կուսակալ Օսման Փաշայի  
միջոցաւ , եւ Մարտիրոս Էֆէնսի երեք շարիէն աւելի է՝ որ  
Սիրքէճիի Նամակասան հեռագրասան մասնաձեւղին պեսն է :

(2) Զարդիս՝ Տէր-Յովհաննէս Աւագ-Քահանայ Հիւնքեար-  
պէլէնսեան , որ Առաքելոց Յուով զաւակներ ունի , որոց  
ուժ կենդանի են , որք են՝

Լեւոն Էֆէնսի , մասնագէտ երկրագործ եւ վերասեսուչ -  
պաշտօնեայ Կայսերական ագարակաց ի Գուրպաղը-Տէրէ :

Տօքթ. Գոպեռնիկ Էֆէնսի . առաջնակարգ ճարտար ըր-  
ժիշկ , վկայեալ Փարիզու Համալսարանէն .

Պ. Խաչիկ (ղեղագործ՝ ի Փարիզ) :

Պ. Դաւիթ (ղեղագործ՝ ի Փարիզ) :

Պ. Սերովբէ (ուսանող զղեղագործուծեան ի Փարիզ) :

Մնացեալ երեքն աղջիկ են :

(4) Տիրուհի՝ որ մամիկին անուամբն մկրտուած է , եւ որ  
այժմ այրիացեալ եւ անզաւակ է . ձմեռներն՝ Հիւնքեար-  
պէլէնսեան Հօրը քով կը մնայ , ամառուան օրերն՝ նոյն  
գերդասանի մնացեալ անդամոց քով կը բաժնէ :

(5) Պէտք է յիշել թէ՝ Յակոբոս Պատրիարքն ալ աշխարհա-  
կանութեան ասեն աստղծագործ է հղեր , ինչպէս աստղծա-  
գործ էր Երուսաղիմայ հանգուցեալ Եսայի Պատրիարքը :

ներուն մէջէն երկայն սրացեալ փայտ մը դուրս քաշելով գորիգոր Վարդապետ կը դրոշմէ եւ խանութէն դուրս կը վռնտէ, պոռալով. « Հայտէ՛ , կորի՛ր սըկէ, եթէ անգամ մ'ալ գալու լինիս, ոտքդ կը կտորեմհա՛ , վասն զի մեր տղայքը՝ դործերնուն աւարայ կ'ընես կոր) , եւ այն :

Եւ երբ Սերովբէ Սաքայեան՝ յետոյ քահանայ կը ձեռնադրուի , Գորիգոր Վարդապետ՝ միշտ սոյն տփոցն եւ վռնատուիլը կը յիշէ եւ կը յիշեցնէ եղեր Տէր Հօրը՝ Պատրիարքարանի մէջ , գլուխն երերցնելով « Կիտի սէնի չարածճի » ըսելով :

\*  
\*  
\*

Միտքս կուգայ սոյն Գորիգոր Վարդապետին մի դէպքը :

Գորիգոր Վարդապետ՝ Եզովլոսի պէս անչուք մարդ մ'է եզեր , կրնամ ըսել ճիշդ հակապատկերն հարազատին՝ Կարապետ Պատրիարքին , որ գեղեցկադէմ էր եւ փառաւոր :

Գորիգոր Վարդապետ՝ Պատրիարք եզբօրմէն կը ինդրէ , որ զինքն ի Կեսարիա Ս. Դանիէլի Վանքը յղէ : Կը համակերպի Կարապետ Պատրիարք եղբորը նախասիրական զգացմանցը , եւ այս առթիւ յանձնարարական մ'ալ կուտայ առ Ղուկաս Վարդապետ , նոյն ժամանակի Վանահայրն էր Ս. Դանիէլի Վանուց :

Վանահայր - Առաջնորդն իւր հիւրը կը մեծարէ եւ կը պատուէ , մանաւանդ երբ կը հասկնայ թէ՛ ժամանակին Պատրիարքին եղբայրն է նորեկն , կը փութացնէ փառաւոր ճաշ , կը սարքէ յատուկ սեն-

եակ, կը պատրաստէ փառաւոր անկողին, եւ կը հրամցունէ խոնջեալ ճանապարհորդ Վարդապետն, որ ընդ փոյթ հանգստանայ իւր տեղն :

Գրիգոր Վարդապետ կ'առարկէ թէ՛ եկեցէն չըսած կրնամք պառկելու երթալ :

Առ այս անայլայլութեամբ կը պատասխանէ Ղուկաս-Վանահայրն թէ՛ « Ստամպոլտա միլլէթին քիւլպասդըսընը, շարապընը քիմլէր եէյիպ իչէյօրլարսա եկեցէսինի տէ՛ վարսըն ծնլար սէօյլէսինլէր » :

\* \* \*

Պալատու եկեղեցին՝ հին ատեն, մայրաքաղաքիս ամենէն հարուստ եկեղեցին էր : Այս թաղին սընտուկը՝ միշտ պատրաստ գումար կը գտնուէր, եւ եկեղեցին ալ՝ կալուածներ ունէր : Այս պատճառաւ, դրամ ունեցողներն՝ իբրեւ ապահովագոյն տեղ մը, ի պահ կամ յաւանդ կը յանձնէին մեծագումար դրամներ՝ Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ անտուկին :

Այս թաղն՝ այն ատեններ, 33 քահանայներ եւ 5 հատ սարկաւազներ կ'ապրեցնէ եղեր, մինչդեռ այժմ 3 քահանայներ ալ չկրնար :

Հին ատեն՝ թէ՛ Գարակէօմրիւկի եւ թէ՛ Թօփգաբուի եկեղեցիներուն մատակարարութիւններն՝ Պալատու եկեղեցւոյն կը վերաբերէին : Եւ Պալատու Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ Աւագերէցն՝ միանգամայն վերոյիշեալ Ս. Յովհան Ոսկեբերանի եւ Ս. Նիկողայոսի Աւագերէցն էր :

Պալատու եկեղեցւոյ Մէ-Նէվէլին էր՝ Խօրասանձեան Յովհաննէս Ամիրայն, եւ Մէ-Նէվէլի փո-

խանորդը՝ Թէրխան-Թաղէոս Էֆէնտիի մայրենի պապը՝ Պալըխ-Բազարի զուռը ծխախոտի վաճառականութիւն ընող Մահտեսի Անդրէաս Աղայն. իսկ եկեղեցական էր՝ Քիւչիւք-Սերովբէն, որ յետոյ քահանայացաւ, եւ եղաւ Մեծ - Տէր - Յովհաննէս Քահանայ Հիւնքեարպէյէնտեան :

Պէզճեան Յարութիւն Ամիրայն՝ Մայր-Եկեղեցւոյ վերայինութեան ի նպաստ, Պալատու Եկեղեցւոյ մատուկէն 50,000 զուրուչ կ'ուզէ :

Կ'ընդունուի Ամիրայի սոյն խնդիրքը, եւ մեծ-Մի-Նեֆլէ Խորասանճեան Յովհաննէս Ամիրային հրամանաւ, եկեղեցական Քիւչիւք-Սերովբէն 50,000 զուրուչի 25 նոց Մահմաթէյէ ոսկեղրամ հանելով մատուկէն, կը տանի կը յանձնէ Մայր-Եկեղեցին :

Այս զուամարը՝ որ այսօրուան ընթացիկ հաշուով, 200,000 զուրուչէն աւելի զուամար մը կընէ անտուկոս, տակաւին չէ հաշուրուած :

Ժամանակակիցք կը պատմեն թէ՛ վերոյիշեալ զուամարն յանձնուած ատեն, Խորասանճեան Յովհաննէս Ամիրայն փափկանկատողութեամբ կը դիտէ Պէզճեան Ամիրային թէ՛ երբ Պալատու եկեղեցին վերայինուելու լինի, ո՛վ պիտի նպաստէ :

Ամիրայից Ամիրայն առ այս կը պատասխանէ թէ՛ «Այն ատենն ալ Մայր-Եկեղեցւոյ մատուկը՝ թո՛ղ նպաստէ Պալատու Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ շինութեան» եւ այլն : Սակայն Պալատու եկեղեցւոյ շինութեան ատեն՝ ոչ մի թաղային եկեղեցւոյ կողմանէ նպաստ կամ ձեռնտուութիւն եղած չէ՛ :

Չմոռնանք յիշել այս առթիւ թէ՛ Պալատու հին դպրոցին տեղը՝ որ Առաքել Ամիրայի մը տունն է



եղեր, ետքը Ազգին տուեր, եւ յետոյ դպրոցի վերածուեր է :

Պալատու այդ Ամիրայական հաստատութենէն ելած են Պատրիարքներ, երեւելի Քահանայներ եւ աշխարհական նշանաւոր անձնաւորութիւններ :

Հին դպրոցին տեղը՝ այժմ կալուածներ շինուած են՝ որ 1000 զուրուշի մօտ ամսական եկամուտ կը բերէ՝ Պալատու դպրոցին համար: Յիշեալ կալուածներուն նպատտ տուողներն՝ Պալատու դպրոցին կալուած լինելու համար բարեհաճեցան նուիրել : Վերջերս՝ խնդրոյ նիւթ եղած էին այս կալուածները : Պէ՞տք է մէկը շինելու համար, ուրիշը քանդել: Թօփ-Գափուի Եկեղեցւոյ անտուկը գոհացնելու համար, Պալատու դպրոցի պէ՞տքէն խանդարել :

•  
•

Սաքայեան Սերովբէի բարեկամներն եւ համակրողք կ'ստիպեն եւ կը թախանձեն զինքը քահանայանալ, եւ իւր ցեղային հոգեւորական յաջորդութիւնը շարունակել Տէր-Յովհաննէս անուամբ :

Կուտայ կամքը, կը վճռուի ձեռնադրութիւնն ի Պատրիարքարան, եւ կ'որոշուի կատարել մեծահանդէս, 1825ին Պատրիարքանիստ Մայր-Եկեղեցւոյ մէջ, ձեռնադրութեամբ Աստուածատուր Արքեպիսկոպոսին (1):

---

(1) Աստուածառու՝ 1805ին Եպիսկոպոս ձեռնադրուած է, եւ 1820ին 24 օր՝ քանադուած :

Նորին Արժանապատուութիւնը՝ յետ ձեռնադրու-  
թեան ի Մայր-Եկեղեցւոջ, փոխադրուած է ի Պալատ,  
եւ Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյն Աթոռակալն ե-  
ղած է, ինչպէս Տէր Մելքոն Բահանայն՝ մշտնջեն-  
աւոր Աւագերէցն էր նոյն եւ միացեալ եկեղեցեաց :

1841ին Ասուածատու Բ. Պօլսեցի՝ Պատրարք ընտրուած  
է իբրև Ամիրայական ընտրելի, եւ ի Բ. Դուռն ներկայաց-  
ուելով՝ անմիջապէս վաւերացուած է, մինչդեռ արհես-  
տաւորաց ընտրելին եղած էր Մասթէոս եպիսկոպոս, որ ապա  
պատրարքացաւ եւ կաթողիկոսացաւ: Ասուածատու Եր-  
բազանի Պատրարքութեան օրով է Հայ Ամիրայից եւ Հայ  
արհեստաւորաց խնդրոյն ծագումը:

Ասուածատու Պատրարք՝ Վէզիր-Խանի մէջ ի ներկայ-  
ութեան Տասեան Յովհաննէս եւ Արզումանեան Արզուման  
Ամիրայից, արհեստաւորաց գլխաւորները կը հրաւիրէ եւ ժո-  
ղովրդեան կողմանէ Ազգային Վարչութիւն մը կազմելու ո-  
րոշումը կուտայ եւ կը տեղեկագրէ ի Բ. Դուռն, որ 12 Դեկտ-  
1841 թուականաւ հրովարտակաւ կը հաստատէ 27 արհես-  
տաւորներէն կազմուելիք Ազգային Վարչական Ժողովոյ մը  
ղըրութիւնը, Ամիրայից ազգեցութիւնը կամ միջամտութիւնը  
բնաւ չընդունելու թէութեամբ:

Ոսկայն տարիէ մը յետոյ սոյն արհեստաւորներէ կազմ-  
եալ Վարչութիւնը չկարենալով շարունակել այլ եւ այլ  
պատճառներով, հրաժարական կը մատուցանէ առ Բ. Դուռն  
եւ 13 Նոյեմբեր 1842ին վերսին կը յանձնուի Ազգային Վար-  
չութիւնը Ամիրայից ձեռքը:

Ամիրայից վերահաստատեալ Վարչութիւնը՝ նախագահու-  
թեամբ Երկանեան Յարութիւն Ամիրայի, որ սեղանաւորաց  
գլուխ կարգուած էր եւ ականակուռ իֆթիխարի նշան ու-  
նէր Արքայէն, ի ժողով կը գումարուի, եւ միաձայն կ'որո-  
շէ Պատրարքին հրաժարականը պահանջել: Յասկապէս  
երկու Ամիրայներն կը ղրկուին առ Ասուածատու Պատրար-

Այն ատեն Պալատու Թաղը Հայոց 1170 տուն կը գտնուէր, եւ եկեղեցւոյ քահանայից Թիւն քսան երկու մնացած էր :

Պալատու եկեղեցւոյ Մէ-Նէ-Քէւն էր նախ՝ Խորասանճեան Յովհաննէս Ամիրայն (1), յետոյ Գիւրք-ճիխանլեան Մկրտիչ Ամիրայն, որ ամառն ի Գուրուչէշմէ, ձմեռներն Այա-Գարուի կողմերը ծովեղերնայ տունը կը բնակէր :

Աթոռակալ նորընծայ Տէր-Յովհաննէսին քանի ծուխ ունենալը չեմ գիտեր, բայց սա՛ դիտեմ որ ծուխերուն մեծ մասն՝ Հայ Կաթողիկներն էին, որոց մէջ կը յիշուին Տիւզեանց Կարապետ, Յակոբ եւ

---

արքն, եւ հրաժարականը քաղաքավարութեամբ կը խնդրեն :

Աստուածասուր ծանձրացած էր արդէն Պատրիարքութենէն, ուստի անձնական տկարութիւն պատճառակեցով՝ կը գրէ հրաժարականն, 2 տարի եւ 7 ամիս Պատրիարքութենէ զկնի եւ կը դրկէ զայն ի Բ. Դուռն. որ կ'ընդունի :

Աստուածասուր Պատրիարք՝ շինել տուած է Իւսկիւտարու Ս. Կարապետ հոյակապ եկեղեցին, որուն առաստաղներն, խաչկալը, վերնասունները, գաւիթը, եւ այլն, 1887 Յոգոսոս շին այրեցան եւ ապա վերաշինուեցան օժանդակութեամբ Ռւնճեան Վսեմաշուք հարազատաց :

(1) Խորասանճեան Ամիրային տունը՝ առաջուց ի վեր Հայ գրագիտաց ակմբանոց դարձած էր, ո՛ր կը հաւաքուէին երբեմն՝ Նիկողայոս Զօրայեան, Խաչատուր Պատրիարքանեան, Խաչատուր Միսաքեան, Աղաթօն Մկրտիչ, Աղաթօն Գրիգոր, Իւթիւճեան Կարապետ, Որվանճեան Յարութիւն, Տէր-Յակոբ Քահանայ Պէշիկճաշլեան, Տէր-Յովհաննէս Աւագ Քահանայ Հիւնքեարպէյէսեան, եւ այլ ուսումնական ազգայիններ :

Պօղոս Չէլէպիները, Ալլահգերտեան Արքահամ եւ Մաթուս Ամիրայք, Ալէքսանեան Յովհաննէս, Չամչեան Յովսէփ, Պիլէգիկճեան Պօղոս եւ ի Գատրգիւղ բնակեալ նշանաւոր ղեղագործ Խուրտաճեան Պօղոս Աղայն, արդարեւ այր բարի եւ ազնուական:

Նախկին ժամանակաց մէջ երբ Քահանայ մը վախճանէր, ծուխերուն ցուցակը Պատրիարքին կը տարուէր, եւ Նորին Ամենապատուութիւնը կը ծախէր ուղած քահանային՝ յատուկ կոնդակաւ մը:

Կարապետ Պատրիարքի օրով թէեւ Պէզճեան Յարութիւն Ամիրայն՝ այդ սովորութիւնը վերջացնել տուաւ, բայց Մեծ Տէր Յովհաննէս Քահանայ Հիւնքեարդէյէնտեան՝ իւր ծուխերուն մէկ մասը, կանխաւ 10,000 ղուրուչի ծախու առած էր Կարապետ Պատրիարքէն:

•  
•

Տէր Յովհաննէս՝ խաղաղասէր Քահանայ մը լինելուն համբաւը կը վայելէ ցարդ:

Բնաւ պարապ ժամանակ չէր անցըներ: Աւելի թուրք գրականութեամբ գրադած է՝ քաջալերութեամբ ի Սեբաստիա թաղուած Իզզէթ Մուլլայի (1):

---

(1) Իզզէթ-Մուլլա՝ բնիկ Գանսիլիցի է:

Դոշմարտ (սիֆիքան պաշի) Համի Յէթթահ Էֆէնսիէն լսած եմ թէ՛ Իզզէթ Մուլլա՝ պատմական երկասիրութիւն մը Յողած է. եւ զոնն՝ Ֆուաս Փաշա՝ կը պատմէր թէ, հայրն իրեւ ժառանգութիւն, անկողին մը եւ գիրք մը միայն Յողած է իրեն:

Հայր Յովհաննէս՝ +եֆէ մարդ չէր:

Ըստ հին սովորութեան, ոչ էնֆէյէ, ո՛չ լապտի կը քաշէր, եւ ո՛չ կոմֆոմֆոմֆոմֆ կը կոնծէր, այլ միայն սուրճ կ'առնուր, եւ խմած ժամանակ՝ երկայն եւ փառաւոր մօրուքին վերայ չթափելու համար՝ մօրուքին կէսը՝ հագած էնֆէյին ծոցը կը թխմէ եղեր:

Տէր-Յովհաննէս՝ միշտ գործօն դեր ունէր Ազգին մէջ, եւ եկեղեցականաց յառաջադիմութեան բաղձացողներէն էր, մանաւանդ կուսակրօնութեան մէջ կը փնտռէր եւ կը տեսնէր ազգային եկեղեցական եւ կրթական յառաջադիմութիւնը:

Այս Մեծ Տէր-Յովհաննէս Քահանայ Հիւնքեարպէյէստեան՝ Յակոբոս եւ Մատթէոս Պատրիարքներն՝ (վերջինը՝ ապա Կաթողիկոս) աշխարհական եղած ատեննին հետն առեր եւ յիւսկիւտար տանելով հրաժարեալ Մէլի-Յովհաննէս Պատրիարքին յանձներ է՝ ի փոքրաւորութիւն եւ ի վարդապետութիւն:

Յակոբոս Պատրիարքին աշխարհական անունն էր՝ Մարտիրոս, իսկ Մատթէոսինը՝ Մամբրէ:

Յակոբոս Պատրիարք՝ Տէր-Յովհաննէսին աներձազն է, որ փոխանորդութիւն ըրած է Ադրիանուպոլսեցի Պօղոս Պատրիարքին օրով, եւ այս միջո-

---

իզգէ՞՞ Մոլլայի քոյրն ալ Տանկաց մէջ հանճարեղ գրագիտուի մը եղած է, եւ ունի գեղեցիկ բանասեղծական գրուածներ:

իզգէ՞՞ Մոլլայի իւղաներկ եւ մեծադիր պատկերն սեսած եմ, երիցս ողբացեալ Ղազարոսեան Քրիստոսուր էֆէնսիի քեռորդուոյն՝ ճարտար պատկերահան եւզրճեան Սիմոն էֆէնսիի գեղարուեստական դահլճին մէջ:

ցին՝ որ տակաւին Վարդապետ էր, գործով մը յէջմիածին զրկուեր, եւ անդ Եպիսկոպոս ձեռնադրուեր է՝ առանց վիճակի :

Յակոբոս-Պատրիարք՝ Աշտարակեցի Ներսէս Երդ. Կաթողիկոսէն մարդարտայեռ եւ ոսկեհուռ Կոնքեռ մը ընդունած էր, ի վարձատրութիւն իւր առ եկեղեցին մատուցած գնահատելի ծառայութեանց :

\*  
\*  
\*

Տէր-Յովհաննէս Քահանայն՝ ժամարարական շրջանի մէջ գտնուելով ի Պալատ, Աստուածատուր Եպիսկոպոս ալ (ապա՝ Պատրիարք) քահանայական ձեռնադրութեան համար կը հրաւիրուի ի Պալատ՝ Ս. Հրեշտակապետ եկեղեցին :

Կիւրակէ առաւօտ՝ Աստուածատուր Սրբազան կանուխէն եկեղեցի կիջնէ, եւ Հրաժարիմէն յետոյ, զղման Մեղայն արտասանած պահուն, Նորին Սրբազնութիւնը ի ծունր եկած, Տէր-Յովհաննէս ալ՝ իբրեւ պատարագելու շրջանին տէր՝ կոնակը բէմին տուած, կամացուկ մը՝ Ասուած թողութիւնն ընդհեսցէն կըսէ :

Աստուածատուր՝ առաջին անգամ, իբրեւ բարկութեան ձեւ, Քահանային ամուր չ'արտասանելուն, հ'ը, հ'ըներ կ'արձակէ՝ գլուխը երերցնելով, իբր թէ՝ Եպիսկոպոսն ինչպէս բարձր կ'արտասանէ, նոյն ոճով հանդիպակաց Քահանայէն արտասանուին կը պահանջէ :

Երկրորդ անգամ երբ Քահանայն կը կրկնէ նոյնը՝ միեւնոյն դաշն եւ մեզմ ձայնիւ, Աստուածատուր Եպիսկոպոս, իշրահօք՝ Տէր-Յովհաննէս, կը պօռայ :

Իարձեալ, երբ անփոփոխութեամբ կ'երրորդէ Քահանայն, յայնժամ Աստուածատուր Եպիսկոպոս, Տէր-Յովնաննէս, չ'կրցա՞նք հասկցնել . . . :

Իսկ չորրորդին՝ մինչ Հիւնքեարպէյէնտեան Քահանայն, միեւնոյն ուղղութեամբ կը շարունակէ, ալ եւս կարի բարկանալով Աստուածատուր Եպիսկոպոս,

է՛յ, Խառնախօս Տէր-Յովնաննէս, կը գոչէ. եւ Տէր Յովնաննէս կամաց մը՝ « Քահանայի մը համար առաջի եպիսկոպոսին, այսպէս ակնածանօք արտասանել պէտք է՝ կրօտ, եւ կը լռէ :

Տէր-Յովնաննէս Քահանայ՝ որչափ որ ժողովրդականութիւն կը վայելէր ընդհանուր Ազգին մէջ, եւ մասնաւորապէս իւր Թաղին մէջ, ի վերայ այսր ամենայնի, ժամանակակից դէպքերէն ալ տուժած էինչպէս որ Կարապետ Պատրիարքի տնօրինութեամբ՝ 1829ին, թէ 1830ին, Պալատու եկեղեցւոյն վեց Քահանայներն պատուհասուելու համար՝ այլ եւ այլ տեղեր ղրկուած են վիճակարկութեամբ :

Եւ Հիւնքեարպէյէնտեան Տէր-Յովնաննէս Քահանային վիճակն ինկած է երթալ ի Սամաթիա Ս. Գէորգ եկեղեցին, ուր Ծ ամիս պաշտօնավարած է ի քառութիւն եւ ՚ի թողութիւն անմեղ մեղաց :

Ուրիշ մը՝ Տէր Կարապետ Քահանայ Գաբուշէ (Գեր. Ալէաթճեան Տ. Գրիգորի Եպիսկոպոսի պապն) Թօփգարուի Եկեղեցին, Տէր Գրիգոր Քահանայն յԵէնիգիւղ՝ Ս. Աստուածածին, Տէր-Պաղտասարն՝ Գարակէօմրիւկի Եկեղեցին ղրկուած են : Իսկ Տէր-Մելքոն եւ Տէր Ստեփան Քահանայից վիճակուած են երթալ ՚ի Պօլու :

Պէզճեան Յարգութիւն Ամիրային Տաներէցն՝ թէեւ Օրթագիրդի նշանաւոր Տէր Գալուստն էր, բայց ոչ նուազ կը սիրէր եւ կը յարգէր նաեւ զՀիւնքեարպէյէնտեան Տէր-Յովհաննէս Քահանայն, իբրեւ պայազատներէն՝ հմտաշատ Գէորգ-Դպրին :

Կը պատմուի թէ, Պէզճեան Ամիրայ՝ մեռած տարին՝ ամառն յօղափոխութիւն գացած էր ի Վոսփոր, Մէզար-Պուրնու՝ զինւորական պահականոցին քովի տունը : Նոյն տարին Հիւնքեարպէյէնտեան Քահանայն ալ օղափոխութեան գնացած էր ի Սարրեար, փոքրիկ տուն մը վարձելով :

Ամիրայն շատ չկրնալով մնալ ամարանոցի համար վարձած տանը մէջ, կանչել կուտայ քովը զՀիւնքեարպէյէնտեան, եւ կը խնդրէ որ՝ առնէ ջր-ի-ջօճ-իջ եւ գայ տեղաւորուի ընտանեօք եւ պարագայիւք իրեն վարձած ընդարձակ եւ ծովահայեաց ապարանին մէջ, եւ մնայ անդ մինչեւ Գասըմ, խնդրելով միանգամայն՝ որ ի Սարեար օղափոխութեան գնացող Հայ ժողովրդեան հոգեւոր պիտոյքն յանձանձէ եւ մխիթարէ, մինչեւ որ ասոնք ձմեռը՝ վար իջնեն իրենց տեղը : Խստիւ կը պատուիրէ Հիւնքեարպէյէնտեան Քահանային՝ որ բնաւ Պոլիս չիջնէ, եւ կը խոստանայ՝ առ այս պէտք եղած Պատրիարքական հրամանագիրը փութացնել :

Արդարեւ Պատրիարքարանէն անմիջապէս նոյն մտք պաշտօնագիրը կը համար ի Մէզար-Պուրնի առ Հիւնքեարպէյէնտեան :

Հին ատեն՝ ազգային օրէնք չկար, ժողովներով չէին տնօրինուեր ազգային ընթացիկ գործերն : Ամէն բան Պատրիարքին բարեհաճութենէն եւ քմահաճոյքէն կախեալ էր :



ինչպէս Մեծ Տէր Յովհաննէս Քահանայ Հիւնքեարպէյէնտեան , նոյնպէս երիցուհին ալ իւր սեռին մէջ ոչ նուազ ազդեցիկ Տիկին մը եղած է . անանկ որ՝ ժամանակակից Հայ խաթունները՝ ինչպէս որ կանանց Եպիսկոպոս՝ կ'անուանէին Քիթապճի-Մարգարի Նազու Տիկինը , նոյնպէս « Կանանց Պատրիարքը » կը յորջորջեն եղեր Տէր-Յովհաննէսի Երիցուհին : Եւ ինչու չ'անուանէին : Ըստ որում Երիցուհւոյն Տէր-տէրը՝ ազդեցիկ եւ ժողովրդական Հիւնքեարպէյէնտեան Քահանայ մը , երիցուհւոյն մի եղբայրը՝ Յակոբոս Եպիսկոպոս Սերովբեան , Հայոց Պատրիարք , միւս եղբայրը՝ Ստեփան Էֆէնտի Սերովբեան՝ Հայ Բողոքականաց Ազգայեալ էին :

\*  
\*  
\*

Վերջապէս, Մեծ-Հիւնքեարպէյէնտեան Տէր-Յովհաննէս Քահանայն՝ շուրջ տասնհրեք տարիներ քահանայագործելէ յետոյ , 1837ին վախճանած է ի հասակի 63 ամաց . եւ թաղուած էտիրնէ-Գարուի գերեզմանատան մէջ՝ առնթեր իւր նախնեաց :

Տէր Յովհաննէս Քահանայ՝ ինքն իւր տապանագիրն ձեռքըր վրած եւ թողած է հայատառ եւ տաճկարարառ . ինչպէս յետ վախճանման , իւր զաւակն ալ՝ Արժ . Տէր Յովհաննէս Աւագ Քահանայ Հիւնքեարպէյէնտեան , ոսկիղինիկ ոճով գեղեցիկ գրաբառ տապանագիր մը յատկապէս հիւսած եւ պատրաստած է , վրան զրոշմլուով միանգամայն հանգուցելոյն ՍԷՆՍԱ Արարական զարդանունը , սակայն

տարաբաղդարար վրան՝ տակաւին դամբարան կամ  
տապան մը շինուած չէ , քար մը դրուած չէ , որ  
այդ կրկնակի եղերերգութիւններն ղետեղուին :

Երբ յաջորդ Տ. Յովհաննէս Աւագ Քահանայ Հիւն-  
քեարպէյէնտեանէն ուզեցի գրածին օրինակն գա-  
ղափարել , հառաչելով ըսաւ թէ՛ « Դա տապանագիր  
չէ՛ , այլ ճակատագիր » :

Ահաւասիկ Մեծ Տէր Յովհաննէս Քահանային իւր  
ձեռք թողած տապանագրին օրինակն .

1. — Պէնտէն իպրէթ ալ կէլիպ էյ ղէտէկեան  
Չարխի քէժ ըէթարտէն անի Ֆէղան
2. — Տէֆթէրի իչրէ պէնի չիւն կէօրտիւ չօք  
Աքըպէթ տիւնեատէն իյթտի պէնի եօք ,
3. — Սատ հէզար համտօլաքի քապրիմ եէրի  
Սէճտէ կեանի ղիւլճէլայ հազրէթլէրի ,
4. — Այթմշ տէօրթտէ քյտի Ֆիլէք եայրմէ  
Պէօյլէ հազսընլար պու մէշար թաշըմէ
5. — Կիւլմէտիմ կիւլտիւրմէտի ասլա ինան  
Բանմի եօք չարխի Ֆիլէքտէն էլաման
6. — Հասըլի պիւքտիւ պու էօմրիւմ տեֆթէրի  
Իւսթիւմէ աթտի պու թաշի մերմերի .
7. — Վարիտի էմլաքի մալի տէվլէթիմ  
էյ պիրատէր կէր սօրարսան շէօրէթիմ
8. — Հեմ Տէր Օհաննէս հեմտէ Սելխի տիր  
Մէքեանըմ Պալստ քիլիսէսի տիր ,
9. — էյ ղիյարէթ իյլէյէն կէօր պէնի խօշ  
Կէլ կէլ Ալլահի սեվերտէն կէշմէ պօշ
10. — Քապրիմ իւզրէ պիր տուա քըլ պիր տուա  
Ճիւրմիւմ աֆ իթսիւն ճէնապիւլ քիպրիա :

Պէտք չէ որ Ազգն, կամ մեծատուն մը այդ Մեծ Հիւնքեարպէյէնտեան Քահանային վրայ քար մը ձգէ, յուշարձան մը կանգնէ :

Պէզճեան Ամիրայ՝ Գէորգ Պալատեցւոյն դամբարանը կը շինէ . Պալեան Կարապետ Ամիրայն՝ ի Պարտիզակ Յովհաննէս Փիրէնեանին տապանաքարը դնել կուտայ, եւ Ճէղայիրեան, թէ Միսաք Ամիրայն ի Նիկոմիդիա՝ Ստեփաննոս-Աղաւնի Պատրիարքին հոյակապ մահարձանը կը կանգնէ :

Տեղը չէ՞ ըսելու թէ՛ այժմ թէ՛ եւ մեծ հարուստներ ունիմք, բայց քանի՞ հատ ունիմք մեծահոգի հարուստներ :

Կը ներու՞մ մեզ վերջին դիտողութիւն մը եւս կցել :

Ներուպայի մէջ Տէքարդի գանկն, Վօլդեռի ցուպը, Քանդի կեղծամը, Ժան-Փազ Ռուսոյի բաճկոնակը, Մեծն-Նարոյէոնի գլխարկը, Մոլիէրի թեւաթոռը՝ հազարաւոր ֆրանքներ կ'արժեն, սակայն ըստ որում մեր Ազգին մէջ ամենէն երեւելի գրագէտին երկերն անգամ կուտ մը չեն արժէր, ցարդ հետաքրքիր չեն եղած իմանալ թէ՛ բուն Հիւնքեարպէյէնտեանի <sup>(1)</sup> եւ ազգակից Գէորգ-Դպրի եւ նմանօրինակ հին գրագիտաց թողած ամբողջ ձեռագրերն ո՛ւր կը մնան, եւ որո՞ց ճարակ եղած են :

---

(1) Ողբացեալ առաջնակարգ ջպագիր ձանիկ Արամեանը փափարած է որ՝ Սալիսէի, այսինքն, երջանկայիշատակ Հիւնքեարպէյէնտեանի գրական գործերն հրատարակուին :



Զ.

ՅԱԿՈՎԼԲ ՇԱՀԱՆ-ՋՐՊԵՏԵԱՆ

Ահաւասիկ ուսումնասիրութեան արժանի դէմք մը եւս :

Շահան-Ջրպետ թէեւ ծագմամբ Կիւլիկեցի , սակայն ինքն ծնած է յԵղեսիա , 16 Դեկտեմբեր 1772ին : Իսկ Ջրպետին տոհմային հնութիւնը՝ կը յանգի մինչեւ 1375 :

Սոյն սերունդը դադրած է ի Պարտաւ :

Շնորհալոյն ազգատոհմէն կը նկատուի այդ գերդաստանին երբցագոյն նահապետն Թովմաս Շահանեան , որ իւր Աննա , Ներսէս , Գրիգոր եւ Մատթէոս զաւակներովն եկած հաստատուած է յԵղեսիա :

Ահա այս ազգաբանութենէն կ'իջնէ Յակոբ Շահան-Ջրպետի ցեղային գիծը , ըստ իւր ինքնակենսագրութեան :

Յակոբին հայրն է՝ պարոն Սարգիս Շահանեան , եւ մայրն՝ Մարիամ Ալարեան :

Ի մանկութենէ ուսանելու եւ ուսուցանելու եռանդ ցոյց կուտայ ծնողացը , եւ կը յառաջանայ օր ըստ օրէ նախնեաց մատենագրութեան վերծանութեամբ :

Բարեբաղդ էր Ջրպետ՝ որ իւր ապրած միջավայրին մէջ իրեն Հայերէնի համար լաւագոյն ուսուցիչը գտաւ յանձին՝ նոյն ժամանակի Եղեսիոյ Առաջնորդ Բաղիշեցի Աւդալեան Պօղոս Վարդապետին , որ

Ամբողայ(1) Դպրեվանուց զարգացեալ եւ բարեհամբաւ Վարդապետներէն էր :

Շահան-Ջրպետ Յակոբ՝ բնութենէն օժտեալ էր : Մեծ ընդունակութիւն ցոյց տուաւ ոչ միայն Հայերէնի կատարելագործութեան , այլ եւ ուրիշ ուսմանց մէջ :

---

(1) Բաղէշի Ամբողայ կամ Ամբողայն Վանքը նշանաւոր եղած է իւր ընծայած մտացի եւ բարձրաստիճան միաբաններովը :

Թողնմք Վանուց հաստատութեան Թուականէն 'ի վեր եղած պատմութիւնը , եւ Ազգին նուիրած եկեղեցականները , 16րդ դարուն մէջ մեր Ազգային ուսումնասենչ հոգեւորականութեան համար լուսաւորութեան ջանք մը դարձած էր գրեթէ այդ պատմական Վանքը՝ շնորհիւ Հայերէն Քերականութեան առաջին յօրինիչ Կաւառացի ձօն Բարսեղ Վարդապետին , որ ոչ միայն Ամբողայ Մենասանը վերանորոգած է , այլ եւ Վանուց միաբանները ներանձնական կենաց հետ նաեւ ուսմանց մէջ զարգացնելու աշխատած է : Այս Վարդապետ 'ի մէջ այլ ընտիր գրուածոց՝ ունի նաեւ Մարտոս Աւետարանչիւն Մեկնութիւնը . Տպ . 1826 :

Այս հռչակաւոր Մենասանի միաբաններէն էր Առաքել Պատմագիրն , Սեբասացի Միխիթար Աբրահամ՝ աշակերտ Մարտիրոս ուսումնական Վարդապետին :

Սոյն Մարտիրոս Վարդապետին աշակերտներէն էին նաեւ Կ. Պոլսոյ Կոլոս-Յովհաննէս Պատրիարքը , Ս. Երուսաղիմալ Եղբայակիր Գրիգոր Պատրիարքը , Ս. Էջմիածնայ Աբրահամ Բ. Մշեցի Կաթողիկոսը . եւ այլք :

Կը պատմուի թէ՛ այս երեք աշակերտք՝ 'ի բացակայութեան Մարտիրոս Վարդապետին՝ օր մը խորհուրդ կ'ընեն եղբր թէ՛ ապագային մէջ իրենցմէ մին Կ. Պոլսոյ Պատրիարք պիտի լինի , մէկն ալ՝ Երուսաղիմայ Պատրիարք , երրորդն՝ Էջմիածնայ Կաթողիկոս :

1787ին ծնողացը արտօնութեամբ, ճանապարհորդութեան ելաւ Աւդալեան Գողոս Վարդապետին հետ, համոզուելով Ֆրանսացի հեղինակի մը հետ թէ՛ «Ուղեւորութիւնը դաստիարակութեան լրացուցիչ մասն է »: Ուստի Եղեւսիայէն մեկնելով նախ շրջագայութեան կ'եղնեն Կիլիկիոյ այլ եւ այլ քաղաքները, յետոյ կ'այցելեն Ասորեստանի կողմերը, ուրկէ յերուսաղէմ ուխտի երթալով, բաւական կ'ուսումնասիրեն տեղական հանգամանքներն եւ նրկարագիրներն, ապագայ գրական գործունէութեան պաշար յանձանձեղու համար:

Ապա Երուսաղէմէն կը դառնան ի կղզիս ինչ Միջագետաց, եւ աշխարհատեսութեան համար՝ 1789ին մինչեւ յիտալիա եւ ի Հռոմ վ'ընդարձակեն իրենց ուղեւորութեան գիծը:

---

Աշակերտաց սոյն կանխագուշակ խորհրդակցութիւնը կատարած միջոցին՝ յանկարծ Մարտիրոս Վարդապետ ներս կը մտնէ եւ տեսնելով որ իւր մատուռն սանտն, խորհրդով մը զբաղած են, առանց հարցասիրելու խորհրդակցութեան նիւթը, անմիջապէս կ'ըսէ թէ՛ «որդեա՛կք իմ, Աստուած Ամենակալ՝ խորհուրդնիդ 'ի բարին կատարէ »:

Բաղէշի Հայ կանայք սոյն իրական պատմութիւնը յորդոց յորդի ցարդ կ'աւանդեն, եւ մեզ ալ հաղորդեցին անձամբ, երբ 1882ին 'ի Բաղէշ այցելեցինք:

Զմուռնամբ յիշել նսեւ թէ, սոյն Ամիրզընոյն Վանքն՝ հակառակ իւր բառական նշանակութեան՝ երգիչներ, ջաղասացներ եւ ծարսար նկարիչներ ալ տուած է Ազգին, ինչպէս են Հսգար Վարդապետը, Գողեցի Ազգաշ Մկրտիչ Եպիսկոպոսը (Առաջնորդ Ամթայ), որ ունի Տաղարան մը՝ գեղեցիկ երգոց, Բաղիշեցի Կարապետ Վարդապետը եւ այլք, որոց գործերն օրհնութեամբ կը յիշատակուին:

Հոովմայ մէջ քանի մը ամիսներ աւելի կը մնան, եւ հուսկ ապա իրարմէ բաժնուելով, Յակոբ Շահան-Ջրպետ կ'երթայ կը բնակի Փլորենտիոյ (Ֆիօրենցա), Լիվորնայ եւ Գենուայ (Ճենովա) քաղաքաց մէջ եւ ապա կը հաստատուի ի Փարիզ, ինչպէս կ'երեւի 13 Դեկտեմբեր 1815 ին. Փարիզէն առ Յովակիմ իշխան Նդիազարեան գրած իւր նամակին հետեւեալ մասէն։

« Ի Քաղաքս Փլորենտիոյ, Լիվորնայ, եւ Գենուայ պարապելով անզազար տիւ եւ գիշեր յուսումըն լեզուաց, օրինագիտութեան, գրագիտութեան, եւ այլոց ինչ իրաց, այնչափ որ մերձեցայ կորուսանել գլոյս աչաց իմոց, եւ յընթացս իբր 40 աւուրց՝ զոր ինչ կամ ըստ աղօտ իմն տեսանէին, այլ շնորհիւ Տեառն, նպաստութեամբ բժշկաց եւ բժշկական ինչ իրաց, ընկալայ զառաջինն եւ զայլ եւս աւելի զօրութիւն տեսութեան իբր անխոնջելի միշտ Յետոյ ի գալ Գաղղիացւոց յիտալիա, եւ յառնելն իմ տեսութիւն ընդ Նաբողէոնի՝ որ մեծ սպարապետ էր յայնժամ, վասն Եկեղեցւոյ Հայոց Լիվորնա քաղաքի, նոյնպէս եւ ի մտերմանալն իմ ընդ այլ երեւելի պաշտօնատարաց Գաղղիացւոց՝ հրաւիրեալ եղէ ի Տէրութենէն գալ աստ. որ եւ եկի իսկ ի յամուռջ Օգոստոսի 1798ին ի սոյն Փարէզ քաղաք... եւ յետ 16 աւուրց ժամանելոյս աստ, կալայ ի Տէրութենէն ըզպաշտօն ինչ ի գրատան. ի գալ Նաբողէոնին աստ, ընկալայ ի նմանէ եւ զայլ ինչ պաշտօն եւս ի նոյն գրատան, եւ միշտ մնալով ի նմին, յաւել տէր եւ զշնորհ իւր միշտ ի պէտս ծառայիս։ Դպրատուն մեր որ փակեալն էր ի Յուլիս ամսոյ հետէ այսր տարւոյ, վաղեան աւուր բանալոց եմք հռչակաւոր իմն կեր-

պիւ . եւ այս եւս շնորհիւ Տեառն : Դպրատուն մեր հաստատեալ է միանգամայն վասն Հայոց, Գաղղիացւոց եւ այլ ամենայն ազգաց . զի բազումք յօտար յայխարհաց եւս , արք երեւելիք , զիտնական արք , քառասնամեայ եւ աւելի եւս , գան աստ առ 'ի յուսանել , զի լեզու մեր է մին ի հնագոյն ի սուրբ եւ ի մայր լեզուաց , մինչեւ զարմացուցանէ զգիտունս թէ քանի հնագիտութիւնս , արմատս նախնական լեզուի այխարհիս եւ զայլ անագիւտ տեղեկութիւնս զվաղեմի պատմութեանց եւ զծագմանէ ազգաց՝ քաղեալ գտանեն իբր անփորձ հանք կամ անտաշ գոհար »

. . .

Շահան-Ջրպետ սովրած էր Հայերէնէ զատ Պարսկերէն , Յունարէն , Իտալերէն , Գաղղիարէն եւ այլ լեզուներ :

Ուստի , հաստատուելով ի Փարիզ , ամուսնացաւ 1792ին Գաղղիացի ուսումնական Օրիորդի մը հետ :

Ի Փարիզ՝ 1763ին Արաբական լեզուին քաջահմուտ Լուի Մաթիէ Լանկլէսի նախաձեռնութեամբ՝ տեղւոյն Ազգային գրադարանին կից՝ Արեւելեան կենդանի լեզուաց համար մասնաւոր դպրոցն հիմնուած էր :

1795-1796ին , վերոյիշեալ լեզուաբանական վարժարանին մէջ կաւանդուէին Արաբերէն , Թուրքերէն , Պարսկերէն , Թաթարերէն , եւ Մալայերէն , որ Նոզայերէնին մէկ տեսակն է :

Սակայն տարիներու հոլովմամբ հետզհետէ հաս-



տատուեցան անդ Յունարէնի, Չինարէնի, Հնդկերէնի, Ճարտներէնի, Ճավայերէնի, Անամերէնի, Ռուսերէնի դասախօսութեանց բեմերը, ինչպէս նաեւ 11 Դեկտեմբեր 1798ին ալ Հայերէնի ամպիոնը հաստատուեցաւ, դասաւանդութեամբ ուսումնական եւ լեզուագէտ համազգի Յակոբայ Շահան-Ջրպետի:

1801ին՝ Փարիզու Կայսերական գրատան Արեւելեան լեզուաց դպրոցին Հայկական լեզուի ուսուցիչ լինելէ հրաժարեցուցուած է Շահան-Ջրպետ, պատճառաբանուելով թէ՛ Ֆրանսերէն լեզուի եւ գրականութեան մէջ անբաւական գոյով չէ կարող լրիւ գոհացնել զաշակերտս, եւ ստանձնած լեզուին յատուկ օրէնքներն ղիւրրմբռնելի ընծայել անոնց<sup>(1)</sup>։

Եւ որովհետեւ առանց տիրող լեզուին ուսումն-

---

(1) Դիտելի է թէ, Փարիզու Արեւելեան կենդանի լեզուաց ձեմարանի Հայերէնի դասախօսութիւնը 1798էն՝ Յակոբ Շահան-Ջրպետէն կ'սկսի, որոյ կը յաջորդէ 1828ին իւր աշակերտն Պ. Ֆլորիվալ, որ շարունակած է մինչ 1862 իւր մահուան օրը:

Ֆլորիվալին տեղակալած է Տիւլօրիէն՝ որոյ դասախօսութիւնը 1881ին տարածամ վախճանմամբը դադրած են, յորմէ յետոյ Պ. Օկիւսդ Գառիէն՝ այժմեան դասախօսն սկսած է, որ ամենայն եւանդեամբ ցարդ կը շարունակէ Հայ լեզուի դասաւանդութիւնը յիշեալ համալսարանին մէջ, թէեւ աշակերտաց թիւն միաւորէն անդին չանցնիր:

Պ. Գառիէնի աշակերտներէն է Ֆրանսացի Պ. Մէյէ, որ 'ի վիէննա Հայր Թաշճեանի եւ Նշանաւոր Արեւելագէտ եւ համայնագէտ Մաքս Միլլէրի մօտ ամբողջացուց արդէն ձեռնարկած լեզուններուն ուսումնասիրութիւնները:

Պ. Մէյէ օակաւին թարմ երիտասարդ է, խիստ համակիր

ասիրութեան եւ քաջամտութեան անկարելի էր իւր պաշտօնը վերստանձնել, Շահան-Ջրպետ բնաւ յուսահատելով, անխոնջ տքնութեամբ հետեւեցաւ Ֆրանսերէնի խորապէս ուսուցման, եւ տաննամեայ տքնավաստակ աշխատութեամբ յաջողեցաւ իւրացնել այդ լեզուն բնիկ Փարիզեան մատենագրի մը հաւասար, մանաւանդ երբ 1806ին հրատարակեց Ֆրանսերէն գրական գործ մը, — որուն համար թէ-եւ Բագմավէյ՝ ւաննչան ու իմաստնոց համար ամենեւին կարեւորութիւն չունեցող գրուած մը՝ հրուշակած էր վերջերս :

Չմոռնանք յիշելու թէ՛ Ֆրանսերէն հրատարակեալ սոյն գործն արտագրուած էր Փ. Մարդէն<sup>(1)</sup> Արեւելագիտին աջակցութեամբը :

Ըստ ոմանց, 10 Դեկտեմբեր 1810ին, եւ ըստ այլոց՝

---

Հայերէն լեզուին գիտէ ջասնի չափ Եւրոպական եւ Ասիական լեզուներ, գիտնալով հանդերձ Սանսկրիտ լեզուն :

Այս լեզուարան Ֆրանսացին՝ ցանապարհորդած է՝ ի Կ. Պոլս, ՚ի Տիփղիս, յէջմիածին եւ այլուր, պրպտելու համար Հայ ձեռագիրներ եւ հնուածիւններ :

Աւելորդ չեմք համարիւր արձագանգ լինել այս առթիւ Փարիզեան Թղթակցի մը, որ իրաւամբ դիտողութիւն կ'ընէր Թէ՛ մինչդեռ մեր ազգային բարձրագոյն համարուած վարժարանին մէջ իսկ տարին քանի մը անգամ Հայերէնի եւ այլ ուսմանց դասատուներ կը փոխեն, անդին՝ Փարիզի մէջ՝ հարիւր տարուան շրջանին մէջ Հայոց լեզուին ամպիոնն ընդամենը չորս հոգի բռնած են :

(1) Տարբեր անձնաւորութիւն է Սէն-Մարդէն հուշակաւոր Արեւելագէտն, որ իւր հայերէնագիտութեամբ եւ Շահան-Ջրպետի օժանդակութեամբը՝ Թարգմանական գործեր ընծա-

15 Փետրուար 1812ին, իսկ ըստ Պէլոյ(2) հայերէնագիրին 15 Փետր. 1811 թուականին Շահան-Ջրպետ Նաբոլէոն Կայսեր յատուկ հրովարտակաւ Փարիզու Արեւելեան կենդանի լեզուաց բարձրագոյն Վարժարանին մէջ վերստին կը հրաւիրուի ի վարդապետական աթոռն Հայ լեզուի ուսման, ուր այս անգամ կը յաջողի բաւական թուով աշակերտներ հաւաքել իւր շուրջն, յորում կը գտնուէին ի մէջ այլոց . Գ. Յլօրիվալ(3) եւ Ժան-Ա. Սէն-Մարգէն : Վերջինը, իւր ժամանակին՝ Գլխաւորն Հայագիտաց Գաղղիոյ յորջորջուեցաւ :

Շարունակեց Շահան-Ջրպետ սոյն դասատուութեան պաշտօնն ի Փարիզ՝ մինչեւ 1826 տարին :

---

յաժ է, ինչպէս նաեւ մեր Ազգին նկատմամբ ոչ նուազ հետաքննական ծանօթութիւններ հրատարակած է Ֆրանսերէն լեզուաւ :

Նոյնպէս, Սէն-Մարգէն՝ Արքունական եւ Ասիական օրագրի տարանայ մէջ գտնուող հրատարակութիւններ 'ի լոյս բերած է նորաձոյլ Հայ տառերով, որք յետոյ՝ Կայսերական տպարանին կիրառութեանն համար աւելի կատարելագործուած եւ վոյելչակերտ կաղապարուած են, անտարակոյս դարձեալ Շահան-Ջրպետի խորհրդովն եւ օգնականութեամբը :

(2) Սոյն Գաղղիացին՝ աշակերտ է Շահան-Ջրպետի, եւ հեղինակ՝ Փորձ Հայերէն լեզուի գրքին, տպագրեալ 1812ին՝ ի Փարիզ :

(3) 1834ին ճանապարհորդած է 'ի Թուրքիա :

Մինչեւ սոյն ժամանակամիջոցն՝ Շահան-Ջրպետի գրական գործունէութեանց կարգին մէջ կը յիշատակուին .

1. **ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԴԱՐՁԻ ԵՒ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ Յովհաննու Յովսեփայ Քախիքեան մեծանուն Հրէի՝** բարունուց Երրայեցւոց ի գաւառէն Ալամանաց. որոյ դաւանեալ զուղղափառ հաւատս՝ մկրտեցաւ հանդերձ այլ եւս հինգ գերդաստանօք. որպէս է տեսանել ի սոյն պատմութեան շարագրելոյ յինքննէ ի լեզու Գերմանացւոց : Թարգմանեալ ի մերս յիտալական բարբառոյ ի Տէր Յակոբ Վարդապետէ Ջրպետեան Եղեսացւոյ յամի Տեառն 1797, ի Լիվօնայ » :

2. **ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՔ ԱՍԻՈՅ ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ**, 1806, յորում կը նկրտի ուղղել՝ օտար մատենագրաց Ասիական ազգաց նկատմամբ խեղաթիւրեալ կարծիքներն, եւ կը շեշտէ Հայ մատենագրութեան առաւելութիւնները :

3. **ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ**, տպեալ 1810 :

4. 1812ին՝ երկու Հայ գրչագրաց վրայ տեղեկութիւն ի լոյս ընծայեց, ոյր աղագաւ Վենետկոյ Միփթարեան Հարց Բազմավէպ կը դիտէ թէ՛ «Այս Թարգմանութիւն հաւաասարիմ չէ, վասն զի Ջրպետ ջանացած է հեղինակին ընագիրը սրբագրել եւ ոճը գեղեցկացնել » :

5. 1813ին հրատարակեց գրքերու **ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑԱԿն** .

1815ին Մէրէթ օրագրին մէջ գրած է՝ **ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ ԾԱԳՄԱՆ ԵՒ ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԵԱՆ** .

7. 1816ին՝ **ԽՈՐՀՈՒՐԴՔ ՅԱՂԱԳՍ ՄՇԱԿՈՒ**

ԹԵԱՆ ԲԱՄԲԱԿԻ կամ լաւ եւս հեղինակին բառերովը՝ «ՅՈՐԴՈՐԱԿ առ Հայս բնակեալս ի հարուստային աշխարհս կայսերութեան Ռուսաց ի վերայ երկրագործութեան խոտեղէն բամպակի . ի պարոն Յակոբայ Շահան Զրպետեան , վարժապետ Հայ լեզուի յարքայական գրատան Փարիզոյ , եւ անդամ Ճեմարանի Թագաւորական ընկերութեան Հնագիտաց Գաղղիոյ : Յամի Տեառն 1816 ի Փետրուար 24 եւ ի Թուին Հայոց ՌՄԿԵ , ի Թագաւորական տրպարանին ի Փարիզ : »

8. 1818ին . — ըստ Բազմավէպի հրատարակութեան — աշխատակցեցաւ հետեւեալ երկասիրութեան «Տեղեկութիւն ի վերայ այժմեան վիճակի Պարսկաստանի , ի լեզու Պարսիկ , Հայ եւ Գաղղիացի ի Միք Տաւուտ Մատուրէ , Լանկլեսէ եւ ի Զրպետէ : »

Սոյն գրքի առթիւ Շահան Զրպետի զեկուցումն է . «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ Ի ՎԵՐԱՅ ԱՇԽԱՐՀԻՆ ՊԱՐՍԻՑ, Լանկլեսեան Լուդովիկոսի Գաղղիացոյ : Թարգմանեաց ի Գաղղիականէ Յակոբ Շահան Զրպետեան Եդեսացի , ուսուցիչ Հայ լեզուի ի Փարիզ . Գաղղ . Պարսկ . Հայերէն . պատկերազարդ . Փարիզ , 1818 : »

Իսկ ըստ բազմամուտ եւ բանասէր Հիսարեան Յովհաննէս Էֆէնտիի՝ Շահան-Զրպետ հրատարակած ունի 1816ին նաեւ մի երկ Պարսկաստանի նկատմամբ :

9. 1820ին՝ Գաղղիոյ Հնագիտաց Թագաւորական ընկերութեան Բ. հատորին ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԱՑ մէջ գրած է հատուած մը՝ ՀԻՆ ՀԱՅՈՑ ԿՐՕՆԻՑԸ եւ այլ ստորոգիչեացը մասին :

10. Լատինաց նկատմամբ մի երկ , «հանեալ ի քառամական գրուածոց Մատթէոս Երիցու Ուռնայեցոյ՝ որ պահի ի կայսերական գրատան Փարիզոյ : Ի այս ընծայեալ սրբագրութեամբ եւ ծանօթութեամբ վերայ ընազրին , եւ թարգմանութեամբ ի Գաղղիական լեզու ի Յակոբայ Շահանայ Զրպետեան Եւսասցւոյ , ի դասատու վարժապետէ Հայ բարբառոյ դպրոցի արեւելեան լեզուաց ի նոյն գրատան : »

11. ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ մի Ողբին վրայ հայերէնագէտ Նայմանի ըրած քննադատութենէն մաս մը՝ Շահան Զրպետի թարգմանութեամբ Միշոյ դետեղած է իւր գրուածոց մէջ :

12. ԵՐԵՒԵԼԻ ԱՆՁԱՆՅ ՎԱՐՔԻՐ՝ Յրանսերէն , տպեալ ի Փարիզ :

\*  
\*  
\*

13. Երեքտասաներորդ գրական գործն Շահան-Զրպետին , նոյն ժամանակի օրուան խնդրոց մէջ մեծ բռնութիւն եւ վշտուկ յարուցած լինելով , կ'արժէ որքիչ մը ընդարձակօրէն ծանօթացնեմք :

Իրրեւ Հայ լեզուի ուսուցիչը Փարիզու լեզուաբանական արքունի Համալսարանին , մեծանուն Եւսասցին՝ դպրոցին կանոնական ծրագրին համաձայն՝ Քերականութիւն մը յօրինած էր , ինչպէս Յրանսահայ բառարան մը , որոցմով աշակերտացը կը դասուանդէր :

1823ին հրատարակուեցաւ այդ 818 երեսներէ կազմուած ստուար Քերականութիւնն , հետեւեալ կերպիւ .

ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ ԼԵԶՈՒԻ ,  
րում բացատրին սկզբունք եւ կանոնք Արամե  
լեզուին ըստ հեղինակութեան ընտրելագոյն քերթ  
ղաց , ուղղախօս մատենագրաց եւ սեպհական  
վորութեանց Հայ բարբառոյ : Յօրինեալ ի պէ  
ուսման աշակերտաց արքայական եւ մասնաւ  
դպրոցի Արեւելեան լեզուաց թագաւորական Գրա  
տան : Ի Յակովբայ Շահան-Ջրպետեան , յեղեսացւ  
յարքայական վարժապետէ Հայ լեզուի այնր Դպր  
տան , եւ ի յընկերութեանց Համալսարանին հնագր  
տաց Գաղղիոյ , Դամարճակին Աշխարհագրաց Փ  
րիզոյ , եւ Հայ. ճեմարանին Սրբոյն Ղազարու Վնէ  
քաղաքի : Ի Փարէզ , ի տպարանի պարոն Եւրաթա  
ի փողոցն Քատրան , ի թուահամարն տանց 16. յամ  
Տեան 1823 .»

Հ. Գարեգին Զարբանէլեան սոյն Քերական  
ուրբեան նկատմամբ ունեցած կարծիքը հետեւեալ  
ձեւով կ'ամփոփէ .

«Համառօտիւ մը կ'ուզենք յիշատակել քանի մը  
Հայերէն Քերականութիւններ , որոց գովելի նպա  
տակն եղած է մեր լեզուն օտարաց ծանօթացնել  
ու սիրելի ընել :

Ասոնց մէջ առաջին եւ գլխաւոր կրնանք սե  
պել զՇահան Յ. Ջրպետ , որ յարքունական համա  
լսարանին Փարիզու երկար տարիներ Հայ լեզուի  
ուսուցչութեան պաշտօնը վարած աստե՛ն (1811) ,  
Գաղղիական լեզուով ընդարձակ Քերականութիւն  
մը հրատարակած է Հայ լեզուի , Զանալով իրեն  
նախընթաց քերականաց գրուածոց մէջ ամփոփուած  
հարկաւոր կանոններն համառօտել , աւելի պարզ

ու Եւրոպական զաղափարաց ու տեսութեանց  
հաճայն երկասիրութիւն մը արտագրելով: Ինք  
ու առաջին որ մեր ազգային լեզուին վրայ սէր  
համարում մը արթնցուց ի Գաղղիա . . . :

Ռմանք Ջրպետի հակառակեցան, ու տպագրած  
հականութեան սխաշներուն հրատարակութեամբ  
եցին մեասել իւր համբաւոյն: Բայց հեղինակը  
արդուութեամբ պատասխանեց, անոնց թիւր կամ  
բացի քննադատութեանը, արդարացնելով ինք-  
նքը եւ բռնած ոճը, որուն նպատակն ուրիշ բան  
էր, բայց եթէ Հայ լեզուն Եւրոպացի գիտնոց սի-  
նք եւ դիւրուսոյց ընել, Հեղինակն, ինչպէս ըսինք,  
եւ վախճանին կրցաւ համարի: »

Մերեւելագէտ եւ հայերէնագէտ Գառիէ՝ Ջրպետի  
երականութիւնն մեծ ու անմարսելի հասոք մը կը  
տեսէ՝ լի վրիպակօք:

Ուրիշ հեղինակ մ'ալ Հայերէն Քերականութեանց  
այ ճառելով, ի մէջ այլ ծանօթութեանց, կը յա-

Յովակիմ Շոէօտեր էր առաջինն, որ զնոր լե-  
ւն Հայոց քերականաբար բացատրեաց յիւրում  
Եսաւրոսի (զանձարանի) հին եւ նոր լեզուին Հա-  
յ. յԱմբաս. 1711: Գրքոյն նորա Նկատողու-  
նն լեզուին Հայոց, ճառէ համառօտակի եւ եթ  
արբառոյն, որ ի Հայաբնակս խօսի, եւ ունի  
n 25:

Վերկրորդն էր Մխիթար՝ որ 1726ին գրեաց զըն-  
րձակ քերականութիւն իւր, որ ոչ է տպագրեալ  
սկաւին, այլ քաղուած ինչ ի նմանէ տպագրեալ  
մին 1727 հանդերձ Տաճկերէն բացատրութեամբ՝



ի շարս մեծամեծ գրականական հազուադեպիցն դասելի: Համեմ. Բազմավէպ 1843 Տ. 109. Գրեթ զկնի 100 ամաց երեւեցաւ «Քերականութիւն լեզուին Հայոց» ի Զրպետէ ի Փարիզ», եւ այլն:

Կոստանդնուպոլսեցի Հայր Յովհաննէս Զոհրապեան գիտնական Վարդապետն ալ ի Փարիզ գտնուելով Զրպետեան Քերականութեան հրատարակուած ատեն տեղւոյն Ասիական ընկերութեան թերթին միջոցաւ կը հրատարակէ իւր դիտողութիւններն յետագայ ոճով:

«Չես գիտեր թէ այս կարգէ դուրս Վարդապետը, որ այդչափ համեստ չափաւորութեամբ խորհուրդներ կուտայ, ո՛ր դպրոցի մէջ իւր ուսումը բաժնէ, բայց որ եւ իցէ կերպով՝ իւր ուսուցչին պատիւ չի բերէր. ուրիշներու գաս տալէն աւելի՝ լաւագոյն էր որ ինք միւս անգամ հոն դառնար: Վասն զի այնպիսի սխալներ կ'ընէ, յորոց յետին աշակերտ մ'ալ կը զգուշանայ. երես մը չես գտներ ուր խորթ ոճից եւ խժաբանութեանց չհանդիպի»:

1850ին Յ. Մ. Հիսարեան էֆէնտիի հրատարակած Բանասէր գրական հանդիսէն կը տեղեկանամք թէ Ասիական օրագիրը մերժած է այն ժամանակ հրատարակել՝ Զոհրապ Վարդապետին դէմ Զրպետին պատասխանը: Այս ըլլալու է պատճառը՝ որ Զրպետ 40 երեսներէ բաղկացեալ առանձին տետրակով մը հրատարակեց իւր պատասխանագիրը, «Ասիական ընկերութեան օրագրի 12րդ քերթին մէջ Զրպետեան Քերականութեան նկատմամբ հրատարակուած քննադատութեան մը հերժումն, Փարիզ 1823» մակագրով: Այս տետրակին պատասխանած է Զոհրապ Վարդապետը:

պետ դարձեալ նոյն օրագրոյն միջոցաւ :

Բազմալիւ էլ զայս յիշելով, կը յայտարարէ թէ՛

« Զոհրապ՝ Ասիական ընկերութեան օրագրին մէջ  
երկար պատասխանով մը ցըցուց՝ այլ եւ այլ օրի-  
նակներ մէջ բերելով, թէ ի՛նչպէս այդ գրուածին  
հեղինակը բազմաթիւ վրիպակներ գործած է, յայտ-  
նելով իւր անբաւականութիւնը ի քերականական  
ուսման :

« Այն ատեն Զրպետեան՝ ձախողակ խորհրդով  
մը ներկայացուց իւր գրուածը Յ. Գլափրոթի, նա-  
մակ մ'ալ ուղղելով առ նա (19 օգոստոս 1823)  
եւ ցաւ յայտնելով զինք համամիտ տեսնելուն իւր  
հակառակորդաց հետ : Գլափրոթ առանց քաշուելու  
փութաց պատասխանել, թէ մանաւանդ բազդաւոր  
կը սեպէ ինքզինքը այդպիսի իմաստուն անձանց հետ  
համամիտ գտնուելուն, որով առիթ տրուած է տը-  
գիտութեան քօղը պատռել մեկդի ձգել եւ անհիմն  
յաւակնութիւնները իրենց բուն արժէից վերածել :  
Վրայ բերաւ թէ՛ Զրպետեանի նախկին աշխատա-  
սիրութիւններն ալ մեծ վստահութիւն մը ազդած  
լէին իւր հմտութեան եւ գիտութեան նկատմամբ :

« Այս նամակն տպագրել տուաւ Գլափրոթ եւ  
այնպէս զրկեց առ Զրպետ, որպէս զի մամլոյ յանձ-  
նելու նեղութիւն չը կրես ըսելով : »

• •

Շահան-Զրպետ բնաւ չյուսահատելով իրեն դէմ  
գրուած բռուն քննադատութիւններէն, 1824ին  
վերջին անգամ հրատարակութիւն մ'ալ ըրաւ ի

Փարիզ՝ «Քերականութիւն Դիոնէսիոսի Թրակացւոյ՝ հանեալ ի Թագաւորական գրատանէ Փարիզոյ, եւ ի լոյս ընծայեալ ի Յոյն, ի Հայ եւ ի Գաղղիացի լեզուս, հանդերձ ծանօթութեամբք ի Յակովբայ Շահան-Ջրպետեան Եղեսացւոյ ի դասատու վարժապետէ Հայ-բարբառոյ յարքայական դպրոցի արեւելեան լեզուաց Թագաւորական գրատան, եւ այլն» :

Ջրպետի մասին թեր եւ դէմ գրուած ինչ ինչ կարծիքներն եւ քննադատական մէկ քանի տողիկներն յիշելով հանդերձ, կը յաւելումք նաեւ թէ նորա գրական գործունէութիւնը միշտ գնահատուելով, ոչ միայն երկար տարիներ վարժապետ մնաց Հայ լեզուի յարքայական դպրոցի Արեւելեան լեզուաց Թագաւորական գրատան Փարիզու, այլ եւ անդամ կարգուեցաւ՝ Գաղղիոյ Հնագիտաց Համալսարանի ընկերութեան : Բաց ասկից, անդամ էր նսնյպէս, Փարիզու Աշխարհագրաց Դամարճակին, ինչպէս նաեւ՝ անդամ Վնէժի կամ Վենետկոյ Սրբոյն Ղազարու Հայ Ճեմարանին :

Ապաքէն, Ջրպետ՝ իբրեւ գրական մարդ, աւելի Եւրոպացւոց ծանօթ է, քան թէ մեր Ազգին :

Եղեսացին՝ օտար լեզուաց մէջ ունեցած հմտութեամբն եւ բազմակողմանի ծանօթութեամբք, Հայ մատենագրութեան ճաշակն՝ յԵւրոպացիս ներմուծելու աշխատողաց մէջ առաջին տեղը բռնած է : Այս ճիւղին մէջ՝ իրմէ ետքը կուգան թէեւ աւելի օժտեալ եւ կատարելագործեալ՝ յաւերժայիշատակ Շահնազարեան կարապետ Վարդապետ, անմահն Մկրտիչ Էմին եւ անմոռացն Բրոֆէսէօր Քերովբէն, որ ամէն զոհողութիւն ըրին ազգային մատենագրու-

Թիւնքը Եւրոպացւոց ծանօթացնելու, եւ օտարազգեաց ուշն եւ համակրութիւնը մեր ազգային լեզուին եւ գրականութեան վրայ հրաւիրելու :

Ներսէս Աշտարակեցին՝ Տփղիսու Ներսիսեան Դպրանոցը կառոյց 1821 Նոյեմբեր 21ին, յորում ուսումը 1824ին սկսաւ :

Այս թուականին՝ հիմնադիր Սրբազանը ամէն շաբաթ ի գործ կը դնէ, որ տեղական ոյժերով մեծ զարկ տայ նորաբաց Դպրանոցին . ուստի նոյն ժամանակի ձեռնհաս համարուած ուսուցիչներն հեռուոր տեղերէն յատկապէս հրաւիրեց ի Տփղիս . զորօրինակ՝ Մոսկուայէն բերել տուաւ Ալամդարեան Տ. Յարութիւն Քահանայն, Ղարաբաղէն՝ Պօղոս Վարդապետն, Դաւրէժէն՝ Բեդղեհեմ անուն Հայր, իսկ Փարիզէն Շահան-Ջրպետեան Յակովբը, ինչպէս որ գրած էր Պատկանեանցի Արարաքը, Ա. տարի, համար 14 . Դեկտեմբեր 9. 1850ին :

Այս մասին Հիսարեան Էֆէնտի կ'ըսէ .

«Ջրպետին Փարիզէն հեռանալուն պատճառ կը դնեն, իւր հրատարակած Հայերէն լեզուի թանձր Գերականութիւնը Չոհրապ Վարդապետը սաստիկ պարսաւելով Ասիական օրագրին մէջ, Ջրպետ ուզեց նոյն օրագրին միջոցաւ ինչինքը պաշտպանել, որն որ հրատարակիչք մերժեցին : Աս բանիս վրայ նեղացած, եւ Ներսիսեան վարժարանին յինութեանը համար հրաւիրուած՝ գնաց Ջրպետ ի Թիֆլիս : »

Այսպէս , Շահան-Ջրպետ՝ իւր գործունէութեան ասպարէզը Տփղիս փոխադրեց , Ներսէս Կաթողիկոսին հետ՝ երեք տարւոյ համար պայմանադրուելով :

Տփղիսու Ներսիսեան Ուսումնարանին սկզբնական վիճակն՝ հետեւեալ կերպիւ ներկայացուցած է 1858ին՝ մեծանուն Ստեփաննոս Նազարեանց .

« 1823 թուականին դպրոցը բացվելով եւ Մոսկվայից հրաւիրված Յարութիւն Ալամդարեանց Քահանայի գործակցութեամբ փոխուելով Հայոց զուլակների դաստիարակութեան եղանակը , Թիֆլիզի մէջ Պարոն Ապովեանը եւ նորա աշակերտակիցքս անդամփոխվեցանք նորաչէն ուսումնարանի մէջ , ուր բաց ի մի կտոր Հայերէնից կարելի էր ուսանել փոքր մի շատէ Ռուսերէն , Պարսկերէն , վերջում եւ Տրանսխարէն , երբ որ Յակոբ Շահանեան Ջրպետը հոգաբարձութեամբ Ներսէս վիճակաւոր Արքեպիսկոպոսի բերել էր տրված Փարիզից : Ապովեանը ուսանելով այս տեղ մինչեւ 1828 թ. եւ լինելով չափտհաս աշակերտներից մինը , գուցէ եւ անելի մտախոհը իւր ընկերների մէջ , նշանաւոր էր մանաւանդ թէ իւր շատ զօրաւոր յիշողութեամբ : Ապովեանը մի մեծ ուսումնի դուրս չտարաւ Ներսիսեան Ուսումնարանից (ինչպէս ոչ ոք մեզանից) , եւ անկարելի էր այդ բանը այն վայր ի վերոյ , չքաւոր ուսումնատուութեան մէջ , բայց պիտոյ է ասել արդարութեամբ , որ մի քանի կենդանի սերմեր , մի ազնիւ ձգտողութիւն դէպ ի ուսումնի յառաջացան այդ Ուսումնարանից մի քանի մասնաւորների մէջ : Եւ Ապովեանը հրաժարվելով Թիֆլիզից դէպ ի էջ-

միածին, տարաւ իւր սրտի մէջ մի վառ ուսումնա-  
սիրութեան կրակ : » (1)

Ռուսական Կառավարութիւնը 1836 ին Պայա-  
ժեհիա կամ Պոլոժէնիա (2) անուամբ օրէնք մը տուած  
է Ռուսահայոց, « Յաղագս կառավարութեան գործոց  
Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ 'ի Ռուսաստան, »  
եւ որոյ Ռուսերէն բնագիրը հանդերձ Հայ թարգմա-  
նութեամբ նոյն թուականին տպագրուած է ի Ս.  
Էջմիածին :

1866 էն ի վեր հետաքրքրուած եւ հետամուտ  
եղած եմք տեղեկանալու սոյն Կանոնագրոյ խմբա-  
գրութեան յարակից պարագայներուն, վասն զի տե-  
սած էինք որ անոր հեղինակներն կամ խմբագիր-

---

(1) Աշտարակեցին՝ սոյն Ուսումնարանը աւելի փայլեցուց,  
երբ ընդունեց Չէրքէզահայ եւ Ուսիահայ բազմաթիւ մա-  
նուկներ, եւ յանձնելով վեհօգի Պարոն Եանշեանցի խնամա-  
սարութեան ու սեսչութեան :

Այդ մանուկներն՝ որ ի սկզբան Հայերէն անգամ չէին  
հասկնար. շնորհիւ Եանշեանցի մասնաւոր աշխատութեանց՝  
ուսմունք առին եւ քահանայացան, եւ իրենց երկրին մէջ  
ուսուցիչ դարձան :

(2) Պայածէնիոյ բուն ծագման մանրամասնութիւնք եւ  
հաստատութեան պատգայք պիտի երեւին ՍԱԼՎԱՆԹԵԱՆ ՄԻ-  
ՔԱՅԷԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ կենսագրութեան մէջ :

Պայածէնիոյ Կովկասեան բարբառով Թարգմանութեան  
Նախագիրն ունի հնարիոյն Կեսարիոյ Աւաջնորդ Գեր. Տ.  
Տրդատ Վարդապետ Պալեան :

ներն ի՛նչ ի՛նչ կարեւոր եւ էական մասանց մէջ չհասկնալով Հայ եկեղեցւոյ ոգին, յաւակնութիւն ունեցած են մինչեւ իսկ մեր Եկեղեցին՝ Լուսաւորչական Հայ Եկեղեցի յորջորջելու, փոխանակ իւր բուն կոչմամբն՝ « Հայոց Առաքելական Եկեղեցի » անուանելու զայն :

Ռուսաց Տէրութիւնն՝ Պալատէնիայի հաստատութեան պաշտօնապէս ձեռնարկելով 1830 ին, Երեւանու նահանգապետ Ֆէլզ Մարեշալ Կրաֆ Փաքելիչ՝ հետեւեալ չորս անձերէն բաղկացեալ Յանձնաժողով մը կը կազմէ .

1. Տփղիսեցի Հայազգի Ժեներալ Մայօր Բենպուրօֆ .

2. Հոովմէականութենէ վերադարձած Սերովբէ Արքեպիսկոպոս (1) .

---

(1) Սոյն Սերովբէ Արքեպիսկոպոսն. որ պաշտօնազրին մէջ Վարդապէս յիշուած է, բնիկ Կարնեցի էր, եւ իբրեւ Արքեպիսկոպոս Աժսարխանայ վիճակին, ունէր Ս. Աննայի առաջին ասիճանը: Սա՛ ներկայ գտնուած է 1831 Նոյեմբեր 8, յաւուր Հրեշտակապետաց, յէջմիածին՝ Կարեցի Յովհաննէս Ը. Կաթողիկոսին օժման հանդիսին. Պատրիարք Կաթողիկոս ամենայն Հայոց Ներսէս՝ իրեն նկատմամբ՝ հետեւեալը գրած է ի 24 Յուլիսի 1856 ամի, Համար 255 մի պաշտօնական դիտողագրի մէջ՝ ուղղեալ առ Փոխարքայն Կովկասու, ի պատասխանի նորա 1856 Յուլիս 16 թուական պաշտօնագրոյն.

« Աստիճանայ Արքեպիսկոպոսն Սերովբէ եղև անդ Առաջնորդ զամս 17. յընթացս այսր ժամանակի չառաքեաց յէջմիածին եւ ոչ զմի կօպէկ, բայց եւ այնպէս պակասութիւն դրամոց ըստ հաշւոյն՝ զումարեցաւ ի վերայ նորա 120 հազար ռուբլի արծաթ, յորոց 30 նազարն միայն երեւեցաւ ի

3. Հռովմէական Հայ Բրոֆէսոր Յակովբ Եան-Ջրպետեան, եւ

4. Յունագգի Կօլլէժակի Աստէսոր Օղկինի :

Եւ, 8 Յունվար, 1830 եւ 3 համարաւ առ սոյն Յանձնատողովն ուղղած հրահանգին մէջ՝ կ'ըսէ .

«Կարծելով՝ զի այսչափ վեճմ առարկայն պահանջէ զգովանի, զմտադիր եւ զշրջանկատ դատողութիւն, ես հարկաւոր համարեցի յօրինել վասն այսր զառանձին ծածուկ Կօմիտեա, եւ ընտրեալ ի պաշտօն անդամոց նորա՝ զգեներալ Մայօր Բեհրուդոֆն, զԳրոֆէսոր Ջրպետն, զՍերովբէ Վարդապետն եւ

---

զանձարանին, եւ զայս ընտանիք նորա՝ Հռովմէական Կաթողիկ' հեռամուտ լինին իրացուցանել. մնացեալ 90 հազար բուրձիք թէ ուր ծախեցան ոչ երեւի, եւ ընդէր պարօթի այս մնալ առանց մտադուծեան՝ ես անգիտեամ .»

Սերովբէ Արքեպիսկոպոս՝ 60 հազար բուրձիէն աւելի պատաստ գումար մը եւ Յիւնուպան անունով սեպհական զիւղ մը թողած էր Ախալցխայի մօտերը, զոր Գէորգ Դ. Կաթողիկոսն օրինաւոր միջոցներով Ս. Էջմիածնի սեպհականեց .

Այդ պատճառս գումարն՝ էջմիածնայ Գէորգեան ձեմարանին շինութեան համար ծախսուած է, ինչպէս որ փորագրուած է՝ նոյն ձեմարանին ճակատը դրուած արձանաքարին մէջը՝ ՅԱՆՈՒՆ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԻՆ ԱԺՏԷՐԻՒԱՆՈՒ ըսելով, առանց Սերովբէ եպիսկոպոսին անունը յիշուելու. որովհետեւ ներսէս Աշտարակեցին՝ ամբաստանեալ եպիսկոպոսին վրայ քրննութիւններ բացած, եւ Մայր-Աթոռոյն քաւական կորուստներ պատճառելն հաստատած լինելով, սորա փոխարէն պարտական համարուած է Սերովբէն, որով իրմէ մնացած զիւղին հետ՝ այդ գումարն՝ յանուն վիճակին, Ազգային սեպհականութիւն դարձած, եւ Մոսկուայի Կայսերական դրամատան մէջ ի պահ դրուած էր երկար տարիներ .



զԳօլլէժսի Ասսեսօր Օզկինն , որ զոյգ ընդ այսմիկ պաշտօնի ունի լինել եւ գործավար Կօմիտեօի , ես բոլորովմբ կամ միամիտ թէ դուք , ողորմած Տեարք , լիապէս ունիք արդարացուցանել զիմ ապահովութիւն , լցուցանելով զեղեայն ի վերայ Ձեր զգործ կատարեալ յառաջադիմութեամբ եւ «առանց սակաւիկ իմն տարածայնութեան :

« Առաքելով ընդ սմին ըստ առանձին ցուցակի զամենայն զթուղթան , վերաբերեալս գործոյն՝ որ յաղագս կարգաւորելոյ զկառավարութիւնն Հայոց Եկեղեցւոյ , ես հարկաւոր համարիմ յարակցել , թէ պարտաւորութիւն Ձեր ունի պարունակել յինքեան զյետադայս ,

« 1. Նախ քան զամենայն պարտ է զննել ըզթուղթան , որք կան առաքեցեալ առ իս ի Նախարարութենէն եւ բաղդատել զնոսա ընդ ծանօթութեանց՝ առաջարկելոց ի Տէր ԳրօՖէսօր Զրպետէ , ունելով ի նկատի եւ զլուծումն , զոր տալոց է նա Զրպետն՝ առ հարցմունս Տայնի Սօլէտնիկ Բլուրովի :

« 2. Ածեալ այսու եղանակաւ ի կարգ հաւասարութեան զայն եւ զմիւս տեղեկութիւնան եւ լրացուցեալ զայնոսիկ եթէ հարկաւոր համարեսցի այս՝ համեմատեցէք զնոսա ընդ բարձրագոյն շնորհեցեալ Հայոց հոգեւորականութեան եւ Ազգի Հրովարտակաց , ընդ Սահմանադրութեան սրբազան կառավարիչ Սինօզին Ռուսաց ընդ հոգեւոր կանոնադրութեանց ( բէզլամէնդ ) վասն կառավարութեան եկեղեցական գործոց եւ ընդ այլ օրինադրութեանց Ռուսաց , որք կան նշանակեցեալ ի սմին եղեալ քաղուածոյն :

« 3. Հաւաքեալ ըստ կարելութեան անթերի եւ մանրամասնօրէն զամենայն՝ որ ինչ վերաբերիցի առ այս առարկայ, դուք վերահայեցիք եւ ապա զնախընթացաբար յօրինեցեալ թ Ջրպետէ Պրօէկտն (ծրբագիրն) եւ յետ ուշի ուշով առնելոյ թ վերայ այնորիկ զչրջանկատ զատողութիւն՝ յօրինեցէք միակամ համաձայնութեամբ զլիուլի հանգամանօք Պրօէկտ Մահմանադրութեան յաղագս կտաւարութեան հոգեւոր գործոց Հայ Եկեղեցւոյ, եւայլն, եւայլն :

Պաշտօնագիրը կը վերջանայ հետեւեալ եզրակացութեամբ .

« Ես բոլորովին քաջայոյս եմ զի յայտնի հմտութիւնք ձեր եւ եռանդաւորութիւն առ ծառայութիւն Նորին Կայսերական Մեծութեան արդարացուցանելոց են զիմ առ Ձեզ յանձնարարութիւն յայսմիկ վսեմ գործոյ : »

Վերոյիշեալ Յանձնախումբն ըստ հրահանգի խումբագրելով առաջադրեալ Պալատէնիան՝ Կայսերական հրովարտակաւ հաստատուած եւ հրամայուած է թ գործադրութիւն 1836 Մարտ 11 ին :

• •

Պալատէնիայի յղացումը կ'սկսի 1828 էն, եւ Ֆէլզ Մարէշալ Կրաֆ Բասքելիչի վերոյիշեալ պաշտօնաթղթէն ալ յայտնապէս կ'իմացուի, որ Պալատէնիայի յօրինման համար կանխաւ խորհրդակցութիւններ տեղի ունեցեր են Յակոբ Շահան-Ջրպետեանի հետ, որոյ նախաձեռնութեամբ Պալատէնիայի նախագաղափարն ծրագրուեր, եւ 1830 ին պաշտօ-

նապէս ի հանդէս բերուեր է : Յանձնաժողովոյ միւս երեք անդամք եւս անուանուած են Երեւանու Նահանգապետին կողմանէ :

Իբրեւ միջանկեալ , ըսեմք նաեւ թէ՛ 10 Գլուխ կամ 141 յօդուածներէ բաղկացեալ եւ հաստատեալ Պալատէնիայի Ռուսերէն բնագիրն՝ առաջին անգամ պաշտօնապէս ներկայացուած է Կարբեցի Յովհաննէս Ը Կաթողիկոսին՝ Յանձնաժողովոյ Հայազգի անդամ Բեհբուդեանց իշխանի ձեռօք՝ ի գործադրութիւն , եւ որ ի Հայ թարգմանուած է Ս. Սինոդի Ատենադպիր Մկրտիչ Գարտաշեանցէն (1) :

Շահան-Ջրպետ՝ Ներսիսեան Վարժարանին մէջ Ֆրանսերէնի դասատուութեամբ հանդերձ , կէս-տեսչութեան կամ Դեր-Տնօրէնի պաշտօնն եւս վարած է քանի մը տարիներ եւ ապա հրաժարած :

Յետոյ , Ռուսիոյ տէրութեան կողմանէ առանձին թոշակ կ'ընդունէր :

Այս մի վարձատրութիւն էր Գրաֆ Պակեվիչի կողմէն Պալատէնիայի նախագիծն իրեն հետ համաձայնութեամբ պատրաստելու համար :

---

(1) Գարջաշեանց թաղուած է յէջմիածին , ի շարս Կաթողիկոսաց :

Երբ Ներսէս Աշտարակեցին կաթողիկոսանալով ի Մայր Աթոռ կուգայ , ուր Եպիսկոպոսներն միանալով՝ Նորին Վեհափառութեան կը ներկայանան եւ կը զանգատին թէ՛ «այս ո՞վ էր , որ բարձրաստիճան եկեղեցականաց կարգին մէջ պիտի հանգչի» :

Առ այս պաղ արեամբ կը պատասխանէ Աշտարակեցի Կաթողիկոսն՝ «է՛հ , այսչափ հովիւներուն պահապան մը պէտք է» :

Պատկեզիչ ընտրած էր այնպիսի անձինք, որոնք Հայոց Եկեղեցւոյ ոգւոյն խաղառ անգիտակ էին, քանզի Հայոց անուամբ եղածներն դաւանափոխներ էին :

Շահան-Ջրպետ՝ փափաքելով որ անգործ չմնայ, եւ հրապարակին վրայ պաշտօնական զբաղմունքով մը երեւի, Տիկնոջը հետ միանալով մասնաւոր վարժարան մը բացաւ ի Տփղիս, ուր Հայերէն եւ Փրանսերէն դասեր կուտար : Աղջկանց Փրանսերէնի դասերը՝ Տիկինը կ'աւանդէր :

Ջրպետ՝ իւր վարժարանին գոյութիւնն բաւականին ապահովցուցած էր, ստանալով ոչ միայն երկսեռ աշակերտներէն ամսական թոշակ, այլ եւ տեղական Կառավարութենէն պարբերաբար՝ կլորիկ գումարներ :

Սիրելի հանդիսացած էր՝ ոչ միայն Ռուս ակաւնուոր պաշտօնատարաց, այլ եւ Տփղիսու վիճակաւոր՝ Կարբեցի Յովհաննէս Արքեպիսկոպոսին (ապա, Կաթողիկոս) մտերիմն եւ խորհրդականն էր, ինչպէս կը վկայէ նաեւ Լազարեանց Ճեմարանի 25 ամեայ բազմարդիւն կրօնուսոյց եւ երկասէր Մսեր Մազիստրոս Մսերեանց, 1827—1831 ի էջմիածնայ վիճակին նկատմամբ տողած Վէպին մէջ, որ Պատմութիւն Կաթողիկոսաց էջմիածնի մակագրով երկասիրութեան վերջին հատուածն է :

Շահան-Ջրպետ՝ ընդ միշտ յարաբերութեան մէջ կը գտնուէր թղթակցութեամբ՝ Աժտերխանայ Սերովբէ Արքեպիսկոպոսին<sup>(1)</sup> հետ :

(1) Ոոյն Սերովբէ վարդապետ՝ եփրեմ Կաթողիկոսէն ընդունած է իւր Եպիսկոպոսութիւնը :

Եղեասցի Բրօֆէսէօրը՝ իւր ապրուստն եւ կապուստն ապահովեալ նկատելով, վերոյիշեալ թէութիւններով մտազբած է բողբոջին հաստատուիչ Տփղիսու մէջ, եւ 10 տարիներու մօտ ապրելով անդ, ըստ ոմանց ի Փարիզ կը վերադառնայ, եւ ըստ այդոց՝ Տփղիսէն հեռանալով՝ ուրիշ քաղաք մը կ'երթայ եւ կը վախճանի օտարութեան մէջ 1838 թն. (բառ Բագմալէպի՝ 1834), ի հասակի վաթսուսն եւ վեց ամաց :

Շահան-Ջրպետի կենաց նկարագրին մանրամասն գծերն աւելի զինքը մօտէն քննողները կրնան գիտնալ, ինչպէս որ գիտէր Տ. Գարրիէլ Աւագ-Քահանայն, որ իւր մի անտիպ երկասիրութեան մէջ՝ գրած է Շահան-Ջրպետի նկատմամբ ընդարձակօրէն, եւ որոյ հետ Շահան-Ջրպետ չափուած է՝ իբրեւ ժամանակակից ուսումնական եւ լեզուագէտ անձն :

Եթէ չեմ սխալիր, կը յիշեմ որ՝ Պետարապետյ եւ Նոր-Նախիջեւանի Առաջնորդ՝ Այվազովաքի Գարրիէլ Եպիսկոպոսն հովուական շրջաբերական մը գրած էր, որոյ դէմ երկարածիզ քննադատութիւն մը գրելով վերոյիշեալ հմուտ Աւագ Քահանայն, ի մէջ այլոց, չեչտած եւ խստիւ ձաղկած է ի Հռովմէականութենէ՝ կրից բերմամբ եւ կամ շահու ակնկալութեամբ՝ վերադարձող վեզարաւորներն եւ գործիչները :

---

Իբրեւ գրական գործ՝ ԵԱՂԻԿ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ անունով գիտնական մասեան մը յօրինած է 52 պատկերօք, ի պէս զպրօցաց, օպեալ ի Մասկուա, 1819 :

Սոյն քննադատութեան մէջ՝ ոչ նուազ ակնարկներ ուղղած է Տփղիսու ութիւններով (մեր բազը չէ՛) լեցուն Դպրանոցին նկատմամբ, չինայելով միանգամայն իւր սուր սլաքներն՝ այս առթիւ նաեւ Շահան-Ջրպետի մասին, եւ այսու՝ լաւ մը հարուածած է զմեծանուն Գաղղիարանն ։

Գարրիէլ Աւագ Քահանայի սոյն ձեռագիր երկասիրութիւնը, ինչպէս նաեւ մեծահամբաւ նախկին Կաթողիկոսի մը դէմ տողած կենսագրական մի ուրիշ դառն քննադատութիւնը տեսած եմ Գէորգ Դ-ի գիւանատան մէջ<sup>(1)</sup> ։

Շահան-Ջրպետի ձեռագրաց հաւաքածոյն, կամ գրական հատակոտորքն՝ չեմք գիտեր թէ՛ այս պահուս որո՞ց քով կը մնան, սակայն յէջմիածին կը լսէի թէ՛ մասնաւորաց քով պահուած քանի մը կարեւոր ձեռագիր նամակները կը գտնուին ։

Չեմ գիտեր թէ՛ զՅԱԿՈՎԻՐ ՇԱՀԱՆ-ՋՐՊԵՏՆ կրցա՞յ ըստ արժանւոյն ներկայացնել ։

Կը տարակուսիմ ։

---

(1) Չմոռնամք յիշեցնել թէ՛ Մասթէոս Կաթողիկոսի Բարի մարդ եւ բարի ֆրիսոնեայ անուն հեղինակութեան դէմ Միսիօսուաց գրած քննադատութեան յԱնգղիարէնէ ի Հայ Թարգմանուած ձեռագիրն ալ՝ վերոյիշեալ երկու ձեռագրաց հետ միասին կը գտնուէր ։

Ե.

## Տ Ի Ր Ա Ց Ո Ւ - Մ Ի Ք Ա Յ Է Լ

Ընդ հովանեաւ Ս. Հրեցակապե՛տ Եկեղեցւոյ երկար տարիներ գրող եւ ապրողներէն էր նաեւ Տիրացու-Միքայէլ, որ ծնած է ութեւտասներորդ դարու երկրորդ կիսոյն սկիզբը: Թէեւ մոռացութեան տրուած, եւ սակայն գնահատութեան արժանի անձնաւորութիւններէն մին է Տիրացու Միքայէլ, որոյ ժողովրդական անմեռ տաղաչափութիւններն յուշագրաւ տեղ մը կրնան գրաւել Աղգային մատենագրութեան մէջ, եթէ նախաձեռնարկ բանասէրն օր մը հաւաքելով զայնս՝ ի լոյս ընծայէ:

Սոյն տաղաչափութիւններէն մի քանի գրական պատառիկ՝ իբրեւ նմոյշ, մեր անձնական յուշատետրին մէջ պատրաստ կը գտնուէին, զորս հրատարակութեան տալ կը փութամք՝ հեղինակին քանի մը կենսագրական գծերովն հանդերձ, յուսալով որ ոչ միայն ճաշակ մը տուած կը լինիմք այսու նորա նրկարագրին, այլ միանգամայն զրգիւ մը՝ հետաքնին բանասիրին:

Տիրացու-Միքայէլ բնիկ Պասրացի է, ծնած 1760 ին ժամանակները, եւ ի Պոլիս գաղթելով՝ իրեն բընակավայր կ'ընտրէ Պալատ, Ամիրայից երկրորդ ուտանն<sup>(1)</sup> եւ կը հաստատուի թաղին դուրսը Տէյիբ-

---

(1) Ժամանակակից Ամիրայից առաջին ուսանն համարուած էր Ոոկեղջեր Խասգիւղի արուարձանը:

մէնճի, կամ լաւ եւս հացագործ-Համբարձումին փուռն եւ ջաղացքը, ո՛ւր անցուցած է պանդխտութեան գրեթէ բոլոր տարիներն :

Սակայն Միքայելին մշտնջենական կայանը՝ ջաղացքը չէր . գրեթէ հանապազօրեայ ժամադրավայրն էր Ս. Հրեշտակապետ Եկեղեցւոյ բակը, ուր կը դիմէր ընդ այգն այգուն եւ երեկոյին ի ձայն կոչնակի, իսկ ցերեկները ընդհանրապէս ճաշի կը հրաւիրուէր լուսահողի Մեծ Հիւնքեարպէյէնտեան Խանէֆան Քահանայէն, որուն սիրականն էր :

Հին Պալատցիներէն ո՛վ չգիտէր, ո՛վ չսիրէր Տիրացու Միքայելը, որ իւր ճաղատ գլուխը չալմա (1) կը կապէր, հագուստին վրայէն երկայն ապա մը կը հաքնէր, որ բնաւ հիննալիք չունէր, եւ մշտանորոգ ֆօսիւմն էր, բայց եւ այնպէս՝ սոյն անպաճոյճ հանդերձով իսկ ամենուն համակրանքն եւ սէրն առ ինքն ձգած էր Տիրացուն :

Կերած հացին դրամ չէր տար Միքայել . Համբարձումին փուռէն ձրիաբար կը տրուէր իրեն :

Բաղգին հեգնութեանը մատնուած մարդ մ'ը որ մի տեսակ փիլիսոփայութիւն կը ծախէր :

Առանց տառախալի՝ սքանչելի մարգարտի պէս գիր կը գրէր :

---

(1) Զարմային՝ ի Պոլիս բազէն կ'ըսեն վաճառականական լեզուաւ . իսկ ի գաւառս, չաշնա կամ շերպէթա, որ չորս կանգուն երկայնութեամբ ներկուն կտաւ մ'է, առ հասարակ սել գոյն . իսկ նաւավարք եւ ձկնորսք կ'ընտրեն շաճիպէթս գոյնը :



Օրերուն մեծ մասը կը զոհէր՝ Վարդապետաց համար Քարոզազիրք օրինակելով, Քահանայից գրե-  
րը պատրաստելով :

Ասոնցմէ զառ, տարին երկու հարիւր զուրուշէն  
աւելի գումար մ'ալ բարեպաշտ անձանց առատու-  
ձեռնութենէն կը շահէր, ամէն առաւօտ եւ երեկոյ  
Պալատու Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ դուռը  
կենայով, առանց ձեռք բանալու :

Պալատու ժողովուրդը շերմնոանդ է, եւ Հրեշ-  
տակապետ Եկեղեցին՝ շերմնոանդներու ժամագրա-  
վայր մ'է առաջուց ի վեր : Լուր օրերն իսկ՝ 200 ժո-  
ղովուրդ կը յաճախէ անդ : Ուստի հարուստ եւ ար-  
հեստաւոր՝ անպատճառ բան մը պիտի վճարէին մեր  
Տիրացու-Միքայէլին, որոյ ամենէն մեծ եկամուտն  
էր սակայն՝ օրինակելի բաւականասիրութիւնն :

\*  
\* \*

Օր մը Տիրացու-Միքայէլին սիրտը հելլվայ կ'ուզէ՝  
Սրտին այս գաղտնիքը, կամ լաւ եւս, ստա-  
մոքսին ստիպողական պահանջքը՝ անպատրուակ կը  
յայտնէ Հիւնքեարպէյէնտեան Հօր, որ Սա հետեւ-  
եալ աւուր համար ղինքն ի ճաշ կը հրաւիրէր :

Հիւրասէր եւ բարեսիրտ Քահանայն՝ սիրով կը  
խոստանայ, շարժու-Միքայէլին մէտէին ուզած հել-  
վան պատրաստել տալու ի տան :

Հետեւեալ օրն՝ երբ Տիրացու Միքայէլ կ'երթայ  
Հիւնքեարպէյէնտեանի տունը եւ խորիծի կամ հել-  
վայի հոտ շահնէր, իսկոյն կ'զգայ թէ՛ Տէր-Հարը  
մոռցած է պատրաստել տալ զայն, ուստի ճար-

աարազիւան Գառային՝ բանաստեղծութեան մը կը գիտէ՝ Դաւթի քնարէն փոխ առնելով : Կարճոր թուղթ մը կուզէ , եւ վրան Նախամարգարէին հետեւեալ խորհրդաւոր պարբերութիւնը կը գծէ՝ տանգուխ գրերով եւ նարտար մտածութեամբ .

« ՅԻՇԵՎ ԶԲԱՆ ԾԱՌԱՅԻ ՔՈՒ ՅՈՐ ԵՒ ՅՈՒՍԱՑՈՒՑԵՐ ԶԻՍ . »

Պալատցի սրամիտ Քահանայն անմիջապէս կուհելով Միքայէլի սրախօսութիւնն , եւ ճիշտ Բնիկն , անմիջապէս կը յիշէ ըրած խոստումն , եւ վաղվադակի կը հրամայէ՝ որ Տիրացու-Միքայէլին ուզած հելլան պատրաստուի :

\*  
\* \*

Պալատու Եկեղեցւոյ շինութեան տարին , 1835 թուականին , Տիրացու-Միքայէլն 75 տարեկան էր կ'ըսեն , այն ինչ Գառզիւղի մեր սիրելի Հիւնքեարպէյէնտին հազիւ հնգետասանամեայ՝ կը յաճախէ եղեր Միքայէլի քով , գրականութեան նկատմամբ ներշնչումներ եւ հովեր առնելու համար :

Նոյն տարին Տիրացու-Միքայէլի համար ամենէն աւելի ժողովրդական տարին էր , յորում բաւական գործօն դեր կատարած է , նոյն Եկեղեցւոյ շինութեան համար՝ կիր կրած , կոնակովը քար շալկած գողողոլուն ձեռքերով խօրհան ծեծած է :

Ո՛չ միայն այսչափ : Այլ ուրիշ բարեպաշտներն ալ ի գործ մղելու համար՝ սրտաշարժ բայց աշխոյժ գեղեցիկ տաղեր , երգեր կը յօրինէ եղեր :

Եկեղեցւոյ շինութեան ի նպաստ՝ սափրիչ ար-

հետաւորք Տաճարին դուռը գանձանակ մը պիտի  
կախէին Տիրացու-Միքայէլէն կը խնդրեն որ ոտանա-  
ւոր մը գրէ , գանձանակին վրայ փակցուելու համար :

Տիրացու-Միքայէլ ամենայն սիրով եւ յօժարու-  
թեամբ ընդունելով սոյն հոգեսէր առաջարկ, վայրկե-  
նական տպաւորութեան ներքեւ գրած է հետեւեալը ,

« Պանծա՛ Պալատ փառօք մեծաւ ,  
Քո սուրբ պայծառ Եկեղեցեաւ ,  
Անունն ասի Հրեշտակապետք ,  
Օրհնեալ հօտ իւր պատուեալ եւ պետք :

Ո՛վ ժողովուրդ հաւատացեալք ,  
Ի բնէ անտի էք գովեցեալք ,

. . . . .

. . . . . (1)

Որք յայս կրպակս առնէք ելմուտս ,  
Ի դաձանակս կուտեցէ՛ք կուտս ,  
Պալատու սուրբ Եկեղեցին ,  
Հրեշտակապետք ընդ Ձեզ լիցին :

Հոգեվար օրն զհոգիս ձերոց ,  
Տարեալ մուծցեն յարկս արդարոց ,  
Յորժամ գայ Տէրն ի դատաստան ,  
Ածցէ զՁեզ ի դարաստան :



« Վարպետ սափրիչ վարսավիրայ ,  
Զմարդիկ ի դուրս հրաւիրեա՛ն :

(1) Այս տողերը կը պակսի յուշատետրիս մէջ :

Պատրացի Տիրացուն զուարճարան էր եւ սրահոս :  
Օր մը յիւսկիւտար հիւր կ'երթայ , տանը մէջ  
մուկներէն կը պաշարուի եւ անքուն մնալով կը գրէ .

Ի Պալատէ դէպ յիւսկիւտար ,  
Ելեալ գնացի առնել դադար ,  
. . . . .  
. . . . . (1)

Եւթուշ ձգուած էր դէպ ի հարսու ,  
Բէրէն խածնէր ամէն Բարօճ ,  
Ձիւնի գլխուս օրթան Գող էր ,  
Թախապէսէն հոն ուրախ կը վազէր :

Ձախ ականջիս դրսի դռնէն ,  
Սէլքե-Բեկը չալէր շառնէն ,  
Մէկն ալ խածնէր թեւիս Գամբ ,  
Պերպէր եղաւ ինծի համար :

Շապիկս ըրին կարմիր պախճ ,  
Քեզ նզովէ մեր հին խախամ .  
. . . . .  
. . . . . (2)

\*  
\*  
\*

Տիրացու Միքայէլի գլուխն , որպէս յիշեցինք ի  
վեր անդր , Գող էր : Երբ օր մը՝ գլուխը շառն կա-

---

(1) Այս տեղ ալ երկու տող վրիպած է Յուշաստեղէս :  
(2) Շարունակելի վերջին տողերը չունիմ . Շնորհակալ կը  
լինէինք , եթէ պակաս տողերն գիտցողները մեզ հաղորդէին :

5

պած՝ Պոլսոյ Տէվէխանէին առջեւէն կ'անցնէր Գարակէօմրիւկի Եկեղեցին երթալու համար, ուղտին մէկը՝ Տիրացուին շէնք գլխէն կը թռցնէ: Միքայէլ՝ գլխաբաց կը մնայ, եւ սաստիկ նեղանալով, բարկանալով եւ սրտամտելով կը գրէ ի մէջ այլոց, հետեւեալ երկտողն՝ ուղղեալ առ ուղտն շէնքայարարձ.

« Ոտքերդ մաշեն քարոտ լեռներ,  
Ջուր չի գտնես աղբիւր կէօւերն », եւայլն:

Ո՛ր է հիմայ Պասրաղւոյն սոյն պատմական շէնք, եւ ո՛ր կը մնան անոր թողած ներշնչուն բախաստեղծութիւններն:

Հարկ չկայ ըսելու թէ, կամ կորսուած է, եւ կամ էջմիածնայ Թանգարանը եւ Մատենադարանը տարուած են, ձեռամբ շարականագէտ Պալատցի Պաղտատլեան Տիրացու Կարապետի (1):

---

(1) Հարկ կը համարիմք ծանօթացնել թէ՛ Տիրացու Կարապետ՝ մակունտուամբ Պաղտատլեան է, եւ ո՛չ, ըստ Ե. Տընսեսեանի հրատարակութեան, Դերձակեան:

Տիրացու Կարապետ՝ յայնսի շարականագէտ Մինէճեան Սիմոնի հօրեղբայր՝ Պալատցի երեւելի շարակներգու Մինէճեան Յովհաննէս Վարժապետի — որ Օրթագիւղէն իւր բնակութիւնը փոխադրած է ի Պալատ — աշակերտներէն է, հնգիցս յէջմիածին գնացած, եւ եօթն տարիներ (1867—75) անխափան դասառուութիւն ըրած է անդ:

Տիրացու Միքայէլի կենսագրական մասերն՝ փա-  
փաքելի էր, որ ամբողջութեամբ ի լոյս ընծայէինք .  
ասկայն մենք՝ մեր գիտցածն ուրուագրեցինք . մնաց-  
եալն՝ ժամանակակցաց կոչում կ'ընեմք հրատարա-  
կելու, խնդրելով որ յայտնեն թէ՛ վախճանման  
թուականն իրօք 1847 է՞, թէ՛ աւելի կանուխ :

---

1860-1864ին, երեք եւ կէս տարի ալ յժուստղէմ նոյն  
պաշտօնը վարած է :

Այս անձ՝ այնքան նախանձախնդիր եղած է Հայաստան-  
եայց Ս. Եկեղեցւոյ երգեցմանց իսկականութեան եւ անվիշպ  
պահպանման, մինչ զի Միւռոն օրհնէից յատուկ — ԴԶ. Հայր  
Ամենակալ—Շարականին բուն եղանակին ի խնդիր 1858ին  
յԱղթամար, եւ 1864ին ի Սիս ուղեւորած է, որպէս եւ յԵ-  
միածին Տ. Տ. Մասթէի եւ Գէորգայ Կաթողիկոսութեանց օ-  
րերով, ըսյց խնդրելին դժբաղդարար չէ ձեռք բերած, եւ կը  
խոստովանի իսկ թէ այժմու ծոյնագրեալ Շարականին —  
«Հայր Ամենակալ» ի երգօքանութիւնը իւր յատուկ նախնա-  
կան եղանակը չկրէր :



Ը.

Տ. ԵՐԵՄԻԱ ՔԱՀԱՆԱՅ ԵՐԱՄԵԱՆ

Մեր տղայութեան ատեն՝ Մայրաքաղաքիս մէջ զոյգ մը Տէր-Երեմիաներ կային, մին՝ ի Խաազիւղ, եւ միւրն՝ ի Գում-Գարու :

Առաջինն՝ Տիրացու Վրթանէս, ժամանակին մեծանուն Հայկաբանը, Տրամարանը, Տօմարագէտը եւ Աստղաբաշխը լինելու փառասիրութիւնն ունենալով, օր մը Տ. Երեմիա<sup>(1)</sup> անուամբ Քահանայացաւ Խաազիւղի Ս. Ստեփաննոս Եկեղեցւոյն համար, եւ 32 տարիներ անընդհատ ազգային Օրացոյցն յօրինելու եւ տպագրելու առանձնաշնորհութիւնը վայելեց :

Երջանկայիշատակ Ներսէս Պատրիարքի օրով

---

(1) Սոյն Հայկաբան եւ Օրացոյց շինող Տէր-Երեմիա Քահանային աշակերտուհիներէն էր իմ վաղամեռ մայրս՝ Տիկին Բըռլանթի Յ. Այվազեան, որոյ՝ գեղեցիկ ոսկեզօծ եւ փոքրադիր Սազմասարան մը նուիրած էր Նորին Արժանապատուութիւնն, ի յաւերժական յիշատակ ուսանողութեան :

Սոյն Թանկագին եւ րնտելագոյն յիշատակն՝ մայրս գուրգուրանօք կը պահէր, եւ առաւօս եւ երեկոյ անոր մէջէն քաղուած կ'ընէր :

Տէր-Երեմիա Քահանայն փետայացած է Մայր-Եկեղեցւոյ Տէր Յարութիւնեան Տէր Մեսրոպ Քահանային, որ արդէն մեծահռչակեալ էր 1826ին շինած եւ հրատարակած Հայերէն Եզուի Քերականութեամբը :

սոյն առանձնաշնորհութեան իրաւունքն՝ այրիացեալ Երթցունիներու յատկացուեցաւ, յետոյ նոր տնօրինութեամբ Ս. Փրկչեան Ազգային Հիւանդանոցի հաստատութեան սեպհականութիւնն պարձաւ, եւ շարունակուեցաւ մինչեւ ց1892:

Այժմ մեր նպատակէն դուրս է սոյն Խառնակի Ս. Ստեփաննոս Եկեղեցւոյ Տ. Երեմիա Քահանային կենսագրութիւնն ի հանդէս բերել:

Իսկ երկրորդն է՝ Մայր-Եկեղեցւոյ Տէր-Երեմիա Քահանայ Երամեան, որ +ՆԻԹԻ տիտղոսով ընդհանրապէս ճանչցուած էր, քիմիաբանութեան հետեւելուն համար:

Ահա՛ այս Քահանային հակիրճ կենսագրութիւնը կը ներկայացնեմ աստանօր:

\*  
\*  
\*

Քոստանտնուպոլս լեզու գիտցող Քահանայ (1) ունեցած եմք, սակայն քոստանտնուպոլս արհեստներ գիտցող Հայ Քահանային գոյութիւնն ո՞վ կը յիշէ:

---

(1) 30 տարիներ առաջ Երեւակ հանդիսի մէջ կարգացած եմ թէ՛ թ Պուրէշ ճանապարհորդող մը, շրջակայ գիւղերէն մէկուն մէջ պատահած է Աբրահամ նահապետին իւր զգան զոհելու ժամանակին տարիքն ունեցող գիւղացի Քահանայի մը, որ իրեն ցոյց տուեր է Հայր մերին քոստանտնուպոլս լեզուով Թարգմանութիւնը, ճանապարհորդը կը հետաքրքրուի եւ կուզէ իմանայ հեղինակութեան բուն տէրը: Գիւղին Քահանայն կը պատասխանէ եւ կը հաստատէ Ֆրանսերէն լեզուաւ թէ՛ նոյն ինքն է գրողն, Հայու, Ասորիի, Գիւսանիի, Սանսրիդի,



Մեր մէջ գրեթէ աւանդութեան կարգն անցած է թէ գործ չունեցողներն, արհեստին մէջ անյաջող եղողները Քահանայ լինելու հետամուտ կը գտնուին, իսկ ճարտար արուեստագէտներն՝ ընդհանրապէս քահանայութենէն կը խուսափին։ Սակայն Տէր-Երեմիա Երամեան՝ այդ վերջի դասակարգէն չէր։

Տէր Երեմիա՝ բնիկ Բիւթանիոյ վիճակէն էր, Պրուսայու առաջնորդութեանը տակ Կէմէյիկի գիւղերէն՝ Գարսաքի <sup>(1)</sup> մէջ ծնած 1805ին, եւ Մանուկ անուամբ մկրտուած։

---

Արապի, Զէրքէզի, Քիւրճի, Աճէմի Խփօթի, Թուրքի, Ուլսհի, հին Յունարէն, նոր Յունարէն, Ռուսերէն, Լաթիներէն, Մաճառերէն, Լեհերէն, Գերմաներէն, Գաղղիերէն, Իտալերէն, Անգղիերէն, Սպանիայեաց, Փորթուկալի, Չինացեաց լեզուներով, մանաւանդ աւելի կը հիացնէ զուղեւորն՝ երբ արծաթ դրամ մը կը ցուցնէ անոր, վրան Տէրունական աղօթքը յիշեալ լեզուներով գրուած կամ փորագրուած։

(1) Բիւթանական գիւղերուն մէջ ոչ միայն լաւ ոգ ունեցող գիւղերէն մին է Գարսաք, այլ պարզ եւ բաւական ազնիւ երեք տեսակ ջուր ունի, Քրիստոսուրի ջուր, Կամըշլըք եւ Գոյջաք չէշմէսի։ Սոյն գիւղը 120-125 տուն եւ դուռ ունի։ Ս. Աստուածածին անուամբ եկեղեցի մը կայ՝ որ կառուցեալ եւ օծեալ է 57 տարիներ առաջ, Արմաշու միաբան Վանեցի Պետրոս Վարդապետէն։ Գիւղն՝ Քաղականէ զատ, ծերակուօթ ժողով ունի։

Իբր 300 տարուան գիւղ մ'է սա. ի սկզբան՝ հիմակուան գիւղին վրայ էսկի-Քէօյ ըստուած տեղը կը բնակին եղբեր եւ դուռ հոն Քիչիսէ Եւրի կ'ըսեն՝ բարձր տեղի մը համար։

Այս հին գիւղին դէմը լեռան վրայ ձենովացիներէն մնացած Զիսար անունը դուռ պահող փլատակ պարիսպ մը կայ, որուն ներքեւ քարայր մը կը գտնուի, եւ յորում ի հին ժամա

Մանուկ՝ հնգետասանամեայ հասակին մէջ Արմաշու Վանքը գազած, եւ միաբան գրուելով՝ Հայերէն եւ Իտալերէն կ'ուսանի: Չարխափան Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ Լուսարարութեան պաշտօն կը վարէ., եւ ապա Վանքին դպրոցին մէջ վարժապետութեամբ կ'ըբազի:

13 տարիներ յԱրմաշ մնալէ յետոյ Մայրաքաղաքս կուգայ, եւ այն ատենի Պատրիարքութեան Գարտուղար եւ հոգաւոր Անդրէաս Վարդապետին ձեռամբ Լանկայի Ս. Լուսաւորչեան Վարժարանին Հայկաբան դասատու կը կարգուի: Քիչ յետոյ, 'ի Պալատ՝ Խորէնեան Վարժարանը կը մտնէ մի եւ նոյն պաշտօնով:

Ապա Տիրացու-Մանուկ՝ Մայր-Եկեղեցւոյ Մայր Վարժարանին մէջ Խոֆայտեան (դպրոցական կառավարիչ ըսել է, որ միանգամայն երկրորդական դասատու է) պաշտօնի կոչուած է, ինչպէս նաեւ 1844 ին Կէտիկ-Փաշայի Ս. Յովհաննէսեան նախկին այրացուեր Վարժարանին մէջ ալ սոյն պաշտօնը կատարած է, երբ Կապուտիկեան հանգուցեալ Յովհաննէս Եպիսկոպոս, յայնժամ Սարկաւազ-Մարտիրոս, անդ Հայկաբանութեան, Թուարանութեան եւ Գեղազրութեան դասերը կ'աւանդէր:

---

նակաց մնացեալ խեցեղէն եւ հողեղէն ամաններէն՝ կտրմիր գոյններով կոթարուք կ'սն, նաեւ շիշ, ծորակ, եւ սղիւսք կը գտնուին դեռ:

Գարսագցիք ի Կարս քաղաքէ եկած կը թուին, եւ Կարսակ ըսելով իբրեւ պզտիկ Կարս մը շինեւ են այդ գիւղը:

Տիրացու-Մանուկ սոյն վարժարանին մէջ օր մը չարածճիկ տղուն մէկուն կռնակին Ռալ (1) մը կը նետէ ու ժգին, որ խսկոյն երկու կտոր կ'ըլլայ :

Ասոր վրայ Տիրացու-Մանուկ հետեւեալ օրը պաշտօնանկ եղած է : Քիչ յետոյ ի Ֆէնէր թագ՝ Ֆասուլեաճեան բնակարանին մէջ վարժապետութեան կը հրաւիրուի, յորմէ վերջը՝ Միսաք Ամիրայի տունը Նորին պայազատաց ուսուցչութիւնը կ'ստանձնէ, եւ յետոյ՝ ի Գանտիլլի Աշնանեան Պօղոս Ամիրայի ծովեզերեայ տանը մէջ մի եւ նոյն պաշտօնը կը շարունակէ :

\*  
\*  
\*

Սակայն Տիրացու-Մանուկ Երամեան՝ ընդհանուրին ծառայութեան նուիրուած մէկը լինելով, չը փափաքեցաւ երկար մնալ հարուստ մասնաւորաց եւ ամիրայական պայազատաց քով կրթական պաշտօնիւ, այլ իւր կոչմանը համեմատ՝ ուզեց ընդհանուրին կրթութեանը ծառայել, ուստի նորէն կը վերադառնայ Մայրաքաղաքիս մէջ իւր անդրանիկ պաշտօնավայրն եղող Ս. Լուսաւորչեան վարժարանը, ուր մեծ պատուով կ'ընդունուի ժամանակին Խնամակալութենէն :

Սոյն պաշտօնավարութեան միջոցին Անդրէաս վարդապետի յատուկ պաշտպանութեամբը կ'ամուս-

---

(1) Հարկ չկայ ըսելու թէ՛ հին ասեն քաթը գանահարու-  
թեան առձեռն զործի մ'էր :

նանայ Տիրացու-Մանուկ, յԵէնի-Գաբու բնակող հռչակաւոր Չուպուզնու Ռափայէլ Աղայի Սրբունհի անուն դատեր հետ՝ 1847 ին :

Տիրացու-Մանուկ՝ ըստ որում անբասիր բարոյականի տէր անձ մը, եւ իւր ինքնաշխատ արուեստական ձեռնարկներովը՝ ըստ բաւականին նիւթապէս անկախ, 1848ին, Գատրգիւղի Ս. Թագաւոր Եկեղեցւոյ մէջ՝ Մատթէոս Պատրիարքէն Քահանայ կը ձեռնադրուի Տէր Երեմիա անուամբ, Ռուժմանիոյ Ֆօքչան քաղաքի Ս. Աստուածածին Եկեղեցւոյն համար :

Կ'երթայ իւր վիճակեալ տեղը, եւ անդ տարի մը պաշտօնավարելով ի Պոլիս կը վերադառնայ, եւ Պօյաճի գիւղ Երից Մանկանց Եկեղեցին կը ղր'ղուի առժամանակեայ . եւ յետոյ, Մայր-Եկեղեցին հաստատուելով, կը քահանայագործէ մինչեւ ցլախճան իւր կենաց, 1882 :

\*  
\*  
\*

Հանգուցեալ Տէր-Երեմիա Քահանայն թէեւ միշտ առջեւը կը նայէր, բայց աշխարհ ամենայն կը տեսնէր :

Գիտէր նա ինքնօգնութեամբ՝ ոսկերչութիւն, ատաղձագործութիւն, տակառագործութիւն, դերձակութիւն, դարբնութիւն, փակեղաշինութիւն (1),

---

(1) Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ Աթոռակալ հանգուցեալ Տ. Յովհաննէս Յունագէտ Քահանայն ալ Եկեղեցականաց համար փակեղ եւ պատարագի զգեստ շինող էր, եւ

եկեղեցական զգեստի շինութիւն, վեղարաշինութիւն, սաղաւարդաշինութիւն, չաթալ-թագաշինութիւն, եւ ի մասնաւորի՝ նշխարքի կաղապարաշինութիւն, վեցհազարեայի գիտութիւն, ինչպէս նաեւ ուրիշ կարգ մը ձեռարուեստներ, բայց ամենէն աւելի քիմիագիտութեան կը հետեւէր, պղինձ մտազն ոսկւոյ վերածելու համար: Մայր-Եկեղեցւոյն սաղաւարտներն՝ մեծ մասամբ, իւր ձեռագործներն են: Նորին Սրբութիւնը՝ նրբակերտ եւ գեղակերտ նշխարքի կաղապար շինող<sup>(1)</sup> էր:

Մայր-Եկեղեցւոյ բոլոր Քահանայներու քով զըսնուած նշխարքի կաղապարներն՝ Տէր-Երեմիա Քահանային փորագրած եւ շինածներն են:

---

փափկածաշակ եւ նրբակերտ հայրապետական չաթալ-Պագներ յօրինելու արուեստին մէջ մասնագիտութեան համբաւ կը վայելէր:


Պրուսայու նորոգ հանգուցեալ երաժշտապետ Տէր Գասպար Քահանայն եւս ոչ նուազ արուեստագէտ էր: 32 տարիներու մէջ 10,000 հոգիէն աւելի անձինք պատուասած էր. եւ կ'զբաղէր նաեւ փակեղաշինութեամբ եւ կաղապարագործութեամբ:

Սոյն ծայնաւոր Տէր-Գասպար պատուական Քահանայն ուժ զաւակներ որք թողուց, երեքը՝ աղջիկ, եւ հինգը՝ մանչ, յորոց Գրիգորիկը՝ ընտիր ֆեւան կը չալէ, Յովհաննէսը Աեյ կը զարնէ, Մասաթիկը՝ զանոն, հանկեսե-Պիմէնը՝ տայրե (թեֆ), իսկ Գառնիկը՝ ղեռ ուսանող՝ կ'աւարեալ տիրացու մ'է:

(1) Ճարտար նշխարի կաղապար շինող է նաեւ Պրուսայու Առաջնորդ՝ Գեր. Տ. Բարձուղիմէոս Սրբազան Արքեպիսկոպոսի ձեռնաստուներէն՝ Արժ. Տ. Վրձանէս Վարդապետ Բապունճեան, որ հեզարիճեան տիպոսն առած է զնահատողաց կողմանէ: Նաեւ վրանակար (չաքըրճի) է Վրձանէս Վարդապետ:

Սոյն Քահանային կաղապարաշինութեան մասնագիտական համբաւը այնչափ տարածուած էր, որ Վոսիորի գիւղերէն, մինչեւ դաւառաց Քահանայք՝ իրենց նշխարքի կաղապարաց շինութիւնն անոր կը յանձնարարէին :

Սոյն ձեռագործական յիշատակներէն զատ, Երամեան Տէր-Երեմիա Քահանայն՝ գրական յիշատակ մ'ալ շինած եւ թողած է, այն է, ձեռագիր Հայերէն լեզուի Քերականութիւն մը, որով ոչ միայն գեղարուեստական աշխարհին մէջ անմահացած է, այլ եւ Հայ-գրականութեան գանձանակին մէջ իւր տաղանդին լուամայն նետելով յաւերժացած :





## ՔԱՆԱՔԵՌՑԻ ԽԱՉԱՏՈՒՐԸ

Քանաքեռ բարձրագիտակ գիւղը՝ Երեւանայ Խաներուն ամարանոցն է, եւ ունի՝ քաղաքէն իբր 5—7 մղոն հեռաւորութիւն :

Տեսարանն ամէն կողմերովը հիանալի է :

Արեւմտեան կողմէն՝ խոխոջաձայն Հրազդանն, որոյ նկարագիրն ըրտծ է ճարտար վրձինով Քանաքեռցի Խաչատուրն՝ հետեւեալ տողերով,

« Ինչպէս մէկ վիշապ՝ երկնքից թռած, գլխովէր ճողոլակ, մէկ տուտը Սեւանի հանգարտ ծովումը, մէկէլ տուտը Արագի քրքրրուած դրաղում. սար ու ձոր կիսոր տալով. քափ ու քրտինքը բերանը կոխած, գզգուած, մագերը քեալլին ցցած. կապը կտրած, գժուած. ուէին աւազով, քարով, զիբիով լիքը. էս կողմն էն կողմն, փընչացնելով, ճոճաւով, տակըն ու դրաղ ծամելով, բրդելով. — Մէկ թեւն իր ծոցի, էն սեւ, մութն ու ժանգը կոխած, խեւանդ. խեւանդ կտրատած՝ փորն ու դօշը բաց արած, ծառով թփով զարդարած՝ ձորի գլխունը գըցած. մէկ թեւն էլ՝ էն նեղ, չոր, խոր կաքաւասարի տակիցը, որ ական թօթափել դուրս չի պրծնում, — վազում, ու բացով, բրով, քանչալով, մանչալով, խանչալով, քարի, քարափի գլուխ վերհատելով, իւր փորը խցնելով, վէմ, ապառաժ, իւրար ծեծելով, կայծակին տալով, ճչալով, ճըռնչա-

լով, դորդալով.— Յած ասինները, սասանահար գետինը պոկելով, պռնոկելով, քրքրելով, քրքրվելով, կենդանի, անկենդան՝ գետին զարկելով, բամբաչելով, խլացնելով, քառացնելով, սրսրթացնելով, վրթվրթացնելով . — Վառված, կրակված, աչքերը արնով լիքեկալը ցցած, ատամները դրճտացնելով, կըրճըտացնելով՝ դաշտ ու տափ դամբացնելով, դրնգացնելով, դմբմբացնելով . — դնգդնգացնելով, ու կայծակի թուրը բերնին առած, վրայ պրծած գալիս է ամեհի»

Իսկ Քանաքեռ՝ Արեւելեան կողմէն շրջապատուած է պողատու պարտէզներով եւ ողկոյզալից գեղեցիկ այգիներով։ Գիւղին առջեւը կը պարզուի Երեւանեան դաշտավայրը՝ ազգի ազգի ծաղիկներով եւ հրաշազան հրապոյրներով։

Օդն առողջ, ջուրն անոյշ եւ պաղպաջուն է, որոց համար իրաւամբ ժողովրդական առած դարձած է .

«Քանաքեռ՝ բարձր տեղ է,  
«Ջուրն՝ հիւանդին դեղ է» :

Սոյն պատմական գիւղ՝ բոլոր այս բնական գեղեցկութիւններով հանդերձ, իւր հին եւ նոր յիշատակներովն ալ ընդարձակ տեղ մը կը բռնէ էջմիածնական ուղեւորաց սրտերուն մէջ։

Ո՛վ կանգ չառնուր Քանաքեռին առջեւ, որոյ մէջ ազգի ազգի տաղանդներ ծնա՞ն, ծլեցա՞ն եւ անմահացա՞ն :

Ո՛վ չը սիրէր ողջո՛յն տալ այն յարկին՝ յորում ծնաւ Մեծ-Քանաքեռցին . շնչե՛լ այն օդը՝ զոր շնչեց նոր գրականութեան նահապետը եւ կարապետը ,



ըմպել այն ջուրը , յորմէ քամբազդն Գերմանական  
Համալսարանականը կը խըմէր եւ կը զովանար , եւ  
նստիլ այն մշտադալար մարգագետիններուն վրայ ,  
ուր Խաչիկն՝ իւր մանկութեան յիշատակներն ան  
ցուց , ձժալախսի կամ Ձնագունեսի խաղերն եւ Աչ-  
փակապուկն սարքելով :

Քանաքեռցի Խաչատուրն ծնած կը կարծուի 1806  
ին , ազնուական ցեղէ մը , որոյ ազգաբանութեան  
մէջ Աբով կամ Ապով եւ Վիրապ անուններն ժա-  
ռանգական են , եւ ոչ միայն Քանաքեռ գիւղի ամե-  
նէն ազնուական դասը կը կազմեն , այլ եւ այդ ցեղի  
պայազասներն տարածուած են ի Տփղիս , ի Շուշի  
եւ այլ ուրեք :

Քանաքեռցի Խաչատուրն՝ իւր տասնամեայ հա-  
սակէն , նուիրեց ինքզինքն Ազգային դաստիարա-  
կութեան մեծ գործոյն , մասնաւոր պաշտպանու-  
թեամբ Արարատեան Մայր-Աթոռոյ :

Տասն եւ հինգ տարեկան հասակն թեւակոխած  
միջոցին , Խաչատուր յաճախ կը կարդայ ըստ իւր  
ասութեան , Ղուկաս Վանանդեցւոյ , Սիմէօն Կաթո-  
ղիկոսի , Միխիթար Աբբայի եւ այլոց վարքագրու-  
թիւնքը , եւ կը ներշնչուի հոգեկան իղձերով :

Քանի մը տարիներ այսպէս մնաց Խաչատուր  
յէջմիածին , ծառայելով մերթ իրբեւ վանական Մօն-  
թիկ , Փոքրաւոր եւ Տիրացու , ապա Թարգման  
Ընդհանրական Կաթողիկոսարանին :

Պարսկական պատմութեան մասնապէսն էր նա :  
Ականատես գտնուած էր Սրեւանայ մէջ տեղի ու-

նեցած Պարսկա-Ռուսական ճակատամարտին :

1824 ին էջմիածնայ Անտոն Արքեպիսկոպոսին հետ 'ի Հաղբատ , եւ անտի 'ի Տփղիս կուգայ , եւ կը յանձնուի Ղարաբաղցի Պօղոս Վարդապետին , որ 1820 էն սկսեալ նոյն քաղաքի Տափի Թաղի Վանատան մէջ աշակերտներու դաս կուտար :

Սաչատուրի դասընկերներէն էր Խոյեցի Ստեփանիկ Նազարեանց , որ կը կարգային առ ոտս Պօղոս Վարդապետի՝ Չամչեան Քերականութիւն , Ազոնց Ճարտասանութիւն եւ Թեսաւրոս՝ իբրեւ բարոյական իմաստասիրութիւն :

Չեմք դիտեր որոշ թէ՛ Սաչատուր՝ այդ վանական խուցին մէջ ո՞րչափ կը սրբապի դասառութեամբ , սակայն սա՛ գիտեմք որ , յետոյ Ստեփաննոս Նազարեանցին հետ Քանաքեռցին՝ տեղւոյն Ներսիսեան Դպրանոցը կը մտնէ եւ մասնաւոր եւ հայրական պաշտպանութիւն կը վայելէ Ալամդարեանց Յարութիւն Քահանայէն :

Սաչատուր՝ հասակաւոր եւ մտացի աշակերտ եւ սուր յիշողութեան տէր էր :

1828 ին կը մեկնի Տփղիսու Ներսիսեան Վարժարանէն , քիչ շատ ուսմանց մէջ զարգացած , եւ դառնալով ի Մայր-Աթոռն՝ երեք տարի իւր Եպիսկոպոսին քով փոքրաւորութիւն կրնէ :

Անտոն Սրբազանին վախճանէն յետոյ , Եփրեմ Կաթողիկոսին քով կը մտնէ Սաչատուր , եւ կ'ստանայ Նորին Վեհափառութենէն՝ Կիսասարկաւազութեան 4 աստիճանները , շարունակելով միանգամայն Մայր-Աթոռոյն Քարտուղար-Թարգմանի փափուկ պաշտօնը :

1829 ին կը լքէ այս կրկին պաշտօնները, համանգամայն թողլով հոգեւորականութեան սքեմն, որուն այնչափ խանդաղատանօք փարած էր, եւ ուղեկից եւ թարգման կը լինի ժամանակակից Գերմանացի ուսումնական եւ հնախոյզ ճանապարհորդաց, մասնաւորապէս՝ Վալենէրի, որոյ հետ Արարաց լեռը բարձրացաւ, եւ գիտնական Արիիսի հետ որ մինչեւ ի Պայազիտ ուղեւորեցաւ, եւ ամենուրեք՝ ի մեծէ սկսեալ մինչեւ ցփոքունս, պատիւ, յարգանք, ընդունելութիւնք եւ յօժարակամ պատաստութիւնք վալեից, ինչպէս որ Երեւանէն կը գրէր Խաչատուր, 15 Փետրուար 1845 թուականակիր նամական՝ ուղղեալ առ Ներսէս Ե. յաւերժայիշատակ կաթողիկոսն :

\*  
\*  
\*

Ուսանողական հասակն անցուցած էր Ուրարակիր-Սարկաւազ Խաչատուր, երբ Դորպատեան Համալսարանի ուսուցչապետ Պարբօտի շնորհիւ մտաւ Դորպատու Համալսարանը՝ իբրեւ ուսանող, ուր հինգ կամ վեց տարուան շրջան մը բոլորելէ յետոյ, 1835ին՝ Խոյեցի Ստեփաննոս Նազարեանցի<sup>(1)</sup> հետ յաջողութեամբ աւարտեց իրեն ուսման ընթացքը, եւ երկուքն ի միասին իբրեւ վկայեալ մանկավարժ

---

(1) Սա եւս նոյն Համալսարանը մտած էր ծախիւք Բժիշկ Սօլօմոն Արեւիչ Տէր-Ղուկասեանի:

եւ մատենագիր դարձան հայրենիք, զիրենք նուիրելու համար Հայ մանկուոյն կրթութեանը եւ լուսաւորութեանը :

Սաչատուր, երբ Դորպատի Ճեմարանին մէջ ուսում կ'առնուր, պարապոյ ժամերը հացթուխերու մօտ երթալով՝ իմոր պատրաստելու եւ հաց շինելու արհեստն կ'ուսումնասիրէր :

Երբ ուսուցիչներէն մին իրեն դիտողութիւն ըրաւ թէ՛ «ի՞նչու համար կ'զբաղի այդ տեսակ գործով : »

Մանաւոր շեշտով մը առ այս կը պատասխանէ Սաչատուր՝ — «Կ'ուզեմ որ հացագործութեան արհեստն սորվիմ, երբ երկիրս վերագառնամ, իմ ազգակիցներուս պիտի հաղորդեմ» :

Այսպէս, անմահն Սաչատուր՝ իւր ուսումն առած ժամանակն իսկ, ժողովրդական արհեստ մ'ալ մշակած է օտարութեան մէջ :

Մսեր Մագիստրոս Մսերեանց՝ ժամանակակից Աղզային գիտնական անձանց հետ նամակագրութիւններ ունէր : Նոյնը ունեցաւ նաեւ Սաչատուրին եւ Ստեփաննոսին հետ :

Տփղիսէն ի 10 Ապրիլ 1831 ամսաթուով «Առ Սաչատուր Դպիրն՝ որ ի Տէրպէ քաղաք» ուղղած թղթակցութենէն զատ, 1834 ին ալ առ Սաչատուրն եւ Ստեփաննոս Նազարեանց զրած մի նամակէն՝ նշանակութեան արժանի հետեւեալ պարբերութիւնը յառաջ կը բերեմ .

« Զեզ մնայ այժմ, սիրելիք, ձեզ մնայ պատասել զվարագոյր խաւարաւքօղ տգիտութեան, որով՝ թըշնամացեալ դժուղակ բաղդին՝ առագաստեալ է ցայսօր զմիտս յոգունց ի Հայ մանկուոյն, եւ այլն : »

Պարտք կը համարիմք յիշել թէ, երբ յիշեալ զայդ մը մասնագէտ Համալսարանականքն իրենց երկիրը դարձան, յայնժամ ի Ռուսահայս չկային մասնագէտ մանկավարժներ՝ Առաքել Պահատրեանցի, Սեդրակ Մանդինեանցի, Փիլիպպոս Վարդանեանցի եւ այլոց նման :

Ապաքէն Սաչատուր՝ օդ եւ երկիր փոխելով, սիրտ եւ հոգի փոխողներէն չէր :

Քաջ Հայկաբան լինելէ զատ, գիտէր Ռուսերէն, Վրացերէն, Գերմաներէն, Գաղղիարէն, Թուրքերէն, Պարսկերէն, Իտալերէն եւ այլ լեզուներ : Ուստի փափաքեցաւ ի վերագարձին, նախ՝ Ազգային Վարժարանաց մէջ ծառայել, բայց ըստ որում Գերմանական ուղղութեամբ պատրաստուած, կամ լաւ եւս, Լուտերական ուղղութեան հակամէտ մի անձ նկատուած, Կարբեցի Յովհաննէս ութերորդ Կաթողիկոսէն ոչ նուազ հալածանքներ կրեց : Եւ սակայն Սաչատուր, անյողզողդ իւր արամադրութեանց մէջ՝ վարեց ի Տփղիս եւ յԵրեւան կրթական պաշտօններ Ազգային եւ Ռուսական բարձրագոյն վարժարանաց մէջ՝ նիւթական ոչ-նախանձելի վարձատրութեամբ :

Սաչատուր՝ Տփղիսու Սուրբակ թաղին մէջ ազնիւրօթիկ մասնաւոր Վարժարան մը բացած էր ուրկէ, ի մէջ այլոց, դուրս եկան Յովսէփ Ֆոնդրեանց, որ իւր բազմերախտ Վարժապետին 1841,

գրած պատմական վէպն հրատարակեց իւր ծախիւք ի Տփղիս՝ 1858ին, — Գարրիէլ Սատիսեան՝ որ երկասիրած է «Սէր, վիպասանութիւն Հայ երեխանցը վրայ» տպեալ 1881, Մանկավարժական խորհրդածուրիւններ, Յիւստակարանք նանապարհորդութեան; եւայլն, եւ Գէորգ Աքիմեան, որոնք յետոյ՝ Դորպատու Համալսարանին մէջ իրենց ուսումը կատարելագործեցին :

Մ. Ազարեանց, թէ եւ ո՛չ յաշակերտաց Սաչատուր Բանաքեոցւոյն, գրած է նորա կենսագրութիւնն «Մէկ քանի խօսք» վերնագրով եւ հրատարակած է 1861 Կոռնկի 7րդ թուոյն մէջ :

Տփղիսու մասնաւոր Վարժարանն ալ չէ կրցած չարունակել Սաչատուր :

Պատճառը :

Պատճառը կը վերագրուի իրեն պաշտօնակից ուսուցչաց, որ ամէն տեսակ հալածանքներ յարուցած են Սաչատուրին դէմ՝ վհատեցունելու համար վարժապետութեան ասպարիղէն, որ ըստ ինքեան փշոտ եւ ապերախտ է :

Մինչ այս եւ մինչ այն, եւ ահա Սաչատուր՝ օրին մէկը միտքը կը փոխէ, եւ 1838ին՝ գրարաւ դիր մը ուղղելով առ Սինօզն՝ հոգեւոր կոչումէն պաշտօնապէս հրաժարիլը կը ծանուցանէ, առարկելով թէ :

«Միթէ՞ որք սշխարհականքն են, չե՞ն որդի սըրբոյ Աթոռոյն, միթէ՞ այսու վիճակաւ ո՞չ կարեմ միշտ ծառայել նմա» :

Եւ երկու ամիս յետոյ՝ կատարուելով խնդիրը, կ'ամուսնանայ Գերմանացի Օրիորդի մը հետ, յորմէ

ունեցած է մի դուստր եւ մի ուսար, Պ. Վարդան՝ որ  
երբեմն Գէորգեան ձեմարանին մէջ Ռուսաց լեզուի  
եւ Աշխարհագրութեան դասատուութիւն կ'ընէր, եւ  
սոյն տողերը գրողն անձամբ տեսած է զինքը յԵրեւան  
թեմական Դպրանոցի մէջ Ռուսերէն Աշխարհագրու-  
թեան եւ Պատմութեան դասախօսութեամբ զբաղած :  
Պ. Վարդան՝ յԵրեւան եւս Ռուս եւ Ֆրանսերէն  
լեզուաց ու սուցիչ էր :

Սաչատուր՝ Աշտարակեցի Ներսէս Ե.ին թունդ  
համակրողներէն լինելով, եւ հայրենակիցն ալ հա-  
մարուելով փորձած է ընտանիքն եւ զաւակներն  
թողուլ, նորէն ուրանալ զաշխարհ, եւ վերստին  
սքեմ առնուլ, սա համոզմամբ թէ՛ ինքը կուսակրօն  
կամ վարդապետական կեանքով աւելի կրնայ բոլո-  
րանուէր ծառայել Ազգին եւ Եկեղեցւոյն, քան աշ-  
խարհականութեամբն :

Եւ սակայն Սաչատուրի սոյն խորհուրդն չիրա-  
կանացած, 1848ին յանկարծ կ'անհետի, եւ կը լսուի  
թէ՛ ոչ եւս է Սաչատուր :

Իւր կենաց վերջին օրերն՝ քաղաքական մթու-  
թեան մէջ կը մնան :

Քանաքեռցին՝ իրրեւ գրական մարդ, իւր տեսա-  
կին մէջ անհամեմատ առաւելութիւններ ունի :

Նորա ժողովրդական լեզուաւ գրած գլխաւոր եր-  
կասիրութիւնն—որ ի Տփղիս 1858ին հրատարակուե-  
ցաւ — ամբողջապէս կարդալու բաղդաւորուած չեւ  
սակայն 1888ին Պ. Յովհաննէս Նազարեանցի յօրին :

եւ հրատարակած ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ անուն  
հաւաքածոյին մէջ կարդացած եւ Քանաքեռցի Սաչա-  
տուրին արձակաբանութիւններէն մի քանին, զոր  
օրինակ, Հրանաբակ գիւղը, Ջանգի գետը, Սկեղե-  
ցի գետը, Չմեռնային առաւօտը գիւղացու տանը,  
Գիւղացու հիւրասիրութիւնը, Բուն բարեկեցեանի  
նաւ, Ջուարեութիւն, Աղասու մօր նամակը, Աղա-  
սու կնոջ նամակը, Աղասու վիճը, Աղասու որ-  
դիական սէքը, Գիւղացու դատողութիւնը, Ուսման  
կարիք՝ գիւղում, Աղասու մտածութիւնքը, Աղասի,  
Յովակիմ, Մադաթով, Սար գետը, եւ այլն :

Սոյն դասական յօդուածիկներն՝ գրեթէ իրենց  
ամբողջութեամբ, տեղական Հայ լեզուին ամենէն հա-  
րուստ հանքն կամ հաւաքածոյն կրնայ համարուիլ,  
ամէն կերպիւ կրնան օգտուիլ գաւառական յոգնա-  
յորմէ տեսակ լեզուաց բազմատական հետազօտու-  
թեամբ զբաղող մտքերն :

Իսկ նորա Վէրբ անուն անգուգական գիրքն միայն  
կարող է պայծառ լոյս սփռել նորա կենաց վրայ :

Քանաքեռցի Սաչատուրին ժողովրդական բանաս-  
տեղութիւններէն 1840ին ի Տփղիս պարզ ոճով ոգած  
ոտանաւոր հետեւեալ գրուածն, իբրեւ գրական  
գոհար աստ կը զետեղեմ .

### « Ա Ղ Ա Ս Ի Ի Վ Ի Շ Տ Ը »

Սար ու ձոր ընկած մէկ չոր թփի տակին,  
Գետնին նայելով մնացել եւ նըստած .

Ձեռս ծոցումըս, գլուխս մէկ լուռ քարի  
Տըւած՝ լալիս եւ օրըս խաւարած :



Ամպերն առաջիս , սարերն ետեւիքս ,  
Քեզ մտիկ տալով , այ իմ քաղցր երդիքս .  
Աղի արցունքով էրուած , խորոված ,  
Երեսիդ նայեմ՝ մընամ քարացած :

Ծընողք , ազգականք հեռու ինձանից ,  
Լուսնին նայելով , ձեր սէրն յիշելով ,  
Եարար երբ կըլի , որ ես ձեզանից ,  
Իմ կարօտս առնեմ՝ ձեզ ջան ասելով :

Աչքըս ծով դարձաւ ճամբին նայելով ,  
Մէկ դուշ որ գլխիս պըտիտ է գալիս ,  
Թէ երբ մէկ խաբար կ'համանի ինձ բարով ,  
Հոգոց հանելով ասում եմ լալիս :

Նազլու իմ , Նազլու , աննրման Նազլու ,  
Սիրտս խորովի անունդ յիշելով ,  
Նազլու իմ , Նազլու , հրաշալի Նազլու ,  
Աղասին քեզ տայ իր յետին բարով :

Սարերի դօշին , ձորերի միջին ,  
Վայ գլխին տալով քու խեղճ Աղասին ,  
Երեսիցդ զրկուած , քու սիրով մաշուած՝  
Տատարակի նրման փշի վերայ նրստած :

Նազլու իմ , Նազլու , մէկ շունչս է մնացել ,  
Ոսկերքս քրքրվել , աչքերս խաւարել ,  
Թող մէկ շունչդ առնեմ , յետոյ հող մանեմ ,  
Դժոխքն էլ տանեն՝ ես հանգիստ կ'ընեմ :

Քեզ եմ մընում, քեզ, քու ջանին մեռնիմ,  
Հող ու գերեզման ես վրրես ունեմ,  
Քանց իմ սառը մարմին էլ ինչ գերեզման  
Ինձի պէտք կուզայ, երեսիդ ղուրբան :

Պուսոյ Մեղուին եւ ի Բետրապուրգ հրատարակեալ  
երգարանի մը մէջ՝ տպուած է վերոյիշեալ Ազասիի  
Երգը կամ Վիւսը :

\*  
\*

Ասոնցմէ զատ ունի, կիսատիպ՝ Նախաւաւիդ  
կրթութեան ի պէսս նորավարժից :

Իզմիրի Արալոյս Արարսեան լրագրոյն 160  
թուոյն մէջ Երեւանու գաւառաբարբառով տպուած  
փոքրիկ պատմութիւն մը :

Տփղիսու Մեղուի 1858 տարւոյ 2րդ համարին  
մէջ տպուած ոտանաւորը :

Պատանեկութեան եւ երիտասարդութեան օրե-  
րուն յիշատակագիրն (Գերմաներէն լեզուաւ) :

Ռուսերէն լեզուաւ քանի մը յօդուածներ ունի  
Կովկաս լրագրոյն մէջ :

Աշխարհաբար երգերէն զատ, ունի բազմաթիւ  
անտիպ մնացած գրաբառ գրութիւններ, յորս են,  
Մքազան Կարապետ Արեւայիսկոպոս Վրասանի  
եւ Տայոց :

Զգացմունք առ Բաղալ Ֆահրասեան :

Ի սուրբ լեառն Մթածմինդայ :

Աղես առ Մուսայն :

Մսածմունք :

Հրազդան :

Կարօսուքիւն :

Հրաժարական :

Արհաւիրք :

Առ կոմսն Երեւանի :

Առ աշակերտ հողեսուն՝ շնորհազարդ պատանիկ  
Եգոր Ամիկեան :

Առաջի պատերի բազմեախս իմ բարեբարի՝  
Ֆրեդրիխայ Պարրօսի, որ վախճանեցաւ, ի 1842  
ամի ի Դարպաս :

Առ շնորհածաղիկ պատանի :

Ի վերայ դամբարանի սիրելի առակերտին իմոյ  
Ղորխմազ Արղուքեանի, որ վախճանեցաւ ի 24  
Մարտի 1840 ամի :

Հախ-վէրմազ ոտանաւոր մ'ալ ունի գրած կծու  
ոճով, ամսական թոշակը չվճարող աշակերտի մը  
ծնողքին ուղղեալ, եւ այլն, եւ այլն :

Ունի այլեւ աշխարհաբառ շարադրութիւններ՝  
Ազնէս, — Ֆէօդորայ կամ որդիական սէր, — եւ, Օվ-  
սանա պատմութիւն :

Պարսպ վախսի խաղալիք, պարսպ մարդու  
սանու միտք, մակագրով ոտանաւոր շարադրութիւնը,  
կը պարունակէ զանազան պատմութիւններ, առաս-  
պելներ, ասացուածներ եւ պայաքիներ :

Ազնուամսութիւն եւ շնորհակալութիւն վեր-  
տառութեամբ գրութիւն մ'ալ թողած է :

Նոյնպէս, փոքրիկ տետրակ մը՝ զանազան ոտա-  
նաւորներով, կարճ առածներով, առակներով, եւ  
այլ կարգ մը երկեր :

Չմոռնամք յիշել թէ Բանաքեոցին՝ քաղաքական

աստիճանաւոր ալ էր . մայեօրութեան թէ Սովէս-  
նիկութեան աստիճանն ունէր :

\*  
\*  
\*

Քանաքեռի փառքը յաւելցնող ծնունդ՝ միայն  
այս Խաչատուրը չէ :

Անցեալ դարուն մէջ Ազգին ընծայած է Քանա-  
քեռ՝ Զաքարիա Սարկաւազ Պատմագիր կաղ անու-  
անեալ , որ ծառայած է Դաւիթ Ե. , Մելքիսեղեկ  
Գառնեցի , Գրիգոր ԺԳ. Եղեսացի , Սահակ Գ. Գառ-  
նեցի , Մովսէս Գ. Սիւնեցի , Փիլիպպոս Աղբակեցի ,  
Յակոբ Գ. Զուղայեցի , Եղիազար Այնթապցի , եւ  
Նահապետ Եղեսացի Կաթողիկոսաց :

Զաքարիա՝ իւր Պատմութեան Բ. մասին մէջ՝  
ահաւոր երկրաշարժի նկարագիրն ընելով , կը յայտ-  
նէ թէ՛ միայն Քանաքեռի մէջ 1228 մեռեալք զո-  
հուած են այդ սոսկալի արկածին , որ մեծամեծ  
հաստատութիւններ , Վանորայք եւ Եկեղեցիք հողու-  
հաւասար ծածկուած են , սասանելով Աղջոց Վանուց  
Եկեղեցիները , Այրիվանք , Հաւուցքառ , Խորվիրապ ,  
Զրվէժ եւ Մակվանք , եւ այլն . ինչպէս նաեւ Երե-  
ւանայ երեք Եկեղեցիներն եւ Նորագաւիթ , Նորա-  
գիւղ , Նորք եւ Զորագիւղ :

Քանաքեռ՝ ընծայած է այլ եւ Երուսաղիմայ Ա-  
ճ. ընկական Աթոռոյն Յովակիմ անունով Պատրիարք  
մը 1775ին , որ Մովսէսին կը կոչուէր , երեսասար-  
գութեան ատեն . Յուպպէի ծովուն մէջ ինկած եւ ա-  
զատած ըլլալուն համար :

Քանաքեռ երկու եկեղեցի ունի՝ Ս . Գէորգ եւ  
Ս . Յակոբ :

Առաջնոյն բակին մէջ է Աղասիի գերեզմանը :  
Ո՛չ մարմնամաշ տարեգիրն եւ ո՛չ հոգեմաշ կեն-  
սագիրն կարող են գոհացնել այժմեան ընթերցող-  
ներն , եթէ քիչ մը տեղական գիտելիք եւ հին յի-  
շատակներ կենսագրեալ դէմքերուն հետ չներկա-  
յացնեմք մերթ ընդ մերթ :



Ժ.

## Պ Ե Տ Ր Ո Ս Կ . Թ Ն Կ Ը Ր

1881ին համազգային փիլիսոփայի մը հանդիսառը նախագուժեց Զմիւռնիոյ Արշալոյսը, եւ ապա տեղական ազգային լրաթերթք կրկնեցին նորա տխուր արձագանգը :

Արդէն 1878ի Ուղեգրութեանցս Ժրդ. Թուղթին մէջ առ Ա.յն փոքրիկ ճաշակ մը, հակիրճ ծանօթութիւն մը տուած եմ. սակայն հանգուցելոյն թէ՛ կեանքը եւ թէ՛ մահուան պարագաները—զորս բարեկամ մ'ինձ հաղորդած է Զմիւռնիայէն — այնքան հետաքրքրաշարժ են՝ որ անհրաժեշտ կը համարիմ այսօր ընդարձակագոյն եւս գրել նորա գաղափարաց եւ կենցաղավարութեան վերայ, որպէս զի կարելի ըլլայ ընթերցողաց դատել թէ՛ մարդկային կեանքը ինչ տեսակ արտակեղրոն բացառութիւններ կը պարունակէ :

Պետրոս-Թնկըր՝ որ երբեմն Վիէննայի Մխիթարեան Վարդապետներէն էր, մայրաքաղաքիս Հայ-Կաթողիկ ընտանիքներէ ամենէն նշանաւոր եւ յարգի գերդաստանի մը, Թնկըրեան շտաւախդներուն կը վերաբերի :

Իւր դաստիարակութիւնը Կ. Պոլիս սկսած եւ յետոյ իւր ուսումը Վիէննայի Մխիթարեանց եւ ուրիշ բարձրագոյն դպրոցի մը մէջ աւարտած էր :

Պետրոս-Թ'նկըր զանազան ուսմանց եւ գիտութեանց քաջ տեղեակ լինելով հանդերձ՝ կրնայ ըսուիլ թէ աւելի հմուտ լեզուագէտ մ'էր, վասն զի Հայերէնը, Հելլեներէնը, Լատիներէնը, Արաբերէնը, Պարսկերէնը, Իտալերէնը, Անգղիարէնը եւ Ֆրանսերէնը լաւ գիտնալէ զատ՝ ծանօթ էր Սանսքրիդ լեզուին, որ ըստ նոր գիտնական դաւանութեան, լեզուներու արմատը կը սեպուի :

Պետրոս-Թ'նկըր՝ պատանեկութեան հասակէն քանի մը դժբաղդ պարագաներու պատճառաւ մարդկային ընկերութենէ հեռացած էր : Անյողգող սկզբունքով մը չէր կրնար երբէք հաւատալ՝ թէ մարդկային սերնդեան կոչումը ներէ նմա շեղիլ բարեսիրութեան շաւղէն եւ դիմել ի չարն :

Այս ազնիւ զգացումներն այնչափ տարրացած էին իւր սրտին մէջ, որ չարիքէ բոլորովին խորյած էր : Չարեաց ատելութիւնը մինչեւ ի մարդատեցութիւն առաջնորդած էր զինքն, եւ ահա ատոր համար էր որ քաղաքային կեանքն իրեն անտանելի կը հանդիսանար :

Հարուստ գերդաստանի մը վերաբերիլը դէպ ի մենակեցութիւն ունեցած տրամադրութեան գիւրութիւններ կընծայէր, իսկ իւր ամուրիութիւնն եւս առաւել կամրապնդէր յինքեան այդ տրամադրութիւնը :

Գրեթէ քառասուն տարիէն աւելի է որ Պետրոս-Թ'նկըր Զմիւռնիոյ Պուճա գիւղին մէջ կը բնակէր : Իւր ընտանեաց զրկած դրամական օգնութեան չընտրել՝ մեռնելէն քանի մը տարի յառաջ Պուճայի մօտակայ Ա.Քրա-Պօմօն, այսինքն, Վպիտակ Հողերը ըսուած տեղը գեղեցիկ բլուր մը գնած էր, որուն

գագաթը կանգնել տուած էր քառակուսի եւ քարաչէն տուն մը, զոր աւելի փոքր գղեակ մը պատշաճ է անուանել :

Այս շէնքն այնչափ ամուր եւ հաստատ էր՝ որ ամենէն զարհուրելի աւազակները կը վհատեցնէր :

Այս տունին մէջ էր՝ որ մարդկային սերունդէն հեռացող, մարդկային ընկերութիւններն ատող Պետրոս-Թնկըր՝ դարձեալ մարդկային սերնդեան բարւոքման համար կը խորհէր եւ կաշխատէր օրն ի բուն :

Նա այնպէս կ'ենթադրէր թէ՛ կրօնից եւ լեզուաց զանազանութիւնն, եւ համասեռ մարդկութիւնն՝ իրենց մէջ բաժանմանց կ'ենթարկէին, եւ կը հաւատար թէ՛ համաձոյլ կրօնքով մրասին արեւզերական միօրինակ լեզու մ'ազգերն իրարու պիտի չաղախեր, եւ մինչեւ անգամ անհատական պայքարներն եւ ամեն կաքերն, կոիւնները եւ վեճերն պիտի դադրեցնէր, եւ այս կերպով՝ ընդհանուր խաղաղութիւն եւ ներդաշնակութիւն մը պիտի յաջորդէր :

Վաղուց ի վեր կ'աշխատէր այդ տեսակ համաշխարհական լեզու մը հնարելու : Կ'երեւակայէր որ այս լեզուն ամէն ազգերու կողմէն սիրով պիտի ընդունուէր առանց ընդդիմութեան :

Այդ լեզուին կազմակերպութիւնը ոչ նուազ հետաքրքրական լինելով՝ հանգուցելոյն հետ տեսութիւն ընելու պատիւն ունեցող մեր վերոյիշեալ բարեկամը՝ կը հաղորդէ մեզ թէ՛ այս նորահնար լեզուն, քանի մը լեզուներու եւ մանաւանդ Սանսքրիդ լեզուին զանազան ձայներէն բաղկացեալ, եւ նորագրերն այլ եւ այլ տառերու մասերէ կերպաւորեալ



տեսակ մը բազադրութիւն էր, որ տակաւին ազգի մը կողմէն ընդունուած եւ գործածուած չըլլալուն համար՝ ընդհանուր առմամբ լեզու մը չ'էր կրնար համարուիլ :

Պետրոս-Թնկըր՝ իւր նորագիւտ բարբառոյն համար յատուկ Այբբենարան մը, Քերականութիւն մը եւ առձեռն Բառգիրք մը շինած էր, որոնք տպել տալով՝ իրեն տունն այցելութեան գացող անձանց կը նուիրէր :

Այս լեզուին անունը Սահլէրայ դրած էր, որ կը նշանակէր համաշխարհային լեզու: Այս լեզուով կը գրէր բաժաստեղծութիւններ, կը տողէր ոտանաւորներ, որոց Ֆրանսերէն թարգմանութիւնը կը կարգային իւր յաճախորդներն, եւ բաւական հետաքրքրաշարժ կը գտնէին :

Իսկ ասոնց բնագիրը հեղինակէն զատ ոչ ոք կրնար ընթեռնուլ, ըմբռնել եւ իմանալ :

Իարձեալ իւր լեզուին յատուկ տառերով Պետրոս-Թնկըր՝ իւր տան դրան վերայ նշանատախտակ մը դրած էր, որոյ վերայ Այգեւոսանդ բառը քանդակել տուած էր՝ որ կը նշանակէր Տաճար Իմաստութեան :

Այգեւոսանդի մէջ կար գրատուն մ'որ աւելի զարդարուած էր լեզուագիտութեան վերաբերեալ գրքերով. իսկ սեղաններու վերայ կը գտնուէին խել մը սպունգներ, հանքային քարեր, զանազան իրեր՝ որոնք փոշիով ծածկուած էին :

Ահա՛ այս նիւթերու անհեթեթ վիճակն ակն յայտնի ցոյց կը տային այցելուին, որ կին մ'Այգեւոսանդի մէջ խնամ չ'էր տարած :

Ուշադրութեան արժանի կէտ մ'ալ այս է որ՝ հոս տեղ կին ըսելով չենք իմանար միայն ամուսինը, վասն զի Պետրոս-Թնկըր չ'ամուսնանալէ զատ՝ գեղեցիկ սեռն այնչափ կ'ատէր<sup>(1)</sup> որ՝ նորա չէր ներէր բնաւ Ա յգերատանդն ոտք կոխել: Եւ եթէ առանց իւր գիտութեան տիկին մը կամ օրիորդ մը գաղտագողի ներս մտնէր՝ Նա անմիջապէս դուրս ելնելու ճամբան ցոյց կուտար, ով որ ալ ըլլար այդ կինը կամ օրիորդը:

Պետրոս-Թնկըր կենդանական ո՛ր եւ է սնունդ, այսինքն միս, ձուկ եւ այլն բնաւ չէր ուտէր, այլ միմիայն բանջարեղէնով, կաթով եւ հաւկթով կը կերակրուէր: Մսակերութիւնը՝ վայրենիներու կը յատկացնէր, եւ հետեւաբար շատ հեռի չէր ամեն մսակէր մարդիկ իբրեւ զիշակեր գազաններ նկատելէ:

Այս մասին իւր կարծիքները՝ Ժան-Ժաք Ռուսօյի կարծեացը հետ մեծ նմանութիւն ունէին, սա տարբերութեամբ՝ որ սորա խորհուրդները Նա կ'իրականացնէր իւր անձին վերայ: Բայց զարմանալին այս է որ Պետրոս-Թնկըր՝ մտի ատելութիւնը մինչեւ մոլեռանդութեան տարած էր, վասն զի կաշիէ շինուած կօշիկ անգամ չէր հագնէր, այլ միմիայն ա-

---

(1) Կըսուի թէ Պետրոս-Թնկըր զօրաւոր պատճառ մ'ունեցած է իւր այս ատելութեան մէջ. նորա համար այս զգացումն թերեւս ներելի կ'արեւայ համարուիլ՝ երբ մօսածուի թէ միեւնոյն պարագային մէջ զսնուող ուրիշներ մինչեւ իսկ անձնասպանութեան դիմած են, ինչպէս 1881 թուոյն սկիզբն Եէնի-Գափուի մէջ հանճարեղ Հայ երիտասարդ մը:

դածիրգ խէժէ (†առաջուէ) շինուած . ըսելով որ՝ կա-  
շիէ սօլերք հագնիրն անասուններու սպաննութեան  
հետեւանքն է , եւ ասոր համար բնական օրինաց  
հակառակ է :

Իւր գործերն , իւր սպանն ինքը կը տեսնէր ,  
ինքը կը մատակարարէր , եւ սպասաւորի կարօտու-  
թիւն չէր զգար :

Այս տարօրինակ կարծիքներով հանդերձ՝ Պետ-  
րոս-Թնկըր իւր ամեն ծանօթներու համակրութիւնը  
գրաւած էր , իւր պարկեշտ եւ ազնիւ վարմունքովն  
եւ հրապուրիչ խօսակցութեամբը . վասն զի Պետրոս-  
Թնկըր ամեն գիտցած լեզուները լաւ խօսելու յատ-  
կութիւնն ունէր :

Մինչեւ կենաց վերջին օրերն՝ այսպէս ապրելէն  
զվնի , երեկոյ մը Պետրոս-Թնկըր — որ յետին աստի-  
ճան տկարացած էր — իւր քանարին մէջ տեղը տա-  
րիներէ ի վեր պեղած եւ պատրաստած գերեզմանին  
մէջ գիտակից մահուամբ գնաց հանգչեցաւ , 60էն  
աւելի ձմեռներ վայելելէն ետքը , որպէս երբեմն կը  
հանդէպ Ս. Յովհաննէս Աւետարանիչ՝ ինքնազիր գե-  
րեզմանին մէջ :

Երկրորդ օրն՝ երբ իրեն սովորական այցելուները  
գացին , զինքը մեռած գտան այդ գերեզմանին մէջ :


Ահա՛ այսպէս վախճանեցաւ Պետրոս-Թնկըր՝  
որոյ իմացականութիւնը ծայրապատար էր , եւ տե-  
սիւններն՝ ընդարձակ , որոյ կեանքը՝ թէեւ սովորա-  
կան շրջանէ դուրս՝ բայց խոկասէր անձանց մտա-  
ծութեանցն առիթ կրնայ լինել . . . :

Ե՛րթ ուրեմն, ո՛վ խոնջեալ եւ ամայացեալ հոգի  
որ բանաստեղծութեամբ ծնար, լեզուագիտութեամբ  
որորուեցար, փիլիսոփայութեամբ ապրեցար եւ հո-  
գեիօսութեամբ մտար :

Գնա՛ հոն, ուր ամենայն ինչ բանաստեղծութիւն  
է, հոգի է . ո՛ւր լեզուի Բաբելոն չկայ, ուր միջազ-  
գային սահման չկայ, ուր բո՛ւրի խնդիր չկայ, ուր  
կուսակցութիւն չկայ, ուր ոչ անցի կայ, եւ ոչ  
աստի . . . :

Անդ լեզուի խնդիրը լուծուած է, բնակիչք հա-  
մարարբառ են . . . :

Անդ կուսակցութիւն, հերձուած չկան, անդ է  
մի հօտ եւ մի հովիւ . . . :



## ԺԱ.

### Մ. ՂԱԶԱՐԵԱՆ ՊԱՅՏԱՐԵԱՆՑ

Իմ բոլոր կենսագրած անձերուս մէջ թերեւս չկայ մէկը՝ որ այնքան մտածել տայ գրողն, որովհետեւ ամենէն հզօր եւ ամենէն խորին խորաթափանց միտքն եղած է առ մեզ Նոր-Նախիջեւանի Արծիւն համարուող Մուխալ կամ Միքայէլ Ղազարեան :

Մտաւոր կարգին վերաբերող բոլոր բարձրագոյն խնդիրներն ուսումնասիրելէ զատ, անոնց գործնական երեւոյթներն ալ քննած, եւ մասնաւորապէս իւր ապրած ընկերութեան մէջ ալ այդ խնդրոց կիրառումը բացայայտած է :

Մէկ խօսքով, Միքայէլի կեանքը՝ եղած է մտածողի եւ միանգամայն գործնական մարդու մը կեանքը :

Պայտարեանցի կերպարանքին նման՝ իւր գրուածք ալ անաչառ տպաւորութիւն կը թողուն :

Կենսագրեալս՝ կպրավաճառ Ուստա-Ղազարին զաւակն էր, ծնած ի Նոր-Նախիջեւան 27 Հոկտեմբեր, 1830ին :

Ուստա-Ղազարին չորս մանչ զաւակ ունենալը լտած եմք. Միքայէլ, Գրիգոր, Սերովբէ եւ ուրիշ մը, որոց ամեն նիւթական զոհողութիւն ըրած է իւր գտնուած միջավայրին մէջ, ըստ բաւականին ուսում եւ դաստիարակութիւն ջամբել տալու համար :

Մանկութեան զուարթ եւ խիզախ օրերն՝ պարապ անցունել չտուին Միքայէլին, այլ Նոր-Նախիջեւանի մէջ նոյն ժամանակուան համբաւաւոր մանկավարժ Տիրացու Օգսէնտ-Եղիշէին մօտ ընթերցանութեան եւ գրի նախակրթանքն առնել տալէ յետոյ, յանձնեցին զայն առաջնակարգ Հայկարան Տէր-Գարրիէլ Աւագ-Քահանային, յորմէ ուսաւ կատարելապէս Հայերէնը՝ որ մինչեւ իսկ Աշտարակեցի Ներսէս Կաթողիկոսէն զնահատուած է:

Միքայէլ՝ Հայերէնէն զատ, ուսած էր նաեւ Տէր-Գարրիէլ Քահանայէն՝ Կրօնի ուսումը, Ազգային Պատմութիւն, ինչպէս եւ ըստ բաւականին՝ Ռուսերէն լեզու:

Եւ երբ Միքայէլի հասակն՝ 16 տարին թեւակոխեց, հրաժարեցաւ Տէր-Գարրիէլ Քահանայէն, եւ Ներսէս Կաթողիկոսի յանձնարարութեամբը՝ Ճարտաօանութեան եւ Տրամաբանութեան դաս առնելու համար, քանի մը օր ալ Եէկենեան Մկրտիչ Վարժապետին քով յաճախեց, որ ի Վենետիկ ուսած եւ Նոր-Նախիջեւանու մէջ այդ ճիւղերուն դասախօսութիւնը ստանձնած էր:

Միքայէլ չհաճեցաւ սակայն այդ տեսակ Ճարտաօանութեամբ եւ Տրամաբանութեամբ միտքն խրճողել եւ սեղմել, ուստի որոշեց ինքզինքն նուիրել հոգեւորականութեան, որուն համար արդէն ուսանողական կեանքէն սկսած էր փափաք տածել. ուստի նոյն քաղաքի Ս. Թորոս եւ Ս. Լուսաւորիչ Եկեղեցեաց մէջ դպրութիւն ընելով՝ ինքզինքն կր պատրաստէր եկեղեցականութեան:

Կը սիրէր զարգանալ նախնեաց սրածշտութեան մէջ:

Ստեփան Արքայելիկ՝ պարզ Տիրացու մը չէ՛ր :  
Քաջավարժ էր Հայերէնի աշխարհաբանն ալ ,  
գրտաբանն ալ գրելու : Եւ երբ տեղական ժողովրդե-  
ան վերաբերեալ որ եւ իցէ պաշտօնագիր խմբագ-  
րել պէտք լինէր , Արքայելիկին բարեյօժարութեանը  
կը դիմուէր , եւ սա՛ սիրով պատրաստականութիւն  
յայանելով՝ իսկոյն կը գրէր գեղեցիկ մտքով , վէթա-  
բացատրութեամբ , նուրբ խորհրդածութեամբ եւ  
եւ ընտիր շարադասութեամբ :

Շատ անգամ Արքայելիկին բարի խորհուրդնե-  
րէն կ'օգտուէին քաղաքացիք , եւ անոր լուսաւոր  
եւ կրթական գաղափարներն՝ արդէն մեծ գովեստիք  
եւ համբաւով ո՛ւր տարածուած չէին :

1847 թուականին՝ երբ Վեհապետեան Մատթէոս  
Արքեպիսկոպոս<sup>(1)</sup> , Պեսարապիոյ եւ Նոր-Նախիջե-  
ւանայ վիճակին Առաջնորդութեան կոչուելով , եկաւ  
յայս վերջին քաղաք , տեսաւ մօտէն Միքայելի մտա-  
ւորական կարողութիւնը եւ գնահատելի ձիրքերը ,  
եւ անոր յարմարութիւնն անձամբ փորձելով՝ ու-  
ղեց քովն առնուլ նախ ի Փոքրաւորութիւն , եւ ա-  
պա ի Գրագրութիւն :

Այս պաշտօնին մէջ միշտ սիրուեցաւ եւ գնահատ-  
ուեցաւ Միքայել , եւ ի վարձատրութիւն՝ Մատթէոս  
Եպիսկոպոսն , Եկեղեցական չորս աստիճաններն

---

(1) Վեհապետեան Մատթէոս Արքեպիսկոպոս՝ 1866ին  
Գէորգ Դ-ի կաթողիկոսական ընտրութեան ժամանակ , հա-  
մագլային պաշգամաւորաց կողմանէ՝ ընդհանրական Հայ-  
րապետութեան յաջորդ ընտրելին քուէակրուած է :

տուաւ նմա, միանգամայն ընտրելով իրեն՝ Քարաու-  
քար-Թարգման :

Սոյն փափուկ պաշտօնը՝ վեց տարի ամենայն  
յաջողակութեամբ շարունակեց Միքայէլ, գոհացնելով  
իւր մեծաւոր-Սրբազանը եւ միանգամայն սիրելի  
հանգիստացաւ Նոր-Նախիջուանայ համայն ժողո-  
ւիրդեան :

Եւ արդարեւ Միքայէլ՝ իւր պաշտօնավարութեանը  
մէջ փորձով ցոյց տուած ձեռնադասութեամբը եւ  
ուղղամտութեամբը ընդ միշտ օգտակար եւ անձուէր  
եղաւ Նորին Սրբազնութեան, անանկ որ ոչ մի  
վիճակային գործ՝ առանց Միքայէլեան խորհրդոյ  
չէր տեսնուէր :

Կը պատմուի թէ՛ Մատթէոս Արքեպիսկոպոս՝  
Էջմիածնայ Սինդականաց ոմանց նախանձը գրգռե-  
լով, բարձրագոյն ուշադրութիւն հրաւիրած էր վրան :  
Այս պատճառաւ Ջալալեան Սարգիս Եպիսկոպոս՝  
Էջմիածնէն քննիչ կուգայ ի Քիչնե :

Եւ վեհապետեան Մատթէոս Արքեպիսկոպոս՝  
մի եւ նոյն պաշտօնով անդէն կը փոխադրուի յԱժ-  
տերխան :

Միքայէլ կը բաժնուի իւր հոգեւոր Տիրոջմէն . եւ  
ազգային մտտենագրութեան կը նուիրէ իւր բովան-  
դակ ժամերը :

Միքայէլ դիտէր ինքզինքը մխիթարել իւր նա-  
խասիրական գրականութեամբը, սակայն անդին՝  
Մատթէոս Սրբազան՝ իւր նոր պաշտօնավայրին մէջ,  
որո՞յ խորհրդովը պիտի շարժէր եւ մխիթարուէր :



Բողոքովին անօգնական եւ լքեալ կզգար անձը Նորին Սրբազնութիւնը՝ առանց Միքայէլի լուսամբա խորհրդոցը, որոց կարօտը կը քաշէր միշտ. կազէր որ յարմար եւ մտասկայ տաթիւ իւր քովն հրաւիրէ ձեռնասուն Միքայէլը, եւ պարբերաբար անոր հետ թղթակցութեամբ կը հաղորդակցէր եւ զազափարոց փոխանակութեամբ երբեմն կը լուսաբանուէր :

Պատեհ առիթ մը ստեղծելով Սրբազանը՝ կարեւոր հրաւիրաթուղթ մը կ'ուղղէ առ Միքայէլն, յորում ի մէջ այլոց, հետեւեալ պարբերութիւնը շեշտուած է .

«Դիտարութիւն ունիմ մի ազգային դպրոց բանալ Հասարխանու մէջ, բայց շատ արգելներ դիմացս կան . ուսի չեմ իմանում ինչպէս կ'աւարեմ դիտարութիւնս, անա դարձեալ թեզ եմ դիմում եւ քո ճորհով յոյս ունիմ յառաջ քանի յայս գործը :»

Այս միջոցիս Նոր-Նախիջեւանու մէջ՝ եկեղեցապատկան դրամոց խնդիր մը ծագեցաւ, որ եւ ազգային լրագրաց մէջ ոչ նուազ կծու քննադատութեան օրուան հարց դարձաւ :

Այս առիթն տեղական ժողովուրդն երկու կուսակցութեան բաժնուեցաւ, Ղալիպեան կուսակցութիւն (1), եւ Հայրապետեան(2) կուսակցութիւն ա-

---

(1) Յարութիւն Ղալիպեանի կուսակցութիւնը, նաեւ Այվազովսկեան կուսակցութիւն ալ կ'ըսուէր :

(2) Կարապետ Մարգարեան Հայրապետեանց՝ Քաղաքազուխ է Նոր-Նախիջեւանայ :

նուններով, ճիշտ այն ժամանակները, որ ի Պոլիս  
ալ՝ Լուսաւորեալ եւ Խաւարեալ ի կուսակցութեանց  
ներակակիր պայքարը հը մզուէր :

Նոր-Նախիջեւանի ժողովուրդն՝ — որչափ զի-  
տեմք — մեծամասնութեամբ Ղալիպեանի դէմ էր,  
եւ համակիր կը գտնուէր՝ Հայրապետեան կուսակ-  
ցութեան դատին, որու կը վերաբերուէր, եւ կըր-  
նամք ըսել, նախախոյեանն էր նաեւ Միքայէլն :

Այս թեր ու դէմ կուսակցութիւններն՝ Նոր-Նախ-  
իջեւանի մէջ՝ ժամանակին մեծ դերեր խաղացին :

Ղալիպեան Յարութիւն՝ իւր հիմնած համանուն  
գիշերօթիկ Ուսումնարանով, Տպարանաւ և այլ հաս-  
տատութիւններով, դարձեալ չ'կրցաւ ժողովրդեան  
վիրաւորեալ խիղճը բուժել եւ բաւականութիւն տալ :

Միքայէլ՝ ասպարէզ նետուեցաւ, եւ իւր հակա-  
խոյեաններուն հետ կը պայքարէր անյողողող՝ բանիւ  
եւ գրով, մի միայն Յկեղեցւոյն շահը եւ իրաւունք-  
ները պաշտպանելու մտօք :

Սակայն այսքան հոգեկան տքնութիւնք, եւ անձ-  
նագոհ աշխատութիւնք՝ կարելի էին հակահարուածը  
չունենալ :

Անդէն եւ անդ սկսան հալածանքներն գրամար-  
տիկոս Միքայէլին դէմ. առ այս՝ բողոքներ ուղղուե-  
ցան աստ եւ անդ :

Ժողովրդեան հակառակ մարմինը՝ յիջմիածին գրե-  
լով, կը պահանջէր որ իրեն գոհացում տրուի, պէտք  
եղած պատիժը տնօրինելով աչքաբաց եւ անհաշտ  
ոտխ Տիրացուին դէմ :

Միքայէլ՝ իրրեւ մարդ, այլ եւս ձանձրանալով  
եղած գծուծ դարձուածքներէն, չուզեց մնալ ընդ

հոգեւոր աստիճանու , այլ խնդրագիր ուղղեց յէջ-  
միածին առ Սինսօն , որ զինքն հոգեւորականութենէ  
արձակէ : Սակայն Մայր-Սթոաէն՝ հակառակ պատ-  
գամներ կորոտային , եւ կը պահանջէին՝ անոր ան-  
հրաժեշտ ներկայութիւնն յէջմիածին , անշուշտ միա-  
կողմանի լուսած լինելով խնդիրն , ըստ այնմ՝ նկա-  
տողութեան ագնուած էր :

Միքայէլ փոխանակ յէջմիածին եղեալու՝ 1853ին  
ի Մոսկուա կ'երթայ , եւ աստի՝ ի Ս. Բեդրսպուրկ  
ժամանելով , եւ քննութիւն ասպով կը հաստատուի  
Մոսկուայի Լազարեան Ճեմարանի Հայերէն գտա-  
տուութեան պաշտօնի մէջ : Եւ երբ այն նոր սասան-  
նած պաշտօնավարութեան համբաւն կը հասնի յէջ-  
միածին , յայտազկաններն զինքը այս պաշտօնին մէջ  
եւս հանգիստ եւ խաղաղ չեն ուզէր թողուլ :

Մինչ այս եւ մինչ այն՝ Միքայէլ կը կանչուի  
տեղւոյն Հայոց հոգեւոր վարչութենէն կարծուե-  
լով որ՝ Միքայէլ , տակաւին հոգեւորական կոչ-  
ման կամ շրջանակի մէջ կը գտնուի , եւ իբրեւ այն՝  
ստորագտնեալ է Սինսօքի իշխանութեան , աստի , ա-  
ռանց Լազարեան Ճեմարանի Տեսչութեան իսկ կան-  
խագեկոյց լինելու , կը հարցաքննուի Միքայէլ :

Հարցաքննութեան հետեւեալ օրը՝ Մոսկուայի հան-  
գուցեալ Տէր Մովսէս Գահանայի եւ ուսուցչապետ  
Մտեկիաննոս Նազարեանցի յարգարանայ եւ ասիպ-  
մանց վրայ Միքայէլ անմիջապէս հրաժարական  
կ'ուտայ իւր ուսուցչական պաշտօնէն , եւ պաշտօնա-  
թղթերն Ճեմարանէն բերելով կը ներկայացնէ որո-  
քք անկէ , ասպացուցանելու համար թէ՛ ինքն զա-  
խտաական տիրացու մը չէր , եւ չէ , այլ հոգեւորակա-

նութիւնը՝ սրտշտօնական նեւտերադութեամբ կանու-  
վն թողած աշխարհական մ'է ստոյ, հաստատեալ  
նայն իսկ ներսէս Կաթողիկոսի ասորադրութեամբը,  
եւ Հայոց լեզուի ուսուցիչն լինելու պատիւն ունէր  
կազմեանց ձեւարանին մէջ :

Բայց որու փոյթ . եղածն եղած էր :

Միքայէլ՝ իւր բազդին Գահր չըրաւ , այլ սոյն  
Թշնամութիւններէն եւս առաւել ոգեւորուելով, մտաւ  
կրթութեան խորը , եւ ցրտականացաւ միայն Հայ-  
կարան մնալ , այլ հետեւեցաւ Եւրոպական լեզու-  
ներու ուսման , գրագիտութեան եւ գիտական ճիւ-  
ղերու ծշակման , որպէս զի Համազասարան մտնելու  
դիւրութիւն ունենայ :

Քիչ ժամանակուան մէջ Միքայէլ կը յաջողի իւր  
մթերած ուսժուներովը Մոսկուայի Համալսարանի  
բժշկական բաժնին մէջ մտնել եւ Բրոֆէսէօրներու  
աւանգած դասախօսութիւնները լսել եւ վերահաս  
լինել : Եւ սակայն սոյն բժշկական ճիւղը՝ Միքայէլի  
Ֆիզիքական կազմութեանը հեշտ չէք գաք , ուստի  
զապնթացը չաւարտած , եւ քննութիւն չստած ,  
բժշկական բաժնին կը թողու , եւ Արեւելեան լեզու-  
ներով կը պարսպի :

Եւրոպական լեզուաց կիրառութիւնը գործնա-  
կանապէս վայելելու , եւ միանգամայն ճգախոսու-  
թիւն ընելու համար 1856ին եւ 1858ին Եւրոպա-  
կան ճանապարհորդութիւն մը ըրաւ :

Այս ուղեւորութեանց մէջ տեսաւ Վոսիօրը ,

Վիեննան , Վենետիկը , Փարիզը , Լոնտրա եւ այլ քաղաքներ , որոց ամենուն մէջ ալ նշանաւոր բարեկամներ վաստկեցաւ եւ երեւելի անձնաւորութեանց հետ ծանօթացաւ : Մանաւորապէս կը յիշուի Փարիզեան կեանքը , որ շատ ճոխ անցուցած է շնորհիւ Փարիզաբնակ Հայ վաճառականաց , որք իրեն ձեռնտուութիւն եւ մեծ պատիւ ըրած են՝ երեւելի ուսեալ անձ մը լինելուն պատճառաւ :

Այս ուղեւորական տպաւորութեանց մէջ էր՝ որ գրեց եւ հրատարակեց իւր նամակներն , եւ բանաստեղծութեանց մեծ մասը ոգեց , որ ցարդ անտիպ մնացած է , եւ կըսուի թէ՛ Ազափիրեանց Գրիգոր Եպիսկոպոսին քովը մնացած է :

Ահա՛ այս բանաստեղծական հաւաքածոյին համար է ; որ 1868ին կը գրէր Պ. Միքայէլ Տէր-Գրիգորեանց՝

« Իր կենդանութեան ժամանակ քանիցս ասել է մեզ—եւ այդ նորա մօտ բարեկամներին էլ լաւ յայտնի—թէ մի օր տված է եղել Հ. Ազափիրեանցին ոտանաւորների տետրակ , որ վերջինս առել տարել է իր հետ եւ այնուհետեւ էլ չէ վերադարձուցել հեղինակին . իսկ Պայտարեանցը իր կողմից , բանի տեղ չդնելով այդ ոտանաւորները , աւելորդ էր համարել պահանջել նորանից : Մեզ շատ ցանկալի էր իմանալ թէ արդեօք ի՞նչ տեսակ ոտանաւորներ են այդ վերոյիշած տետրակի մէջ բովանդակած ոտանաւորները : »

Յետ սոյն ուղեւորութեանց, Միքայէլին ամենէն աւելի գրական փայլուն օրերը կսկսին, եւ ինչպէս բնական է, որ պատահական ուղեւորութիւններն՝ շատ անգամ մեծ ներշնչութիւններ կը գործեն գրագիտին մտքին եւ սրտին վերայ, նոյնպէս, Միքայէլ ալ զուարթ զազափարներով սողորեալ՝ կը սիրէր այլ եւս գրել, եւ առատ գրել:

Սակայն գրելու համար կայանն մը պէտք էր, ժողովրդեան հետ խօսելու համար բեմ մը պէտք էր: Եւ ասոր համար փափաքեցաւ, որ իւր մատենագրական փորձերն՝ հրապարակագրութեամբ սկսի, եւ արդարեւ 1858ին իրեն մտքին առջեւ նոր հորիզոն մը պարզուեցաւ ի Բեդրսպուրկ, երբ ուսուցչապետ եւ տաղանդաւոր Ստեփաննոս Նազարեանց կը հրատարակէր Հիւսիսափայլը, որուն գլխաւոր աշխատակիցը կը լինի Միքայէլ:

Նազարեան եւ Ղազարեան՝ արդէն իրարու խիստ մտերիմ եւ գաղափարակիցներ էին: Երկուքն ալ ոչ փառասէր էին, ոչ փարայասէր, եւ ոչ ծակ տոհմասէր, այլ իրենց փառքը եւ շահը կեդրոնացուցած էին մտքի եւ սրտի ազնուութեան մէջ: Ուստի, սիրտ սրտի, միտք մտքի, եւ ձեռք ձեռքի տուած՝ սկսան գրել Հիւսիսափայլի մէջ, եւ արդիւնաւոր եւ յաւերժական գրական յիշատակներ թողուցին Հայ հրապարակագրութեան ասարեգրութեան մէջ:

Նազարեան՝ լեզուին փիլիսոփայութիւնը գիտէր: Լուրջ գրող էր, եւ Արեւմտեան բարբառներէ զատ, Արեւելեան լեզուաց գրեթէ շատին քաջածանօթ էր:

Իսկ Ղազարեան՝ ամէն բան ծաղրելու կամ ձաղկելու ձեւ մը ունէր, զոր օրինակ, «աշխարհական»

բանու անդ՝ տառադարձութեամբ՝ Կարախառնեան  
կը գրէր, եւ ընդեւորական ըստին տեղ, Սեւրեմ-  
կոսեան կը գործածէր :

Մշակած էր օտար լեզուներէն՝ գլխաւորապէս  
Ռուսերէնը եւ Ծրանսերէնը :

Մայրենի լեզուին մէջ կրնամք համարձակ ըսել  
թէ՛ լաւ Հայագէտ էր . եւ աս յայտնի է թէ՛ նոյն  
ժամանակի Ռուսահայ գովիկ գրողներէն մին հա-  
մարուած էր :

Աւելի բառ շինող էր, քան բառ գանող : Թէեւ  
հետամուտ էր միշտ գաւառաբարբառին, Բանա-  
քեռցի Խաչատուրին պէս, որոյ Վէպն՝ բառերու  
չտեսարան է, Արարատեան Աղեքսանդրի պէս, որոյ  
գրած հիմնարկութիւն գաւառական ուսումնարանի  
վէպը՝ լեզուաբաններու ուշ եւ ուրուշն դրուած է,  
Պերճ Պոռչեանցի պէս, որոյ երկասիրած Կոռուածա-  
դիկ, Հացի խնդիր, Տեցեր, Պոճէ (Պաղտասար) Սօս  
եւ Վարդիթեր եւ այլն Վէպերը՝ տեղական ժողո-  
վրդական բարբառոց հարուստ գանձարաններ են,  
եւ լեզուի ուսումնասիրողներն կատարելապէս կը  
յօգնեն եւ կը գոհացնեն :

Միքայել՝ հեղինակական փառասիրութիւն չու-  
նէր : Իւր անձէն աւելի՝ պրած յօդուածոց եւ պատ-  
բաստած երկասիրութեանց օգտակարութիւնը  
վնասէր : Այս պատճառաւ զարկանուէնէրով ի հօս  
պարակ կը հանէր յօդուածները, կեղծ ստորագրո-  
թիւններով կ'աբաստանէր իւր անկեղծ ներշնչու-  
թիւններն :

Ասիական սել կը տարակուսէր թէ՛ սել էր Կովսը, կըսէ Էմմանուէլը, Փառօն Յոյակեանը կամ Արմէն Մանկիկեանը :

Թողումք Հիւսիսափայլի մէջ զիտնական Առեփաննոսի գրածներն, յիշե՛մք Միքայէլի սուր զրչէն եւ նուրբ մտքէն արտադրեալ յօդուածները :

Գնահատութեան արժանի են Միքայէլի Յիւսիսափայլանները՝ որ օրագրաց կոկիկ քաղուածոյ մ'էն Նոյնպէս, ոչ նուազ գնահատելի է «Մեռելոց խօսակցութիւնը»՝ Մեռելահարցուկ վերստուտութեան տակ :

Յիշե՛մք նաեւ «Մխիթար Սերաստացի եւ Մխիթարեանք» յօդուածը. — «Հանդէս նոր Հայխօսութեան 1. հատորի վրայ, եւ ժողովրդական լեզուով թարգմանուած եւ արուած Ռօքինգօնի պատմութեան վրայ ըրած սրամիտ քննադատութիւնները, — Առ հրատարակիչն Հիւսիսափայլի ուղղած նամակները. — Նկատողութիւնքը. — Թալխուանեք վերնագրի տակ՝ ժողովրդական նախապաշարմանց դէմ գրածները. — Մանացուցակ՝ Աբրահամ Պօղոսեանց փաստարանի եւ Գէորգ Գեղամեանցին, — Դամասկան ճառ. — 1794 եւ 1795ին Կալկաթայի Մասէն Բարաջանեանցէն Նոր-Նախիջիւանին կտակուած Ազգային ժառանգութեան մասին գրած առաջնորդող յօդուածը եւ հրիտակաց օրինակները. — Մանկուրեան օրեր եւ Առաջարկութիւն եւ այլ բանաստեղծութիւնները. — Յայտարարութիւն աշխարհաբարկան քարտէսի մասին. — Աշխարհի կազմածը եւ նորա հրաշքները. — Դքսուհի տը Շելլէօզ եւ Պրօպիլըրիս Բօսսի, եւ այլ թարգմանական գործերն հնչտութեամբ կը կարդացուէին ամեն զասակարգի



վերաբերող ընթերցողաց կողմանէ : Թէեւ չմոռնամք յիշատակելու թէ, երբեմն ալ Միքայէլի խայթիչ գրիչն՝ կը վերաւորէր նոյն խոյ իւր բարեկամներէն ղումանս :

Միքայէլ՝ տեսակ մը Ուղեւոր-Սմբազիր էր, կամ շրջիկ հրապարակագիր :

Ինքը՝ գրեթէ ամենուրեք էր : Եւ ձայնը կը լսուէր մերթ Վոսփորի ափունքէն եւ մերթ Աւստրիական սասանէն, երբեմն Սէն դետի եզերքէն, եւ երբեմն՝ Թայմզի խորէն :

1859ին վերջերն վերադարձաւ ի Ռուսաստան, եւ 1860ին քննութիւն ացնելով Բեդրսպուրկի Կայսերական Համալսարանին մէջ, Արեւելեան լեզուագիտութեան կանդիտատի աստիճանն ստացաւ :

1861ին Ռուսաց արդի մայրաքաղաքէն մեկնելով՝ ուղեւորեցաւ ի Մոսկուա, ի Նոր-Նախիջեան, ի Տփղիս, յԵրեւան եւ յԷջմիածին եւ տեսնուեցաւ Մատթէոս Կաթողիկոսի հետ, եւ բաւական պրպտեց՝ Մայր-Աթոռոյ մատենադարանի գրչագիր նախնեաց մատենագրութիւնները :

\* \* \*

Միքայէլ՝ Էջմիածնէն ոտքով կերթայ 12 վերս հեռաւորութեամբ Օշական գիւղը, եւ Ս. Մեսրովպայ գերեզմանին<sup>(1)</sup> այցելելով, ներշնչմամբ կը գրէ հետեւեալ տողերը,

---

(1) Յայնժամ Օշականի եկեղեցին վերաշինուած չէր, Եւրոպայէն սկիզբէն մնացած հնուքիւն մ'էր : 1879ին Քէրզ Դրդ. փառաւորապէս կառուցանել տուաւ զայն :

« . . . Իմ աչքիս ի՞նչ երեւաց՝  
Մի շինուածք կիսակործան ,  
Որի գլխին կորացած  
Երկաթեայ խաչ Քրիստոսեան :

. . . Պարխալեալ տաճարի մէջ .  
Քրիստոսեան սեղանի տակ  
Ննջում է այն մեծ հայրը . . .  
Գեանափոր այն բեմի տակ  
Սողալով պէտք է մտնել  
Եւ անթափանց խաւարում  
Քարը մոմով տեսանել » :

Այս մասը՝ Ս. Մեսրոպայ համար :

Հապա՛ առնթեր ուրիշ ոչ նուազ նուիրական  
գերեզմանի մը համար՝ տեսէ՛ք , ի՞նչ կը գրէ ,

« Տարեւոր փոշով ծածկած ,  
Տաճարի պարսպի տակ  
Կայ մի ծակ , որ օձի պէս  
Կարէ մտնել մարդ միայնակ  
Առ խարխափ շօշափելով :  
Գտանվում է այն ծակի մէջ  
Քարի ծայր . . . անգիր . . . անշուք :

Այդ ի՞նչ քարէ այդպէս անտէր . —

Հսելով պատմում է քեզ  
Գիւղական խեղճ Քահանան  
Թէ այստեղ ամփոփուած է  
Մեր նահատակն Ամատունեան ,

Ազգը նորան զլացաւ .

Կառուցանել մի գերեզման : »

Երբ այս ուղեւորական շրջանին մէջ Նոր-Նախիջեւան հանգիպեցաւ Միքայէլ, Մասէհ, Բարաջանեանցի<sup>(1)</sup> կտակի հարցը արծարծուած գտաւ :

Նախիջեւանցիք՝ մեծամասնութեամբ խորհուրդ կազմեցին, եւ օրինական ձեւակերպութիւններ կատարելով՝ պաշտօնապէս իրենց ներկայացուցիչ կարգեցին զՄիքայէլ :

Սոյն ընտրական պարզ գործողութեան մէջ իսկ Ղալիպեան կուսակցութենէն միջադէպ մը տեղի ունեցաւ, պատճառաբանելով թէ՛ « Առանց Առաջնորդի հաճութեան եւ վաւերացման, ընտրութիւն մը՝ օրինաւոր չէ, անդոր է, » եւ այլն :

Միքայէլ՝ նոյն միջոցին անդ կը գտնուէր . յօտին կանգնելով՝ այդ ծակ առարկուներուն կշտամբանօք պատասխանեց, եւ յաւելցուց թէ՛ ընաւ պէտք չկայ Առաջնորդի հաւանութեան եւ ստորագրութեան, եւ թէ ինքը՝ այդպիսի ձեւակերպութիւն մը անպատեհ իսկ լինելն ապացուցանելէ յետոյ, կսպառնայ ներկայից՝ հրաժարելու նոր ընտրուած պաշտօնէն, եթէ Առաջնորդի իրաւասութեան տակ գործելու խնդիրն յեղեղուի :

---

(1) Այս մեծահարուստ ազնային՝ բնիկ Մարտուանցի կը կարծուի :

Ընդդիմադիրք՝ Միքայելի դառն պատասխաննե-  
րէն անձնական արժանապատուութիւննին կարի վի-  
րաւորուած նկատելով, հատուցում կը պահանջեն,  
եւ մինչեւ իսկ պաշտօնական ատեանի կը դիմեն :

Պաշտօնական ատեանը կարեւորութիւն չտար  
բողոքարկուներուն :

Մինչ այս եւ մինչ այն, եւ ահա՛ էջմիածնէն  
Մատթէոս Կաթողիկոսի ստորագրութեամբ վաւե-  
րացեալ հաւատարմագիրն ի Նոր-Նախիջեւան կը  
հասնի Միքայելի հասցէին, Հնդկաստան երթալով  
Մասէհի կտակը վերականգնելու համար :

\*  
\*  
\*

Միքայել՝ նախ ի Տփղիս եւ անտի ի Պոլիս կուգայ  
եւ կը ծանօթանայ եւ կը մտերմանայ Մեղուի Ար-  
տօնատէր-Սմբագիր Սըվաճեան Յարութիւնի, եւ  
Մեծ-Նոր Ոսնի պզտիկ դրանը մէջ հաստատուած  
Ընթերցարանի անդամոց հետ : Երեկոյ մը կը հրա-  
ւիրուի ի Բերա, Արեւելեան Թատրոնին մէջ իմաս-  
տալից ճառ մը կարտասանէ, որ բուն ծափահա-  
րութեամբ կընդմիջուի եւ կը գնահատուի, եւ օրինա-  
կըն կը հրատարակուի նոյն տարւոյ Մեղու հանդի-  
օին մէկ թուոյն մէջ : Թատրոնին գիշերը՝ շատ կը  
հաւնի դերասանուհի Արուսեակ Փափազեանի ձեւե-  
րուն, եւ կը շնորհաւորէ խանդաղատանօք :

Կը հիւրընկալուի քանիցս՝ յիւսկիւտար Եազըճը-  
Պօղոս Աղայի տանը մէջ :

Նոյն տարւոյ Մեղուներուն մէջ Միքայել՝ կարգ  
մը յօդուածներ հրատարակած է Տէրոյննցի գէմ, ո-  
րոց պատասխանած է Տէրոյննց դեւերու գոյութիւնը  
փաստարանելով :

ի մէջ այլոց , կը յիշեմ Միքայէլին՝ Մեղուի 119 թուոյն մէջ (1860 Դեկտեմբեր 20) հրատարակած մէկ նամակը , որոյ դէմ Չամուռճեան Տէրոյնց Պատուելին՝ երկար յօդուածով պատասխան գրած է Երեւակի 87 թերթին մէջ , 1860 օգոստոս 1. (որ երեւած է 1861 Յունվարի վերջին օրերը) :

Միքայէլ երբ վերջին անգամ Պոլիս ուղեւորեցաւ , Մասիս , Մեղու , Մանգումէ եւ այլ ժամանակակից բոլոր լրագիրներն գովեստիւք ողջունած են նորա գալուստը , բաց ի Տէրոյնցի Երեւակէն ; Տէյիրմէնճեանի Արեւելեան դարէն եւ Վարդան Փաշայի խմբագրած Մէնմուլայէն :

Պոլիսը թողլով՝ կերթայ Փարիզ , ուր այս անգամ եւս մեծ ընդունելութիւն կը գտնէ , եւ Շահնազարեան կարապետ Վարդապետին հետ կը տեսնուի :

Այս բացակայութեան մէջ՝ Տէրոյնց Պատուելին ալ Միքայէլի դէմ Մեղուի մէջ նամակ կը հրատարակէ :

Միքայէլ՝ Փարիզէն Երկու տղով կը պատասխանէ , ձաղկելով Տէրոյնցին , հարուածելով Այվազովսքիին , որոյ Վարդապետարանի քննութիւնը արդէն գրած եւ ղրկած էր Մատթէոս կաթողիկոսին , ուշադրութեան առնուելու համար , յորում Հոովմէականութիւն կը բուրէր :

Կարդացողներ կան այս քննադատութիւնը , բայց տպուած չէ այս եւս՝ ուրիշ ձեռագիրներուն պէս :

---

(1) Եւ իրուունք ունի Միքայէլ Տէր-Գրիգորեանց , կը հաւաստէ քամաղղ Միքայէլիկին համար Սէ՛՝ Մեծաւ զարմացնումէ թէ , Ներսէսին (Աշտարակեցւոյն հա

ի Փարիզ Երկու տող յիշատակութիւնը ձգելով, կը ճանապարհորդէ Միքայէլ ի Լոնտրա, ուր Հնդկաստանի կտակի վերաբերեալ խնդրոյ մասին, տեղացի ձեռնահաս եւ օրէնսդէտ փաստաբան համարուող Զանգակ լրագրոյն խմբագրապետին հետ խորհրդակցութիւն մը կը կատարէ, եւ խնդիրն Անգղիական օրինաց տրամադրութեանց համաձայն ռ.ս.ու.մնասիրելով՝ կը վերադառնայ ի Փարիզ, եւ անդ քանի մը օր եւս մնալով՝ կանցնի յԱղեքսանդրիա եւ անտի՝ ի Գահիրէ, ուր կը մնայ այն պանդոկը, ուր ես ալ 1878ին հիւրընկալուած էի:

Միքայէլ՝ Գահիրէի մէջ եւս Հնդկաստանի կտակի մասին՝ տեղւոյն Անգղիոյ Հիւպատոսարանի հետ կարծեաց փոխանակութիւն մը կունենայ, եւ ոմանք կը հաւաստեն իսկ թէ՛ Միքայէլ ի Կալկաթա դեռ չժամանած, կտակի գործն արդէն Լոնտրայի եւ Ե-

---

կըսէ) եւ թէ Մկրտիչ Վարժապետին, որքան բովանդակութեամբ, այնքան եւ լեզուի կանոնաւորութեամբ: Բայց աւել, այդ շարտորութիւնը (յափ յափոյ գրուած մը) որից կարելի էր եզրափակել մասամբ նորա մտաւորական զարգացման աստիճանը այն ժամանակ, մեր համար բոլորովին կորած է, որպէս եւ շատ ուրիշ այդպիսի գրաւոր աշխատութիւնք կորած են Մոսկվա գալուց առաջ: Գուցէ թէ այդ շարտորութիւնը զենվի հանգուցեալ Մկրտիչ վարժապետ եզենեանի թղթերի մէջ:»

Եւ մեր ուրախացանք՝ երբ կարդացինք Տիգրան Երեւոյ լրագրոյն մէջ թէ՛ Միքայէլի գործերուն հաւաքածոյն պիտի հրատարակուի՝ եւ առդէն մի քանի անտիպ նամակներն ալ հրատարակուած էին նոյն լրագրոյն մէջ:

գիպտոսի մէջ վերջնականապէս կարգադրած էր իրաւախօսութեան մտնելով :

Ինչ որ ալ ըլլան այս զրոյցք, հաստատ աղբիւրներէ ստուգուած է որ մինչեւ ի Կալկաթա ուղեւորած է Միքայէլ, Սուէչի ուղեգծով եւ Կալկաթայի Եղբայրասէր անուն լրագրոյն 26րդ թուոյն մէջ ալ թէ՛ Մասէն Բարաջանեանցի կտակի մասին եւ թէ՛ Նոր-Նախիջեւանի կողմանէ ներկայացող Երեսփոխան-Միքայէլի նկատմամբ գրաբառ լեզուաւ առաջնորդող գեղեցիկ յօդուած մը տպուած է, որ 1863ին 210 թիւ Պոլսոյ Մեղուի մէջ եւս արտատպուած է :

\*  
\*  
\*

Միքայէլ՝ Կալկաթայի մէջ ալ բաւական դժուարութեանց կը բաղխի, բայց հուսկ ուրեմն իւր անյողզողը հաստատամտութեամբը, ամեն խոչնորու եւ խութերու յաղթելով՝ գրեթէ եօթանասնամեայ կորուսեալ կտակին մի մասը կը յաջողի ազատել : Եւ ահա՛, Միքայէլի նախաձեռնութեամբն կենդանացեալ այդ գումարով՝ Նոր-Նախիջեւանի Սահակ-Մեսրոպեան Դպրոցը կը կառուցուի, որ քաղաքացւոց նըպաստովն ալ դեռ կը շարունակուի :

Սակայն չգիտեմք թէ, գէթ Հրեշտակապետաց տօնախմբութեան օրն՝ մի յիշատակութիւնը կը լինի՞ Միքայէլին, որ այդ կտակին համար այնչափ նեղութիւն եւ հալածանք կրեց :

Միքայէլ՝ այս ուղեւորութեան մէջ՝ օտարազգ անբաժանելի ընկեր մը կունենայ, եւ երկաթուղւոյ մէջ ծանօթանալով եւ մտերմանալով, կուղեկց

Լոնարայէն սկսելով մինչեւ Գանդէսի ւափունքը :

Միքայէլի գրած մի նամակէն յայտնի կերեւի որ, տոյն ուղեւորութեան յուշատետարը՝ շատ հարուստ էր. մանրամասնաբար նիշուած էին՝ այլ եւ այլ քաղաքաց մէջ գտնուող Հայոց վիճակը, հետաքրքրական եւ նկարագրական կողմերը, շահագրգիռ տեղեկութիւններ, այս ամենքը՝ օր մը դասակարգելով հրատարակել տրամադրուած էր :

Եւ Միքայէլ Գանդէսեան յաջողութեամբ, Եգիպտական բուրգերու ուսումնասիրութեամբ կը վերագտնայ 1862 Յունիտի մէջ ի Բեդրապուրի, եւ աստ 25 օր մնալով, ճանապարհորդական յոգնութիւնը առնելու միջոցին՝ կը պատրաստէ նաեւ հին աշխարհագրական տախտակ մը, որ քիչ ժամանակէն տպել տալու առաջադրած էր :

Յետոյ, Միքայէլ ի Մոսկուա երթալով՝ եօթնեակ մ'ալ հոս կանցնէ, եւ ապա ճանապարհը կուղղէ ի Նախիջեւան՝ ծննդավայրը. իւր գործոց համարատուութիւնն ընելու քաղաքացւոց, կտակեալ գուժարէն ձեռք բերած մասն յանձնելու Հոգաբարձուաց ինչպէս վերեւն ըսինք—ի շինութիւն Սահակ-Մեսրոպեան Վարժարանին՝ ծախսելու համատ :

Միքայէլի բոլոր բարեկամները՝ սրտատրոփ կուրախանային թէ՛ ողջամբ վերագարծին եւ թէ՛ կտակի՛ մասամբ գործադրութեան յաջողութեանը համար :

Իսկ Միքայէլ՝ ըստ որում Սոկրատին, Կոպեբնիկին, Գալիլէին, Լամընէին եւ Պէրանժէին պէս մտածել կը սիրէր, ուստի ազան կամ անազան անոնց բազմակից պիտի լինէր :

Եւ արդարեւ բանտարկուեցաւ Միքայէլ՝ այնպիսի



միջավայրի մը մէջ, որոյ կլիման խոնաւ լինելուն, արդէն ունեցած թոքախառի հիւանդութիւնը օր ըստ օրէ կը ծանրացնէր իւր վիճակը :

Դեռ նոր առանձնացած, ուզեց գրականութեամբ զբաղիլ եւ մխիթարուիլ : Իւր խորին առանձնութենէն Միքայէլ չի վարանիր խնդիր ընել առ մեծանուն Շանշեանց Պետրոս թէ՛ «Այս վիճակին մէջ՝ ի՞նչով պարապի եւ մխիթարուի» :

Եւ Շանշեանց՝ անմիջապէս՝ Զօհրապեան Աստուածաշունչ մը կը զրկէ :

Պայտարեանց՝ հոգեւոր մխիթարութենէն զատ, սկսած է Աստուածաշունչի համեմատական աշխատութիւն մը, բայց դժբաղդաբար երեւցած չէ այդ աշխատութիւնը, որ կիսատ մնալով հանդերձ՝ դարձեալ կարող էր կարեւորութիւն ունենալ :

Այս առթիւ Միքայէլ Տէր-Գրիգորեանց<sup>(1)</sup> կը գրէ թէ, Պայտարեանց առանձնութեան միջոցին ուսումնասիրած է նաեւ Եբրայեցւոց եւ Յունաց լեզուները եւ համեմատեց մեր Աստուածաշունչը Եբրայեցւոց եւ Յունաց Աստուածաշունչի հետ : Եւ կը յաւելու Միքայէլ Տէր-Գրիգորեան թէ՛ «Այս աշխատութեան արդիւնքը, որ կտոր կտոր թղթերի վրայ է գրած եւ մի ամբողջ շարագրութիւն չէ, կաշխատենք, եթէ հանգամանքները ներին, տպել նորա միւս գրուածների հետ ի միասին» :

Եւ սակայն 1868էն ի վեր սոյն հրապարակայլ խոստումը չէ իրականացած :

---

(1) Թարգմանած է Տէր-Գրիգորեանց Էզրուարդ Լարուլ Ազգային կրթութիւն գործը :

Միքայէլ Ղազարեան՝ երեք տարի խորհրդաւոր առանձնութեան մէջ, շարունակ գրականութեամբ զբաղած է, միշտ կարդալով եւ վերծանելով պատմական կարեւոր մատեաններ :

Ահա այս պատմական գրքերով՝ առանձնութեան մէջ պատրաստած է Ղազար Փարպեցւոյ Թուղթի (1) թարգմանութիւնը :

Միքայէլ Պայտարեանց՝ Ղազար Փարպեցւոյն գրած տոմային Պատմութեան թարգմանութիւնն ըրած ըլլալը յայտնած է նոյն իսկ վերոյիշեալ հրատարակուած Թուղթի թարգմանութեան առաջին բացատրութեանը մէջ՝ հետեւեալ բառերով .

«Մենք հաւաքել ենք, ինչ որ այս թղթի եւ պատմութեան մէջ միօրինակ բաներ կան . վկայութիւնք, ակնարկութիւնք, Ս . Գրքից փոխառութիւնք, ձեւ, ոճ եւայլն . բայց երկարութիւնից փախչելով յետ գրինք այս անգամ, պահելով հրատարակել Փարպեցու Պատմութեան թարգմանութեանը հետ : »

Ղազար - Փարպեցւոյն թղթի Թարգմանութեան

---

(1) Ղազար Փարպեցւոյ Թուղթը, 1853ին ձգուեցաւ ի Մոսկուա՝ առաջին անգամ Մկրտիչ-էմինի ձեռօք, որ էջմիածնայ գրասան օրինակէն զաղափարուած եւ Շահխաթունեան Յովհաննէս Եպիսկոպոսէն առնուած էր :

Պայտարեանց՝ Մկրտիչ-էմինին այս Թղթի ձպագրութեան առթիւ ըրած մի քանի սրբագրութիւնիչ, ճուած մի քանի ծանօտութիւնի եւ գրած յառաջաբանութիւնը քննադատած է Պ ՂՂՂ զուրի ներհուն, լուսաբանիչ եւ հարուստ բացատրութիւններով :

եւ Բացասուքեանց Հրատարակիչն կը ծանօթագրէ  
74րդ երեսին մէջ թէ՛

«Այս տեղ պակասումեն մի քանի բացատրու-  
թիւնք՝ գուցէ ծանր հիւանդութեան եւ այլ պատ-  
ճառներով հանգուցեալը կարողացած չէր աւարտել  
կամ պարզագրել, իսկ սեւ օրինակներէ մէջ շարու-  
նակութիւնը եւ վերջը մենք չգտանք: Աստուծու  
փառք, որ գէթ այսքանը յաջողեցաւ մեզ ձեռք բե-  
րել եւ հրատարակել: Բայց գուցէ Պ. Սերովբէ Պայ-  
տարեանցի մօտը եղած թղթերի մէջ գտնվի սորա  
պակասը: Մենք խոնարհաբար խնդրումենք այս  
աղնիւ պարոնից հասուցանել մեր ձեռքը իր մօտ  
գտնված սեւ օրինակները, որ մի օր կարողանանք  
Աստուծու աջողելով այս պատուական աշխատա-  
սիրութեան պակասը լցուցանել:»

(Հրատ. 1868 ին)

Իսկ Միքայէլ Միանսարեանց՝ այս թարգմանու-  
թեան առթիւ գրած է հետեւեալ գնահատիչ տողերը.

«Իւր վերջի տարիները շատ աշխատասիրեց Ղա-  
զարայ Փարպեցւոյ Թուղթը աշխարհաբառ թարգ-  
մանելու:

Այս աշխատութիւնը իւր լեզուի պարզութեամբ,  
կանոնաւորութեամբ, ոճի գեղեցկութեամբ, եւ զա-  
նազան քննողական ծանօթութեամբ պիտոյ է համար-  
վի հանգուցեալի գրաւոր աշխատութեանց պատկը:»

Պայտարեանց՝ ամբոցին մէջ բանաստեղծութիւններ ալ գրած է, ինչպէս նաեւ առածներ, որոցմէ մին կը յիշեմ .

«Օձի փուշը՝ Արագիլն կը մարսէ » :

Միքայէլ՝ ուղղափառ Աշխարհարատեան էր . ուստի իւր հիւանդութեան վերջին ամիսներուն մէջ Փորձ արդի աւելաբար լեզուի Քերականութեան երկին ձեռնարկեց .

Երբ բարեկամաց կողմանէ իրեն ըսուեցաւ թէ՛ մայր գործը՝ թո՛ղ ուրիշներուն , վասն զի հիւանդութեանդ պատճառաւ չպիտի կրնաս ի գլուխ հանել զայն , եւ կիսկատար պիտի մնայ » :

Հեղինակն անայլայլութեամբ կը պատասխանէ . —

« Ես իմ կրցածիս չափն կրնեմ , մնացած մասն ալ թո՛ղ մենէ ետքը եկող յաջորդ սերունդը շարունակէ » :

Եւ իրօք , Միքայէլ՝ հիւանդութեան սաստկութեանը պատճառաւ չկրցաւ շարունակել , այլ թողուց՝ «Ութը մասունք բանի յին՝ մինչեւ Դերբայնբըրը :

Իսկ Միքայէլ Տէր Գրիգորեանց՝ այս մասին կը գրէ .

« Այս Քերականութեան վիճակը մեղ յայտնի չէ՝ նորա թղթերի մէջ մենք չգտանք այդպիսի բան , թէեւ բերդից գրած նամակների մէջ կարողումենք , որ անխոնջ պարապումէր այդ գործին եւ արդէն ինչեւ Բայերը հասուցած էր : Բայց մի նամակին չին էլ ասուածք . «Եթէ ես ինքս չհաւանեմ այս գործն , իմացած եղիք , որ ոչ ով չի տեսնել դրան » : Միւրեք է ինքը հեղինակը չհաւանելով իր գրածին ոչնչուցել է : Երկու նամակի մէջ մասնաւորապէս

խօսում է իր Բերականութեան եւ աշխարհարառի վերայ ; եւ մեծ բաւականութեամբ է խօսում :

\*  
\*  
\*

Իսկ մեք արժան կը համարիմք նոյն իսկ Հեղինակին Ս. Բեզրասպուրկէն գրած երկու նամակներէն քաղուածք դնել այս տեղ , ցոյց տալու համար յիշեալ Բերականութեան ի՞նչ կազմակերպութիւն ունենայր :

Այս նամակներն առ հարազատն ուղղած է , եւ օրուան Հայ լեզուաբանական խնդիրը կը լուսաբանէ :

Առաջին նամակը կը կրէ 12 Ապրիլի 1863 թուականը , որ է , հետեւեալը .

« Անգին Եղբայր .

. . . . . Պէտք է քեզ ասեմ , որ ուղարկածդ այն չէ , ինչ որ քեզանից խնդրել էի : Ըստ որում ես՝ Սայաթ-Նօվայի երգարանն էի խնդրել Սայաթ-Նօվայի երգարանը գրած է ճիշդ եւ յատկապէս այն բարբառով , որով խօսում են Վրաստանի Հայերը : Ինձ հարկաւոր են բուն բարբառները , եւ ոչ թէ լեզուների խառնուրդը : Սայաթ-Նօվայի երգարանը , որ 1852 թուականին տպվեցաւ Մոսկվայում , մի պատուական գիրք է , որի սկզբում գրած է նոյն բարբառի քննութիւնը , Գէորգ Ալավերդեանի աշխատասիրութիւն : Յուսով եմ , որ այժմ հասկացար թէ ինչ էի խնդրում : Մեծապէս կուր խացնէիր ինձ , եթէ ճարէիր իմ համար « Սօս Վարդիթեր » եւ « Վէրք »ը . այստեղ երեւի մեր ծնօթիների մօտ կը գտնվին . աղայումեմ ինչ :

նոցանից եւ ուղարկիր ինձ : Նմանապէս ինձ հարկաւոր են մի քանի ուրիշ գրքեր եւ բառարաններ :

. . . Լեզուի վերայ քննութիւն եմ գրում , յիշողութեանս եւ 20 տարվայ գործունէութեանս շնորքով , որ դարձեալ բաւական չէ :

Առ հասարակ այս իմ ձեռնարկութեան համար շատ քիչ նիւթեր կան . իմ միակ յոյսը պօլէմիկայի վրայ է , որ անպատճառ կը ծագէ այս աշխատութեան պատճառով : Այնուհետեւ , գուցէ , յետաշրջական յօդուածների մէջ կ'երեւին զանազան տեղերից զանազան ձեւեր եւ ես , առ ոչինչ գրելով յիշոցները եւ չպատասխանելով նոցա , օգուտ կը քաղեմ աված խրատներից : Բայց առաւել ուրախ կը լինէի , եթէ մի ուրիշը յանձն առնէր կատարել մի եւ նոյն բանը , ձեռքի տակ պատրաստ ունենալով այս իմ լաւ թէ վատ աշխատութիւնը :

Բայց քանի որ չունինք մեր լեզուի մտաւոր Քերականութիւնը (ճիշդ Քերականութեան մասին դեռ մտածել հարկաւոր չէ) , քանի որ դա վարժապետների եւ աշակերտների ձեռին չէ գործածական , նոր լեզուի գրականութիւնը բնաւ յառաջադիմութիւն կարող չէ ունենալ : Ասենք թէ կարելի է գրել կոկ եւ հարթ ոճով , սակայն դարձեալ դա ժողովրդի համար կլինի օտար ու խորթ . ժողովուրդը այդպիսի գրուած երբէք եւ ամենեւին կարող չէ նրսել , ուրեմն դա չի միանալ նորա բորոյական ազմութեան հետ , վասն զի այդ կոկ ու հարթ րուածքի տարերքը առնուած են ոչ թէ կենդանի , յլ հին ու մեռած լեզուից եւ կազմված են հնացած խտեմայի ազդեցութեան տակ , ուր երբեմն թէեւ

լսվում են կենդանի լեզուից առած նախադասու-  
թիւնք, բայց դրքա առ հասարակ անհետ կորչում-  
են խիստ սխտեմամուլութեան հեղիղների մէջ : Այս  
խօսքերից պարզ երեւում է, որ ես մեղադրում եմ  
ուրիշների հետ միասին եւ իմ անձը, եւ այս խոս-  
տովանութիւնը ամեն սխալից եւ բարձր եմ դասում :  
Մենք առաջինը մտցրինք եւ ընդհանրապէս գոր-  
ծածեցինք զրականութեան մէջ քաղաքական լե-  
զուն : Ահա արդէն 10 տարի ժամանակ է անցել այն  
օրից, երբ առաջին անգամ լոյս տեսաւ այդ լեզուով  
գրած գիրքը, եւ մենք միշտ հրապարակով յայտ-  
նած ենք մեր պատրաստութիւնը ուղղել մեր սխա-  
լերը, եթէ բարեխղճաբար ցոյց տան մեզ . սակայն  
ոչ ոք վստահացաւ այդպիսի աշխատութիւն իր վրայ  
առնուլ եւ բարեխղճաբար պատասխանել մեզ . ընդ-  
հակառակը մեր հրատարիչն պատասխանում էին լոկ  
յիշոցներով, եւ միաբերան արհամարհում եւ մեր-  
ժում էին զրականութիւնից քաղաքական լեզուն,  
այն ինչ հարկ էր նոցա մասնաւորապէս ցոյց տալ  
մեր իսկ մոլորութիւնքը :

Վերջապէս մեր այդ ասպարէզի վերայ ունեցած  
տաննամեայ փորձը, մեր յարաբերութիւնը ժողովրդի  
հետ, բերին մեզ վերոյիշած փրկարար խոստովանու-  
թեան, եւ այդ եղելութիւնը — պէտք է ուրախ  
սրտով յայտնենք — կատարվեցաւ առանց զրամու-  
լների եւ հնութեան պաշտողների օգնականութեան :

Մեզանից ոչ ոք հաշիւ էր տուել իրեն, թէ ք-  
նի խոնարհմունք եւ քանի ժամանակ կայ նոր լե-  
զուի բայի մէջ . թէ եւ այս բանը այժմ ծիծաղելի  
թվում, բայց այսու ամենայնիւ ճշմարիտ իրողո

թիւն է : Իրաւ է , այդ խոնարհմունքներից եւ ժամանակներից մի քանիսը գործ էինք ածոււմ անդիտակցարար , լեզուի հոգուն հնազանդելով , բայց եւ մի քանիսը թողոււմ էինք անգործածելի , ի վնաս մեր նոր կենդանի խօսքին : Թէեւ , խոստովանումենք , շատ անգամ հարկաւորութիւն էր պատահոււմ նոցա գործածելու , բայց մինք դեռ անփորձ եւ անհաստատ հողի վրայ լինելով , ամենայն զգուշութեամբ աշխատումէինք զանց առնել նոցա այնպէս , ինչպէս փորձառու նաւավարը փախչումէ իր ծովագնացութեան ժամանակ վտանգաւոր տեղերից : Ահա այդպիսի անկանոն գործակատարութիւնը — փոխանակ ուղիղ ճանապարհով նպատակակէտին դիմելու , ծուռ ու մուռ ճանապարհով գնալը — յառաջ բերուայն անյարմարութիւնքը , որոնք խորթ էին թվոււմ ժողովրդին եւ ասեա թէ մի անանցանելի պատ էին քաշոււմ գրականութեան ու ժողովրդի մէջ :

Նոր լեզուի մի քանի ձեւերը արհամարհոււմ էինք այն հիման վերայ , որ նոյն ձեւերը չկան հին լեզուի մէջ , ինչու որ գործ էինք ածոււմ միայն այն խոնարհմունքները եւ ժամանակները , որոնք բառական թարգմանութիւն էին հին լեզուի համապատասխան խոնարհմունքներից եւ ժամանակներից . կարծես թէ XIX դարու հայր ստորագրութեամբ պարտաւորվել էր վաղեմի հայերին ապագայում եւս այնպէս խօսել , ինչպէս 2000 տարի առաջ նահապետների ժամանակ խօսում էին : Ահա աններելի սխալ եւ հակառակ մեր սկզբունքի — նոր լեզուն գործածելի անել :

Տուրինի պալատի կամ Ֆլորենդինեան հոկտոր-



ները ընաւ չեն կաշկանդվում Սենեքի կամ Կիկերոնի հեղինակութեամբ . նոցա փոյթ չէ թէ ինչպէս էին խօսում նրանք իրենց ժամանակը , որովհետեւ իրենք իրենց գիտցածին պէս խօսելու կատարեալ իրաւունքը լաւ ճանաչումնն . լեզուն ժամանակի արդիւնք է եւ ծաղկումէ ժողովուրդի հասկացողութեան եւ քաղաքակրթութեան համաձայն . վատ թէ լաւ է ծաղկում — այդ ուրիշ խնդիր է . բայց իրողութիւնը այս է , որ այդ լեզուն , որպէս ժամանակի լեզու , ունի նոյն լիակատար եւ անժխտելի իրաւունքը , որ իր ժամանակին ունեցել է նախընթաց նահապետական լեզուն : Թող այդ . ինչու համար այն լեզուն լաւ է , այս վատ . ո՛ր է այն անպայման կշռաչափը , որ կարող լինի այս հարցուածին պատասխան տալ : Աշխարհիս երեսին անպայման բան չկայ , ամենայն ինչ պայմանաւոր է , նայելով դիտողութեան կէտին : Բայց ինչ բան է դիտողութեան կէտը : Հեղինակութի՞ւն : Ուրեմն այդ դիտողութեան կէտը ազատ չէ , այլ ստրուկ է : Դիտողութեան կէտը ոչ այլ ինչ է , եթէ ոչ իմացութիւն եւ ճաշակ , որ կենդանի մարդու ընածին յատկութիւնքն են , ասել է ժամանակի եւ քաղաքակրթութեան արդիւնք : Բայց եթէ այդ ժամանակը միանգամայն մերժէ այն , ինչ որ նախնիքը առանց կշռելու ու չափելու ընդունել էին , եւ դորա փոխանակ նոր սկզբունքների վերայ ստեղծէ մի ուրիշ , ո՛չ ապաքէն դա յայտնի ապացոյց որ նա հերքումէ եւ էլ չէ ընդունում երբեմն պատելի գաղափարի գեղեցկութիւնը ու պիտանութիւն :

Ի՛նչ օգուտ ժամանակակից մարդուն Միքէլ-Սճէլօյի միտած եւ սառն արձանների երկնային ,

ղեցկութիւնից, երբ նա կարօտութիւն է քաշուած իրական կենդանի կնոջ, չասենք այնպիսի չքնադադեղ կնոջ, բայց կենդանի կնոջ եւ հետեւարար համաձայն իր ընկերական եւ Ֆիզիօլօգիկական պահանջմունքներին : Մարդկային բնութիւնը չի հրաժարվի ամենատղեղ կնոջից անգամ, եթէ գեղեցկագոյնը չէ գտնուած, պատճառ բերելով թէ Վատիկանի արձանները անհամեմատ գեղեցիկ եւ չքնադեն իր ընտրածից : Ո՛չ ապաքէն ապուշ կը կոչէինք այն մարդուն, որ, հանդամանքներից ստիպված լինելով պսակվիլ, հրաժարվէր պսակից այն պատճառով, որ իր հարսնացուն նման չէ Բելվեդերեան Վեներային : Ինչ կամենաք ասէք, այս մեծ յիմարութիւն է :

Բայց ես անա լարեցի իմ թոյլ թելը եւ չափը կորուսի, մոռանալով որ քեզ նամակ եմ գրում, եւ ոչ թէ շարադրութիւն :

Ողջ եղեր եւ նամակդ անպակաս արա ՄԻՔԱՅԷԼ :»

\* \* \*

Միքայէլի առ հարազատն ուղղած երկրորդ նամակն՝ 14 Ապրիլի, 1863 թուականը կը կրէ, եւ կ'արժէ անփոփոխ տառագրել աստ՝ ի վերծանութիւն Աշխարհաբառեան բանասէրներուն եւ գրամարտիկոսներուն :

Սոյն նամակն՝ գրեթէ նախընթացին ամբողջացուցիչ մասը կը կազմէ, եւ Միքայէլի առաջադրած Աշխարհաբառի Քերականութեան վերայ կատարեալ ծանօթութիւններ կուտայ :

### Սիրելի Եղբայր

. . . . . Ես  
մեծ ուրախութեամբ կը կարդամ մի օր քո ակնարկած յօդուածները Կոռնիկի մէջ, այդ բաները ինձ շատ հարկաւոր են . բայց այժմ խօսենք հանգուցեալ Ախվերդովի կարծիքի մասին, թէ «Տարօնոյ գաւառներում առաւել, քան թէ ուր եւ իցէ, մնացել են լեզուի գեղեցկագոյն ոճերը» :

Ես շատ յարգումեմ մեր հայրենակցի գիտութիւնը եւ տաղանդը, բայց այսու ամենայնիւ ես գնումեմ բոլորովին ուրիշ ճանապարհով :

Նա խորհուրդ է տալիս ընդունել Տարօնոյ բարբառը դրականապէս, իսկ մենք ընդունումենք դրան համեմատութեամբ . պատճառ որ ընդհանուր ստրկութիւնը դրան կը բերէ մեզ սնվախճան հակասութեանց : Ազգը թողաւ հին լեզուն, մտքերի բացաղբութեանց հին ձեւը, եւ սկսաւ գործածել նոր, վայրենի եւ անմշակ ձեւը ոչ այն պատճառով, որ առաջինը վատթար կամ ցածագոյն էր նորից, կամ ընդ հակառակն, որ նորը լաւագոյն կամ գեղեցկագոյն է հինից, այլ այն պատճառով, որ հնացած ձեւերը էլ չէին համապատասխանում նորա մտքերի կազմութեան : Մի եւ նոյն պատմաբանական պատճառը, որ ստիպեց նորան թողուլ հին ձեւը, կըստիպէ նորան չհնազանդիլ ընդհանրապէս մի որ եւ իցէ բարբառի ձեւերին, եւս առաւել կը ստիպվախչել, յօգուտ յառաջագէմ նոր լեզուին, այ բարբառից, որի մէջ հարազատութեամբ պահվա են հին լեզուի ձեւերը : Ազգը թողաւ հին, մշակվա եւ բաւականին կոկ լեզուն, հարկից ստիպված, ըս

որում այդ լեզուն էլ իր առաջվայ ձեւով անհասկանալի էր նորան, ուրեմն ո՞ր լօգիկային հետեւելով մենք պէտք է գիմենք այն բարբառին, որի մէջ առատութեամբ գտանվում են հին ձեւեր: Նոր լեզուն իսպառ կորցնում է իր խորհուրդը, երբ որ ուրանում են նորա անկախութիւնը: Ես ինքս առաջ քիչ թէ շատ հետեւում էի նոյն ուղղութեան, որ այժմ գովաբանվում է կոունկի մէջ, բայց իմ մէջ առաջացաւ յեղաշրջութիւն եւ այժմ բացվեցան: Իմ համար այժմ փոյթ չէ թէ այս կամ այն բարբառով աւելի գեղեցիկ են խօսում, այսինքն աւելի մօտ հին ձեւերին. ես ուրիշ բան եմ վիստոտ. ո՞ր բարբառի մէջ շատ են մշակված կենդանի ձեւերը նոր լեզուի: Հին ձեւերի համար, որ (ինչպէս հաւատացնում են մեզ) գործ են անում Տարօնի բարբառի մէջ, ես հարկաւորութիւն չունիմ դիմելու Տարօնոյ բարբառին. ես կարող եմ գտնել այդ բաները Երդ. եւ յետագայ դարերի մատենագրերի շարդրութեանց մէջ, բայց եթէ կան դորա մէջ նոր ձեւեր, ժամանակի ձեռքով մշակված, մեր ներկայ հարկաւորութեանց համաձայն, ապա ուրեմն շնորհեցէք մեզ:

Լեզուն մի որ եւ իցէ վարդապետութիւն չէ. ամենավատթար վարդապետութիւնը կարելի է տարածել, եւ նա, նայելով իր յատկութեան, կը ճարէ այստեղ ու այնտեղ իրեն հետեւողներ, շատ կամ քիչ: Բայց լեզուն վարդապետութիւն չէ, կարելի չէ լեզուն քարոզել. ուզես ան բոլոր ազգը եւ նրստեցուր աշակերտական նստարանների վերայ, որ անկարելի բան է, դարձեալ աշխատանքդ անօգուտ

կը լինի : Այս մի շատ քնքոյ ինզիր է : Լեզուն խորհրդածութիւն չէ որ շարադրվի , լեզուն օրէնք չէ որ հրամայվի : Մի որ եւ իցէ մաքի յայտարար ամենագեղեցիկ ձեւը անգամ որ եւ է գաւառի , պէտքէ մտցնենք լեզուի մէջ ոչ թէ ստիպողական կամ պաշտօնական կերպով , այլ գաղտագողի , որպէս մաքսանենգութիւն , որպէս զի պատճառ չլինի յետաշրջութեան : Ամենայն չրջան ունի իր բնաւորութիւնը եւ կերպարանքը . նոյն բնաւորութիւնը եւ նոյն կերպարանքը պէտքէ բնականաբար ունենայ եւ նորա լեզուն : Մեր հին լեզուի մէջ ասում ենք « գան ըմպել » , իսկ նորի մէջ գանը չէ խմվում , այլ ուտվումէ . ասում ենք ծեծ ուտել եւ ոչ թէ խմել . հին լեզուի մէջ ոչ մի տեղ կարելի չէ գտնել այդպիսի ոճ :

Գաւառական բարբառները կարող են օգնել ընդհանուր լեզուին առանձին ինքնուրոյնաբար մշակված բառերով եւ ասացուածներով , բայց միայն այնպիսիներով , որ չկան միւս բարբառների մէջ , կամ եթէ մինը միւսից գերազանց է : Ընդհանուր պակասութեան կարօտութիւնը փոխադարձաբար լցուցանելով միայն հնարաւոր է նոր լեզուի մշակութիւնը , իսկ եթէ ամբողջապէս առնունք մի որ եւ իցէ գաւառական լեզու , որքան էլ որ դա լաւ լինի , այսու ամենայնիւ կարող չէ արմատ ձգել օտար հողի վրայ , որովհետեւ դա մի ուրիշ գաւառի ծնունդ եւ սեփականութիւն է : Ամենայն փորձ որ եւ է բարբառի կողմից միւս բոլոր բարբառների համար դրոշակ բարձրացնել « այսպէս խօսի՛ր » վերնագրով , միշտ կը լինի ձայն բարբառոյ յանապատի : Զանա-

զան գաւառների մարդիկը , եթէ կամենումն նոյն լեզուն բարոյական գործիք չինել ազգի համար , պէտք է զո՛ր բերեն իրենց գաւառական անձնատիրութիւնը : Այլապէս կարող չէ մի օրինաւոր բան յառաջանալ :

Փոխադարձ մերժումն մի քանի գաւառական վերջաւորութեանց կամ մասնիկների , եւ ընդ հակառակն , փոխադարձ ընդունելութիւնը ուսանց , ընդհանուրի օգտի համար , կարողէ հասուցանել ցանկալի կէտին : Ասելը եւս աւելորդ է , որ այդ գործողութիւնը , այսինքն մի քանիսը կտրել ձգելը եւ մի քանիսը պատուաստելը , պէտք է ամենայն զգուշութեամբ եւ կանոնապատշաճ կերպով կատարվի , որպէս զի գործողութիւնից յետոյ մնացած մըրուրը դիւրամարտիլի լինի , այս տեղ ձեւը ու գեղեցկութիւնը երկրորդական բաներ են : Տարակոյս չկայ , որ ազգը կարող չի լինիլ խօսել ընդհանուր լեզուով . կենդանի խօսքը իւրաքանչիւր դաւառի ժողովրդի բերնում ունի իր կապրիղները եւ հաճոյքը : Բայց լեզուի մշակութեան առաջին խնդիրը այն պէտքէ լինի , որ խնամք տարվի այդ լեզուն բարոյական դիւրմբանելի գործիք անել եւ փոքր ի շատէ ու չիմ գաւառարնակի համար մատչելի , եւ այդպէս գիտութեանց համար դիւրաւ անցանելու ճանապարհ բանալ , առանց որին լուսաւորութիւնը եւ ազատութիւնը աներեւակայելի է : Դորան ընդհանուր խօսակցական լեզու անելու համար , ոչ թէ մեր մէջ , այլ հազար անգամ մեզանից զօրաւոր ազգերի մէջ անգամ , ամենեւին հնար չկայ , չնայելով որ համալսարաններ , ձեւարաններ , զանազան ուսումնարան-

ներ եւ բազմաթիւ օրագիրներ ունին : Ինձ հարկաւոր չէ , որ հետս խօսողը այնպէս խօսի , ինչպէս ես եմ խօսում . բաւական է եթէ նա ինձ հասկանայ . հասկացողութիւնը առաջին քայլն է , ինչ որ ներկայ սերունդը հասկանայ , այն գալոց սերունդից ունելիքներով կարելի չի լինիլ խելի :

Այս իմ բոլոր ասածներից պարզ երեւումէ , թէ ես որպիսի ուղղութեան հետեւումեմ : Ես ամենեւին երաշխաւոր լինել կարող չեմ , թէ կը պատասխանեմ հարցուածին այնպէս կամ կը կատարեմ այդ գործը այնպէս , որ կարելի լինէր ասել *satis est* կամ *ecce hommo* . Ինձ օտար է այդպիսի մանր անձնասիրութիւնը : Իմ անձնասիրութիւնը բաւականացած կը լինի , եթէ ես կարողանամ իրագործել այն , ինչ որ զօրութիւնս կը ներէ եւ ինչ որ կարող եմ : Աստուծու փառք , եթէ ճարեմ որքան եւ իցէ համազգացութիւն ոչ թէ զէպի իմ վաստակը , այլ զէպի այդ ուղղութիւնը . եթէ ես կարողանամ համոզել այդ ուղղութեան կարեւորութեան մասին , այդքանը շատ բաւական է իմ համար : Ես , իբրեւ առանձին անհատ , կարողեմ մասնաւոր բաներում մեծ սխալներ անել . թող նկատողները ուղղեն . ներկայ հանգամանքների մէջ եւ մեր ունեցած միջոցներով կարելի չէ պահանջել , որ պատկերի բոլոր մասերը առանձին առած գեղեցիկ լինին . ես ճիգն եմ թափում այն վախճանին , որ դուքա ամենքը իրենց տեղերում լինին եւ բնական կարգով դասաւորված : Գեղեցկութեան , երեսի գծագրութեան մասին պէտքէ հոգայ ժամանակը , որովհետեւ չլեզուն խորհրդածութիւն չէ , որ շարագրվի , որովհետեւ լեզուն օրէնք

չէ, որ հրամայովի, ինչպէս որ ասացի վերեւում :  
 Թէ եւ ես տակաւին մինչեւ բայերն եմ հասել ,  
 բայց առաջուց կարող եմ առել , որ լծորգութիւնը  
 կը սակաւանայ , իսկ խոնարհումնքը եւ ժամանակ  
 ները կ'աւելանան , գրաբառի նկատմամբ . փորձի  
 համար ես խոնարհեցի մի բայ եւ ուրախութեամբ  
 տեսայ որ ժամանակները եւ խոնարհումը առաւել  
 ճիշդ եւ ուղիղ են . քան թէ հին լեզուի մէջ : Սա-  
 կայն առ այժմ այսքանս այդ մասին բաւական է » :

ՄԻՔԱՅԷԼ

Միքայէլ՝ ամրոցին մէջ գողցես իւր գրական  
 տքնութիւնքը աւելի բազմապատկած էր :

Գրած էր նաեւ մի նոր տեսակ կարեւոր հեղի-  
 նակութիւն , որոյ մասին առ եղբայրն կը գրեր Մի-  
 քայէլ՝ այս տողերով .

« Ես պատրաստումեմ նաեւ նիւթեր վասն նե-  
 րածութեան մի մեծ գործի՝ Ֆիզիկա - Ֆիլոզօֆիա-  
 կան - պատմաբանական - աշխարհագրական , որինման  
 բան դեռ եւս չէ եղած . ես այս գործի մէջ Բե-  
 օքլին եմ պարտական , նորանից ուսայ : Բայց այդ  
 նիւթերը դեռ եւս ցրված են , պատճառ , ես ա-  
 ռանձին դրութեանց վրայ առանց կարգի եմ գրում :  
 Այդ կտորները ես չեմ կարող այս տեղ եւ անկարելի  
 է միաւորել յառաջ քան գործիս վերջանալը . . . »

. . . . . խնդրած գրերս  
 շուտով ճարիր եւ ուղարկիր . . . . . » :

ՄԻՔԱՅԷԼ



Այս եւ ասոր նման ծանր աշխատութիւններ Միքայէլի կեանքը նիւթապէս աւելի դառնացուցին :

Ապրած միջավայրին կլիմայն արդէն տագնապեցուցիչ էր : Կերցաւի անողոք հիւանդութիւնը աւելի կը յառաջադիմէր եւ կը տառապեցնէր գրագէտը ; որոյ մարմինը՝ արդէն տուարակ մը ոսկոր մնացած էր :

Զգաց Միքայէլ՝ անխուսափելի մտակայ վախճանը ; մանաւանդ թէ՛ զինքը դարմանող բժիշկներն ալ չէին ծածկած իրմէն, եւ խանդավառութիւնը դամ քան զգամ կը պակսէին : Ուստի, տեղափոխութեան եւ օգափոխութեան համար՝ խնդրագիր ուղղեց առ Կառավարութիւնն, յատկապէս նշանակելով որ՝ թոյլատրուի իրեն ծննդավայրին մօտ՝ մեղմ կլիմայ ունեցող երկիր մը փոխադրուիլ :

1865 ին վերջերը երբ պիտի մեկնէր Բեստրայուրկէն, տեղւոյն երեւելի բժիշկները խորհուրդ ըրին քանի մը ամիս եւս անդ մնալ՝ արդէն բարակացաւէն սաստիկ տկարացեալ մարմինը քիչ մը կազդուրելու համար : Տարաբաղդաբար, բժշկաց ջանքերն անօգուտ էին : Անդարմանելի էր հիւանդութիւնը : Մօտալուտ էր վտանգը :

Կոնծել չէր գիտէր, մանաւանդ սրտին նեղութենէն, Միքայէլ, ծխել շատ կը սիրէր որ աւելի հազ կուտար :

Միքայէլ թէեւ յուսահատ իւր վիճակէն, բայց որոշեց քանի մը ամիս եւս Բեստրայուրկ մնալ եւ տեղւոյն ճարտար բժշկաց խնամատարութեամբը քիչ մը դարմանուիլ եւ ապաքինիլ, եւ յետոյ ուղեւորութիւնը կատարել : Այս պատճառաւ վեց ամիս մնաց ի Բեստրայուրկ : Սակայն ի զո՛ւր : Վերջա-

պէս, շարունակեց առաջադրեալ ճանապարհորդութիւնը, եւ որոշուած՝ Վօլկա գետի վրայ, Ռոտտովի մօտ՝ Սարատովեան կամ Սամարա նահանգին Կամիշին քաղաքը հասաւ հակօդութեան տակ, Դեկտեմբերի 7ին, սաստիկ նեղութիւն կրելով ճանապարհին, օդին եւ եղանակին խստութեան պատճառաւ :

\* . \*

Միքայէլ՝ հազիւ մի շաբաթ շունչ առած եւ հանգիստ ըրած էր նոր ասպնջարան քաղաքին մէջ, եւ ահա՛ իւր բարեկամներէն մէկուն՝ նամակ մը կ'ուղղէ, որ ճշգրտապատուօմ նկարագիրն է իւր օրուան կացութեան :

Այդ պատմական նամակին կարեւոր մասերն աւելորդ չեմք համարիր պատմութեան աւանդել :

Կամիշին  $\frac{15 \text{ Դեկտ.}}{3 \text{ Յունվար}}$

1865 Ք. Տ . . . . .

Ամսիս 7-ին մտայ Կամիշին առաւել մեռած քան թէ կենդանի. ճանապարհին քաշածներս անտանելի էին իմ վիճակում, բայց դարձեալ վերջին ուժերս եւ ոգիներս գործ դնելով դիմացանք. Հասայ այս տեղ, հազիւ մի ընակարան գտայ, եւ 4 օր պառկած էի ջերմով բռնված՝ մինչեւ ստիպվեցայ հրաւիրել տեղւոյս բժիշկներէից մինը եւ խնդրել որ տայ ինձ քինա եւ այլ եւայլն. ընդունեցի, եւ այս 2-3 օրն էլ ասն պիտանի բաները ճարելու աշխատելով ահա

այսօր առաջին նամակը գրումեմ Ձեզ եւ . . . . . Այս քաղաքի մասին լաւ բան չունիմ ասելիք, անպիտան մի տեղ է եւ ձմեռը բոլորովին մեռած. ամառը, ասումեն, մի կենդանութիւն փայլումէ անդադար շոգենաւների եւ անցորդների յաճախութեան պատճառով. բայց ես դորանից էլ օգուտ չպիտի քաղեմ. պատճառ, ապրիլի 15ին թէ միայն մնացի կենդանի կերթամ քաղաքից դուրս մի հովտի մէջ ուր շատ ծառաստանք կան եւ ազբիւրներ. եւ ուր բժիշկ Նայդենեվը կումիս է խմացնում տկարներին. ուրեմն մինչեւ սեպտեմբեր գրեթէ ես կը մնամ այնտեղ. ինչ կըլլայ եղեր: Ինձանից շատ նամակ մի պահանջեցէք. գիտէ Աստուած որ չունիմ ուժ եւ զօրութիւն: Այս տողերը գրումեմ, բայց կտրծքս եւ թիկունքս ցաւից խեղդումեն. երբ ժի փոքր առողջանամ, պարտւ, պութիւնից այնքան գրիմ որ դուք էլ զզուիք, բայց առ այժմ ներեցէք:»

Սոյն նամակէն զատ, վերջին նամակ մ'ալ գրած է Միքայէլ:

Ահաւասիկ մի քանի տողերն այդ կարի սրտաչարժ նամակին.

«Այս տեղ բժիշկ Նայտենեվը, որ կումիսով պարապումէր ամառները մասնաւոր կերպով, զրժբազդաբար տեղափոխվումէ գէպի Սարատով. ուստի ինձ հարկ եղաւ ամսոյս 15ից վաղօրօք խնդրի գրառ Գաւառապետն որ հրաման հանէ կամ ինքը սա Մայիսի 1-ից մինչեւ Օգոստ. 15 երթալ Սամար գաւառը, Սամարից 60 վերատ հեռի, կումիս խմելութեւ մինչեւ Մայիսի 1ը հասնելս Աստուած գիտ!»

այս ոչ թէ լոկ իմ խօսքն է, այլ այս տեղի եղած-  
ներից ամենալաւ Վինօգրադով բժիշկը ինձ պարզա-  
պէս ասաց եւ ես օրէ օր մօտենումեմ գերեզմանին :

Հաւատացէք այնպէս վատած եմ այժմ, որ ինքս  
ինձ հայելիի մէջ տեսնել վախենումեմ, վկայ է Աս-  
տուած . ջերմը ամենայն օր հոգիս է հանում, քրր-  
տինքը, հազը եւ թուքը թիւ չունի, աւելցուր սո-  
ցա վերայ իմ անօգնական միայնութիւնը . մի կու-  
խարկա (կերակուր եփող աղախին) ունիմ անուսով  
միայն չչի կաշա գիտէ որ ես չեմ ուտում, այլ բան  
բնաւ, ուրիշ բան էլ չկայ : Ուր թողում բարոյա-  
կան անախորժութիւնքը ամենայն քայլափոխ . . .  
բժիշկը ինձ պատուիրումէ սաստիկ խաղաղութիւն  
հոգւոյ, բայց թող՞ումնն խաղաղ . մի չնչին խաղա-  
ղութիւն ինչերով է ձեռք գալիս . ինչ օգուտ, գրել  
չեմ կարող, խոհմութեամբ հասկացիք :

ՄԻՔԱՅԷԼ .

Միքայէլ Ղազարեան՝ Կամիշլինի մէջ չորս ամիս  
չարաչար հիւանդութեամբ հիւծելէ եւ տառապելէ  
ետոյ, 36 տարեկան երիտասարդական թարմ հա-  
սակին մէջ կնքեց մահկանացուն, 1866 Մարտի  
վերջին օրը, կտակելով որ իւր մարմինն՝ անպատճառ  
իւր ծննդավայրն եղող Նոր-Նախիջևանայ մէջ  
թաղուի :

Երբ մահուան գոյժը առին : երեք եղբայրները,  
Ապրիլ 13ին յատուկ շոգենաւով փոխադրեցին Մի-  
քայէլի մարմինը Տօն գետի ափունքը, ուր Նոր-

Նախիջեւանէն հոծ բազմութիւն ակնկառոյց պատրաստ կապասէր :

Քաղաքին ամբողջ եկեղեցականաց ներկայութեամբ ատաջնորդուեցաւ Միքայէլի դազադն մեծ հանդիսիւ եւ յուղարկաւոր թափորիւ տեղւոյն Ս. Լուսաւորչայ Մայր Եկեղեցին :

Հետեւեալ օրը՝ յատուկ Ս. Պատարագ մատուցուեցաւ , ի ներկայութեան նմանը չտեսնուած երկսեռ բազմութեան :

Պատարագէն յետոյ ձերունազարդ Մկրտիչ Վարդապետը՝ սրտաշարժ դամբանական մը արտասանեց , շեշտելով հանգուցելոյն անզուգական հանգամանքները եւ բարեմոյն ձիրքերը :

Յետոյ , եկեղեցականք շրջապատելով Միքայէլի մարմինը , հոգեհանգստեան սրտաշարժ արարողութիւնը կատարեցին , յորմէ վերջը՝ թաղծեալ սրաիւ բժիշկ Յովհաննէս Պերպերեանց իմաստալից ճառ մը կարդաց , եւ ներկայից աչքերէն դառն արցունքներ քամեց :

Ապա , հանգուցելոյն մարմինը՝ եկեղեցիէն մեծահանդէս դուրս հանուելով ժողովրդական հոծ թափորով եւ եկեղեցականաց ատաջնորդութեամբ՝ մինչեւ քաղաքին ծայրը տարուեցաւ , ուր դազադակիր կառքի մը վրայ դրուելով՝ ի խնդրոյ ժողովրդեան , Ս. Սաչի Վանքը փոխադրուեցաւ , եւ նոյն Մենաստանի դրան առջեւ ձախ կողմը՝ հանդէպ Ալամդարեանց Վարդապետի գերեզմանին — ամփոփուեցաւ Միքայէլի մարմինը :

Նոր-Նախիջեւանու ժողովուրդն՝ իրաւունք ունէր այս մեծ պատիւն ընելու այն մեծանուն երիտասարդին , որ Հայ մանկուոյն կրթութեան սիրոյն համար՝ իւր առողջութիւնը խախտեց , եւ մինչեւ Գանգէսի ակունքէն ձեռք բերաւ Մասէհեան հրիտակին վտանգեալ գումարը , որոյ ընդ փոյթ գանձման համար նախազդարար եղած էր՝ Պասգիւղի Ս. Ստեփաննոս Եկեղեցւոյն բազմարգիւն Աւագերէց՝ լուսացեալ Տէր Յակոբ Քահանայն , պապն՝ Արտաշէս եւ Յովհաննէս Արծրունի հարազատաց :

Եւ այս առթիւ իրաւամբ կը դիտէ Միքայէլ Տէր-Գրիգորեանց՝ Պայտարեանցի համար թէ , լինչ որ կենդանութեան ժամանակ չկարողացան կամ միջոց չունեցան հատուցանելու նորան , հատուցին մեռնելուց յետոյ , փառաւորապէս եւ մեծ հանդիսիւ թաղելով նորա մարմինը :

Եւ Նոր-Նախիջեւանայ ժողովուրդն՝ այնչափ մեռնողին համակիր էր , որ յուղարկաւորութեան ժամանակ՝ քանիցս դազաղը կեցնելով , երեսը բանալ տուին , եւ ջերմագին արտասոււթոր համբոյրներ դրոշմեցին : Շատերն՝ կ'երկուանային թէ Միքայէլ մեռած է . այնչափ խօսուն էր նոյն խկ հանգուցելոյն դազաղը . . . :

Միքայէլի մարմինը՝ հողի մէջ դրուելէ եւ թաղամանական կարգը կատարուելէ վերջը , ժողովրդեան կողմանէ մեծ հոգեճաշ պատրաստուած էր , որոյ մասնակցեցան ոչ միայն բոլոր եկեղեցականաց դասը , այլ ընդհանուր յուղարկաւորները :

Սոյն կենսագրութիւնը ծրագրած ժամանակս, առ աչօք ունէի Միքայէլ Միանսարեանցի եւ Միքայէլ Տէր-Գրիգորեանցի գրած համառօտ կենսագրութիւնները :

Հանգուցեալ Միքայէլի մահուան պարագայներն եւ յուզարկաւորութեան հանդիսին նկարագիրն՝ ժամանակին գրուած է երկու ընտիր յօդուածներով Մ. Մ. ստորագրութեամբ Զիրինկիրեան Գրիգոր էֆէնտիի հրատարակած Ծաղիկ հանդիսին մէջ :

Գրուած է նաեւ 1866ի Մանգումէնբրուն եւ Մասիսի մէջ :

Նոյնպէս, Սըվաճեանի Մեղուին 1873-1874 տարիներու շրջանաց մէջ՝ Միքայէլի նամակները, կենսագրական մատերն եւայլն կարգացած լինելա՝ ընդ աղօտ կը յիշեմ :

Մայրաքաղաքիս Լէվանդ-Հէրայթին մէջ ալ՝ պաշտօնական ազրիւրէ հրատարակութիւններ կային 1867ին, Միքայէլի կենսագրական գծերն արագրելու նկրտող :

Ասոնցմէ զատ, անդրասահման ազգային լրագիրներէն՝ 1866, թիւ 19, Մայիսի 21ին հրատարակուած Տփղիսու Մեղու լրագրոյն մէջ մանրամասնարար գրուած է Միքայէլի մահացուցակն եւ յուզարկաւորութեան նկարագիրը :

\*  
\*  
\*

Գալով Միքայէլի թողած յիշատակներուն :

Միքայէլ՝ բաց ի յիշուած հեղինակութիւններէն, կը թողու, Էօփէն-Սիւի գրած Թափառական Հը-

բէայի(1) գեղեցիկ թարգմանութիւնը, որոյ առաջին մասն մեծադիր կազմով տպուած է տաղանդաւոր թարգմանչին իմաստալից եւ երկարածիդ յառաջաբանովը :

Ունի Շերամասածութիւն, Եւրոպական անուանի բնապատմեբուն հետեւած, եւ տեղական դրութեան յարմարացած :

Սոյն երկասիրութեան համար՝ Միքայէլ Տէր-Գրիգորեանց կը ծանօթագրէ .

« Այս գործը, որ այժմ մեր մօտն է, չէ պարզագրած եւ միանգամայն վերջացուցած, ուստի մենք պարզագրեցինք եւ մտադիր ենք որքան կարող ենք պակասը լրացուցանել, օգուտ քաղելով նոյն հեղինակների գրուածներէց, որոնց համեմատ աշխատասիրել էր հանգուցեալը : Երբ յաջողի մեզ տպել դրան, մենք կը նշանակենք որն է մեր աւելցուցածը : »

Հանգուցեալ Միքայէլ՝ ունի ծաղրերգութիւն մը որ հրատարակուած է Ի.Տփղիս, Փոքճ գրական հանդիսին մէջ :

Սոյն ծաղրերգութիւնը՝ որչափ կը յիշեմ, Սասանայ կամ Դժոխք վերնագրի տակ՝ ծաղրուած են գրաբառամոլութիւնը եւ դաւանափոխութիւնը, եւ այլն :

---

(1) Թափառական-Հրէայն՝ ի մեզ Թարգմանելու ձեռնարկած են նախ՝ Գարոնայր՝ Սեփան Ոսկան, Խաչատուր Ոսկան, եւ Յակոբ Ոսկան, յետոյ՝ Կարապետ Էֆէնսի Փանոսեան՝ Պրքարարաւ, եւ ի վերջոյ, Կարապետ Էֆէնսի Իւրիճեան :

Ծրանսերէնի մէջ Գայտրեանցի մեծ յաջողակութիւնը համբաւեալ լինելուն, ըրած Թարգմանութեանը վրայ խօսիլն աւելորդ կը համարիմք :



Պայտարեանց՝ Սօս եւ Վարդիթեր վիպասանութեան վրայ ընդարձակ ձեռագիր քննադատութիւն մը պատրաստած է :

Նոյնպէս , հին լեզուով գրած զանազան բանաստեղծութիւնք՝ Աղցմիք անունով , որոց մէջ ուշագրութեան արժանի կը համարի Տէր-Գրիգորեանց՝ « Արկածք Նախահօրն » Պօէման :

Կիրակոս Գանձակեցի վերնագրով մի յօդուած ունի , որու համար ալ կը գրէ Տէր-Գրիգորեանց թէ՛ « Մենք չենք կարգացել եւ չգիտենք ինչ բան է : Այսքանը գիտենք , որ դա մի ուսումնական հայի մօտ անկորուստ պահուած է : »

Պայտարեանցին ամենէն աւելի տարածուած եւ ժողովրդականութիւն վաստկած երկն՝ ընկերաբանական մէկ գործն է , որ իւր անտեսագիտական տեսակէտովը ժամանակին գնահատուած եւ գլուխ-գործոցը համարուած է :

Թողու՛մք զանազան մանր մունր յօդուածները , աշխարհաբար գրուած ոտանաւորները եւ մի քանի նամակներն եւ ձեռագիր աշխատութիւնները , եւ այն ամեն թղթերը՝ որոց համար Տէր-Գրիգորեանց կը հռոպէ թէ՛

« Միւս շատ թղթերի հետ միասին բոլորովին կորել են , գոնէ նորա եղբօր մօտ մենք չգտանք այդպիսի բաներ : 1863 թ. Ապրիլի 8ին Պետերբուրգից գրած նամակը յայտնապէս ցոյց է տալիս , որ այդ թուղթերը մինչեւ բերդից դուրս գալը նորա մօտն էին եւ մեռնելուց յետոյ անհետացել են : »

Եւ սակայն Պայտարեանց՝ իբրեւ բանաստեղծ՝ ձգած է մեզ՝ հոգեշունչ երգեր , տպեալ եւ սնտիպ :

Ո՛չ, ամենուն տրուած չէ՛ Գէորգ-Պալատեցւոյն, Մատթէոս-Դպրին, Զէննէ-Պօզոսին, Ստեփաննոս Նազարեանցին, Պալղազարեան Ղուկասին, Այվազովաքի Գարրիէլ Եպիսկոպոսին, Տէրոյնց Պատուելւոյն, Տօքթոր Շիշմանեանին պէս ծերութեան հասակի մէջ կնքել իրենց մահկանացուն :

Յաւալի է խոտտովանիլ՝ որ մեր երկրին Պլպուլները, մեր գրական մշակներուն կեանքը ընդհանրապէս համառօտ եւ սահմանափակ եղած է :


Մտածութիւնն այնքան չը մաշէր զմարդն, որքան բուն զգացումը, մանաւանդ երբ միացած է նաեւ մտածութեան հետ :

Պայտարեանց կը մտածէր անշուշտ, բայց առաւել էր զգացումը :

Երբ մարմինը կը մաշի, զգացումներն աւելի կը սաստկանան, եւ այս է որ մարդն շուտով կ'իջնոցանէ ի գերեզման :

Պայտարեանց սակաւ ապրեցաւ :

Իւր անմահութիւնն կսկսի գերեզմանէն անդին :



# ՅԱՆԿ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՆՑ

## ՊՐԱԿ Ա.

	<i>երև</i>
Ա. Փեղզ Պասուեի Պալատեցի . . . . .	11
Բ. Մասթու-Դպիր . . . . .	74
Գ. Ջէննէ Պօղոս . . . . .	113
Դ. Յարուփրն Վարդապէ Ալամդարեանց . . . . .	124

## ՊՐԱԿ Բ.

Ե. Մեծ-Հիւնքեարպէյէնցի Քահանայն . . . . .	7
Զ. Յակովբ Շահան-Ջրպէտ . . . . .	33
Է. Տիրացու-Միքայէլ . . . . .	60
Ը. Տ. Երեմիա Քահանայ Երամեան . . . . .	68
Թ. Քանաքեղցի Խաչատուր . . . . .	76
Ժ. Պետրոս Կ. Թնկր . . . . .	91
ԺԱ. Մ. Ղազարեան Պայտարեանց . . . . .	98

ԳՐԱԴԵՐՈՒՄ

**ԳՐԻԳՈՐ ԱՊՈՍՏՈՆՆԻ**

Կարգաթիւ.....